ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) Թիվ-7 (1677) Հուլիս 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Հաղթում է նա, ով գործում է (էջ 1-3)

2- Քաղաքական
Լուսինե Մխիթարյան
Սյունիքը աշխարհաքաղաքական հետաքրքրությունների կիզակետում (էջ 4-9)

3- Աշխարհաքաղաքական
Սարգիս Սարգսյան
Պատրանքներից հրաժարվելու ժամանակը (էջ 10-17)

4- Թարգմանություն
Միխայիլ Ալեքսանդրով
Լեռնային Ղարաբաղի հանձնումը դժոխքի դարպասներ կբացի Ռուսաստանի համար (էջ 18-20)

5- Հայրենի եզերք
Տաթևիկ Աղաջանյան
Արցախ. գոյատևման պայքարը շարունակվում է (էջ 21-24)

6- Հայ դատ
Անի Մելքոնյան
Հայ դատի «Խաչեցյալներին» («Լիզբոնի 5»-ի 40-րդ տարելիցին) (էջ 25-26)

6- Գաղափարական
Արարատ Հակոբյան
Հայոց պետականության գաղափարի հարցը՝ ըստ Ստ. Նազարյանցի «Հայերի կոչումը մարդկության մէջ» հրապարակման (էջ 27-29)

7- Դեմքեր և դեպքեր
Աւօ Գաթրճեան
Հայ «Նեմեսիս»-ը, հետախոյզ առասպելն ու ազգային-պետական գործիչը Հրաչ Փափազեան (էջ 30-34)

Վանիկ Վիրաբյան
Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության կարկառուն դեմքերը. Լևոն Բաշինջաղյան (էջ 35-39)

ՉԱՐԵՆՑՅԱՆ ՀՈՒՇԻ ՄԻ ՊԱՏԱՌԻԿ
Սաքօ Շատախունի
Չարենց բանտում (քաղցր եւ դառն յուշեր) (էջ 40-43)

8- Ընկերական զրույցներ
Վրէժ-Արմէն
Ի՞նչ են մեր ազգային-հոգեւոր հիմնական արժէքները (էջ 44)

Հաղթում է նա, ով գործում է

Տարբեր քաղաքագետներ, գործող և նախկին քաղաքական գործիչներ հաճախ գրում են, թե Նիկոլ Փաշինյանը սխալվեց՝ այս կամ այն քայլն անելով, փորձ չուներ, ձախողեց բանակցությունները և այլն: Մարդիկ, թերևս փորձելով մնալ քաղաքական կոռեկտության սահմաններում, այս ձևով խուսափում են ավելի կոշտ, միաժամանակ դիպուկ գնահատականներ տալ երկրի ղեկավարի գործողություններին: Իրականում տվյալ գործունեության ընթացքին հետևելիս ակնհայտ է դառնում Նիկոլ Փաշինյանի ռազմավարական մոտեցումների և մարտավարական գործողությունների ողջ հետևողականությունն ու տրամաբանական շղթան: Եվ սա վերաբերում է ոչ միայն երկիրը ղեկավարելու ժամանակահատվածում նրա իրականացրած քայլերին, այլև քաղաքական ողջ գործունեությանը: Նա միշտ էլ դեմ է եղել Արցախի անկախության համար պայքարին, իսկ 2008 թվականին Արցախի հարցում զիջողական պլատֆորմով եղել է Լևոն Տեր-Պետրոսյան նախագահի թեկնածուի թիմի անդամ, մշտապես դեմ է եղել արցախցիներին և Հայաստանում նրանց քաղաքական պետական գործունեությանը, դեմ է եղել Հայաստան-Ռուսաստան դաշնակցային հարաբերություններին և գործել է դրանց դեմ, մասնավորապես՝ պայքարելով ռուսական սահմանապահ և մնացած ռազմուժին Հայաստանից դուրս բերելու համար՝ գործակցել է նույն և նմանատիպ ծրագրերով Հայաստանում գործունեություն ծավալած արևմտյան պաշտոնական և առերևույթ անկախ կառույցների հետ: Նիկոլ Փաշինյանը մշտապես ընդդիմադիր գործունեություն է ծավալել հզոր Հայաստանի և Արցախի համար բազմավեկտոր քաղաքականություն իրականացնող ուժերի դեմ և, վերջապես, իր շուրջ խմբված մարդիկ ոչ միայն կրողն են եղել նույն գաղափարների, այլև մաս կազմելով արևմտյան պաշտոնական, սորոսական և այլ նախագծերի, հիշյալ ուղղություններով որոշակի աշխատանքներ են իրականացրել տարիներ շարունակ: Արտաքին, այդ թվում՝ թուրքական ազդեցությամբ, երիտասարդության այս շերտը նախապատրաստվել է որպես այն գունավոր հեղափոխությունների շղթայի մեկ օղակը, որոնք ծավալվեցին արաբական աշխարհից մինչև Միջին Ասիա, մասնատեցին Վրաստանը, գլխավորում են Ուկրաինայի համար կործանարար պատերազմը: Այսօր արդեն շատերի համար է տեսանելի, որ Փաշինյանի արտաքին քաղաքականությունն ուղղված է երկու հիմնական նպատակների՝ վերջնականապես Հայաստանը ձերբազատել Արցախի խնդրից ու արցախցիների ճակատագրից, որից հետո ինքնաբերաբար տարածաշրջանից կհեռանան ռուս խաղաղապահները, իսկ այնուհետև Հայաստանի ղեկավարը կստորագրի մնացած ողջ ռուսական ռազմական ներուժի, մասնավորապես Թուրքիայի հետ Հայաստանի սահմանը վերահսկող ռուսական սահմանապահ ուժերի

հետ եղած պայմանագրային պարտավորությունների չեղարկման մասին փաստաթուղթ: Այսինքն՝ Արևմուտքի թելադրանքով նա պետք է դառնա այն ղեկավարը, որը քաղաքական, իրավական քայլերով Ռուսաստանին պետք է դուրս մղի Հարավային Կովկասից: Եթե ինչ-որ մեկը կարող է մտածել, թե շարադրված դատողությունները Նիկոլին վարկաբեկելու կամ հանրությանը վախեցնելու համար են, խորհուրդ կտամ հիշել երկրի ղեկավարի տարբեր արտահայտություններն այն մասին, թե ՀԱՊԿ-ը մեզ ոչ միայն չի պաշտպանում, այլև իր ներկայությամբ ավելի մեծ վտանգներ է ստեղծում Հայաստանի համար, Հայաստանը դուրս չի գա ՀԱՊԿ-ից, բայց ՀԱՊԿ-ը կարող է դուրս գալ Հայաստանից, այնպես չէ, որ մեզ զենք առաջարկող ուրիշ պոտենցիալ դաշնակիցներ չկան, բայց նման գործարք հնարավոր չէ, քանի դեռ ՀԱՊԿ-ի և Ռուսաստանի հետ է մեր ռազմական համագործակցությունը և այլն:

Գոյություն ունի տեղի ունեցողը անխուսափելի գործընթաց համարող մտայնություն, ինչը հատուկ է Նիկոլի օրոք քաղաքագետներ դարձած տաքսու վարորդների, տնային տնտեսուհիների, հովիվների, ինչպես և կրթական ցենզ ունեցող «ծակ փիլիսոփաների» որոշակի շերտերին: Ըստ վերջիններիս՝ Ռուսաստանը շարունակում է ամբողջովին իշխել խորհրդային նախկին մետրոպոլիայի տարածքում, ուրեմն և այն, ինչ կատարվում է Հայաստան-Արցախում և նրա շուրջ, տեղի է ունենում Ռուսաստանի գիտությամբ ու պարտադրանքով, անգամ 2020 թվականի պատերազմը և ռուսական ազդեցության ավանդական գոտում թուրքական ազդեցության տարածումը, Ադրբեջանի պոկվելը հավասարակշռության ռուսական բևեռից և ամբողջովին թուրքական ազդեցության տարածքի վերածվելը: Ռուսաստանին 200 տարվա իր ազդեցության գոտուց դուրս մղելու ադրբեջանաթուրքական և արևմտյան փորձերը տեղի են ունենում հենց ռուսների ցանկությամբ, եթե

ոչ ռուս-թուրքական գործարքի համաձայն: Սրանից էլ բխում է, որ իր արարքների համար ոչ թե Նիկոլն է մեղավոր, այլ ռուսները և այն, ինչ տեղի է ունենում, անհնար է կասեցնել, որովհետև փոքր Հայաստանը ի զորու չէ խափանել ռուսների ծրագրերը: Իսկ այն, որ վերջին տասնամյակներին ռուսական ազդեցության դաշտից պոկվեցին և արևմտյան գերիշխանության ներքո հայտնվեցին Վրաստանն ու Մոլդովան, միջինասիական թուրքացեղ հանրապետությունները ակտիվորեն կապերը սերտացնում են Արևմուտքի, Թուրքիայի, Չինաստանի և այլոց հետ՝ գրեթե ուղիղ համեմատությամբ հեռանալով ռուսական ազդեցության դաշտից, այն, որ խորհրդային նախկին Մերձբալթյան հանրապետությունները արևմտյան բևեռում կոշտ հակառուսական դիրքերում են ոչ միայն քաղաքականորեն, այլև ՆԱՏՕ-ի ռազմական դաշինքին անդամակցությամբ, որ պրոթուրքական Ադրբեջանն այսօր արտաքնապես ատամներ է ցույց տալիս, իսկ ներքնապես ամբողջովին հակառուսական, հակահայկական և հակաիրանյան հիստերիայի մեջ է, և փաստացի նախկին խորհրդային հանրապետություններից միայն Բելոռուսն է, որ գունավոր հեղափոխության ավերիչ հետևանքներից վախեցած՝ վերջին տարիներին ամբողջովին վերադարձավ Ռուսաստանի «ուղեծիր», սա չեն ցանկանում տեսնել կամ պետական քարոզչության ծխածածկույթի ետևում չեն նկատում մեր այն տնային տնտեսուհիները, տաքսու վարորդները, հովիվները, կրթական ցենզ ունեցողների, ինչպես և պաշտոնեության ու գործարարների այն շերտերը, որոնք վերջին հինգ տարիներին եղան «թավշյա» իշխանության հենարանը ու այսօր վերջիններիս գլխավորությամբ Արցախն ու Հայաստանը առաջնորդում են դեպի վերջնական կործանում:

Հասնելով այստեղ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր ներկա ողբերգությունների հիմքում հայաստանյան հասարակության մտային, գաղափարական ու բարոյական անկումն է, ինչը սրընթաց կերպով տեղի ունեցավ անկախության երեք տասնամյակների ընթացքում: Նիկոլ Փաշինյանը բարձրացավ այդ ֆոնին և նվաճած բարձրության վրա կարող է մնալ միայն հասարակության անկման և անկման շարունակականության պայմաններում: Հասարակության արթնացումը, ազգային-քաղաքական մտքի վերազարթոնքն ու զարգացումը կանխորոշելու են Նիկոլի իշխանության խեղդամահ լինելը իր «ծաղկեցրած» հակազգայնության, տգիտության և անբարոյականության ճահճում: Այդ պատճառով էլ տվյալ երևույթների դեմ պայքարը Նիկոլի ներքաղաքական գործունեության առանցքն է: Մյուս կողմից՝ Նիկոլի նկատմամբ աճում է արտաքին ճնշումը՝ արագացնելու իր հակահայ պարտականությունների կատարումը: Արևմուտքի մոտ աճում է այն համոզմունքը, որ ուկրաինական ճակատում Ռուսաստանին հաղթել չի կարող: 2022 թ. սկզբին ՀԱՊԿ-ը կասեցրեց Ղազախստանում արևմտաթուրքական հեղաշրջման փորձը, և այժմ զգալի է Անդրկովկասի

թևում Ռուսաստանի նկատմամբ ռևանշի հասնելու արևմուտքի ձգտումը: Այս երևույթը վերջերս ակնառու դարձավ Վրաստանում, որտեղ օտարերկրյա ազդեցության գործակալների գործունեության թափանցիկությունն ապահովելուն ուղղված միանգամայն տրամաբանական օրենքի ընդունման նախաձեռնությունը հանդիպեց Արևմուտքի կատաղի հակազդեցությանը, երկրի ներսում հինգերորդ շարասյունը այնպիսի զանգվածային ալեկոծություն բարձրացրեց, որ ազգային ուժերը նոր գունավոր հեղափոխությունից խուսափելու նպատակով հրաժարվեցին իրենց նախաձեռնությունից: Վրաստանը լավ օրինակ է՝ ինչպես ավելի քան մեկ տասնամյակ իշխանությունը պահող ազգային ուժերը փորձում են երկիրը դուրս բերել ադրբեջանաթուրքական և արևմտյան ազդեցությունից, սակայն վերջինները դա թույլ չեն տալիս (իհարկե, ի տարբերություն Հայաստանի, Վրաստանում թուրք-արևմտյան կամակատարների իշխանությանը փոխարինած ուժերը վարում են ազգային շահերից բխող, հավասարակշռված քաղաքականություն. չնայած մեծ ճնշմանը՝ նրանք նաև չմիացան հակաուկրաինական կոալիցիային):

Հայաստանի նկատմամբ նման ակնառու ճնշում չի զգացվում շատ պարզ պատճառով՝ մեր երկրի իշխանությունները հպատակի հնազանդությամբ կատարում են Արևմուտքի, ինչպես և, առաջին հերթին, ադրբեջանցիների ու թուրքերի թելադրանքը: Փաստ է, որ Հայաստանի իշխանությունները պատրաստակամ են կատարելու վերջիններիս ոչ միայն հողային և կոմունիկացիոն բնույթի պահանջները, այլև սկսել են պատմական ու ազգային հիմնարար արժեքներից հրաժարվելու գործընթաց, իսկ երկիր գնում-գալիս են արևմտյան անվտանգության ծառայությունների պատասխանատուները, կասկածելի օտարերկրացիներ վխտում են Հայաստանի սահմանային գոտիներում, այստեղից պետական բարձրագույն պաշտոնյաներ այցելում են նրանց կենտրոնները, և ակնհայտորեն Հայաստանը գտնվում է վերջիններիս աքցանի մեջ: Ինչպես գրում են նաև օտար վերլուծաբանները, Հայաստանին սպառնում է բալկանացումը, այսինքն՝ նախապատրաստում են Հայաստանը վերածելու ծխացող բախման գոտու, և այդ հակամարտության նախերգանքը ակնառու է Արցախի ու Հայաստանի հասցեին հնչող կոշտ սպառնալիքների մեջ: Իհարկե, արտաքին թելադրողների ու շահառուների նպա-

տակը միայն փոքր Հայաստան-Արցախը չէ, այլև Ռուսաստանն ու Իրանը, միջինարևելյան և կենտրոնասիական հսկա տարածաշրջանին տիրելու գերուժերի դարավոր երազանքները:

Այլևս կույրը միայն չի տեսնի, որ Հայաստանի իշխանությունները ձգտում են վերջնականապես հանձնել Արցախն ու Հայաստանից այն տարածքները, որոնց հավակնում է Ադրբեջանը, թուրքադրբեջանական պահանջով բացել Զանգեզուրի թուրանական միջանցքը: Այդ իշխանությունները հույս ունեն, որ եթե թշնամու ուզածները հանձնեն, վերջիններս թույլ կտան, որ իրենք շարունակեն հանգիստ իշխել երկրում: Միաժամանակ Հայաստանի իշխանությունները երկրի անվտանգության երաշխիքները հայցում են արտաքին աշխարհից: Այս ողորմելի պահվածքով նրանք ամեն օր, որպես նշանաբան, թութակի պես կրկնում են ժողովրդավարությանը հավատարիմ լինելու մասին հանկերգը, երբ Արևմուտքը ողջ աշխարհում «թքել է» և՛ ժողովրդավարության վրա, և՛ ժամանակավոր օգտագործման ծառայող խամաճիկ ռեժիմների:

Եվ եթե ցայսօր պարտությունը մինչև վերջ հասցնելու Հայաստանի իշխանությունների ծրագիրը չի հաջողվում իրականացնել, պատճառն այն է, որ առայժմ, առանց իրավիճակը բախման աստիճանի սրելու, այդ ծրագրերը հաջողեցնում է ձախողել Ռուսաստանը: Ռուսաստանն, անշուշտ, այդ բանը և մնացած բաներն անում է՝ ելնելով իր շահերից: Մենք չգիտենք, թե ի վերջո իր ոխերիմ բարեկամների հետ Հայաստանի հաշվին փոխզիջումների գնալու դեպքում ինչ են լինելու Ռուսաստանի նոր զիջումները:

Խոսելով առկա ճակատագրական վիճակը հաղթահարելու մասին՝ պետք է արձանագրենք, որ մոլորություն է ընդդիմության այն պատկերացումը, թե իշխանությունը հնարավոր է փոխել, եթե ողջ ժողովուրդը ոտքի կանգնի: Որևէ շարժման կամ հեղափոխության ժամանակ ոտքի է կանգնում ժողովրդի մի քանի տոկոսը, իսկ հաղթանակն ապահովում է ողջ երկրում հեղափոխականների ստեղծած համաժողովրդական մթնոլորտը: Հայաստանում այսօր գոյություն ունի համընդհանուր ատելության վիճակ, բայց ոչ ըմբոստության մթնոլորտ: Որպեսզի կուտակված դժգոհության էներգիան շարժման մեջ դնի զանգվածներին, թվում է, թե անհրաժեշտ է գլխավոր պայմաններից մեկի առկայությունը՝ ժողովրդի համար ընդունելի առաջնորդի և նրա ծրագրի ի հայտ գալը, որոնց հաղթանակին և երկիրը վերափոխելու կարողությանը ժողովուրդը կհավատա: Առաջնորդի ու ծրագրի առաջնայնության հարց հավանաբար գոյություն չունի, դրանք փոխշաղկապված են իրար, ինչպես հավն ու ձուն: Այդ ծրագիրն ու անձը պետք է ներշնչեն, որ ունակ են փոխելու, ինչպես և փոխարինելու գործող իշխանությանը, քանի որ անկախացման շրջանից սկսած՝ հայ ժողովուրդը ավելի շատ գայթակղվում է մերժման ծրագրով և իշխանափոխության իրատեսական լինելու հեռանկարով: Սրանով հանդերձ, նախորդին փոխելուց հետո նա-

խորդի վերածվելու օրինակներից խուսափելու համար այդպիսի առաջնորդը պետք է ներկայանա ներկայանալի թիմով, ներշնչի, որ մարմնավորում է Արցախի, Հայաստանի և Սփյուռքի հավաքական կամքն ու ամբողջականության գաղափարը, պետք է դառնա համախմբող առանցք Արցախի ազատագրության, Հայաստանի ինքնիշխանության վերականգնման գլխավոր գաղափարների շուրջ: Հայաստանի համապարփակ ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է ոչ թե հայկական անձնագրով, այլ ազգային էությամբ, անկաշառ ու անհավակնոտ իշխանություն: Իհարկե, սա ուտոպիային մոտեցող ցանկություն է, բայց այլ կերպ մեր երկիրը կուլ տվող ճահճից դուրս գալ հնարավոր չէ:

Վլադիմիր Վիսոցկին երգում էր.

«Իսկական ըմբոստները քիչ են.
Ահա և չկան առաջնորդներ»:

Այս մեկը հավանաբար հավի ու ձվի առաջնայնության սկզբունքի հետ կապ չունի: Առանց շարժման և առանց ըմբոստների՝ նաև չեն առանձնանում առաջնորդները: Փաշինյանը Հայաստանը տոտալ կերպով միակուսակցականացնում է, իսկ գալիք ընտրական փորձությունները նախապատրաստվում է հաղթահարել անօրինականությունների ճանապարհով: Նա հրաշալի գիտի, որ իր վզից կախված է պետական դավաճանի մեղադրանքը և, ի դեպ, պատահական չէ, որ զանազան բարձրագույն պաշտոնյաներ վերջերս իրար ետևից կրկնում են Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու հակասահմանադրական դիրքորոշումը՝ սրանով երևի ստանձնելով իրենց շեֆի խոսքի և հանցավոր գործունեության պատասխանատվության մեկ բաժինը:

Այնուամենայնիվ, պետք է խոստովանել, որ մեկ հարցում Նիկոլի վարքագիծը տրամաբանական է՝ հաղթում է նա, ով գործում է և նախաձեռնությունը պահում է իր ձեռքում: ■

Սյունիքը աշխարհաքաղաքական հետաքրքրությունների կիզակետում

Լուսինե Մխիթարյան
Միջազգայնագետ, լրագրող

Արցախյան երկրորդ պատերազմից հետո Թուրքիան և Ադրբեջանը շրջանառության մեջ դրեցին, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» ձևակերպումը, որը լրջագույն մարտահրավեր է հայկական պետականության համար: Ադրբեջանաթուրքական տանդեմն իր ծավալապաշտական ծրագրերն իրականացնում է ինչպես ռազմական ագրեսիայի, հոգեբանական ահաբեկչության միջոցով, այնպես էլ՝ «փափուկ», թեև ոչ պակաս վտանգավոր տարբերակներով, մասնավորապես՝ ժողովրդագրական, իրավաքաղաքական, պատմակեղծարարության և այլն:

«Զանգեզուրի միջանցք» ձևակերպումը շրջանառության մեջ դնելուց հետո քաղաքական օրակարգ բերվեց «Արևելյան Զանգեզուր» հասկացությունը: Ալիևի 2021 թ. հուլիսի 7-ին ստորագրած հրամանագրով երկրի վարչատարածքային բաժանումն իրականացվեց ըստ տնտեսական շրջանների: Այդ որոշմամբ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի տարածքները՝ Ջրականը, Քարվաճառը, Սանասարը, Քաշաթաղը և Կովսականն ընդգրկվեցին «ղարաբաղյան», իսկ Քաշաթաղի ու Քարվաճառի շրջանները ներառվեցին «Արևելյան Զանգեզուր» տնտեսական շրջանի կազմում: Վարչատարածքային բաժանման մեջ «Արևելյան Զանգեզուր» անվամբ շրջանի առանձնացումն արդեն իսկ հուշում է, որ ադրբեջանական ընկալումներում գոյություն ունի նաև «Արևմտյան Զանգեզուրը», ի դեմս որի հասկանում են ՀՀ Սյունիքի մարզը: «Արևելյան Զանգեզուրը մեր պատմական հողն է, ինչպես նաև Արևմտյան Զանգեզուրը»,– հայտարարել էր Բաքվի բռնապետը՝ հավելելով, որ «Զանգեզուրի միջանցքն» անցնելու է այդ հողերով:

Արդեն 2022 թվականի դեկտեմբերի 24-ից Ադրբեջանի պետական ագրեսիվ քաղաքականության բաղադրիչներից մեկը դարձավ մեկ այլ կեղծ հասկացություն, երբ իր ծննդյան օրը Իլհամ Ալիևը հայտարարեց «Արևմտյան Ադրբեջան» «վերադառնալու» ծրագրի մասին: Ավելի վաղ՝ հոկտեմբերի 10-ին, հրապարակվել էր, այսպես կոչված, «Վերադարձի հայեցակարգ» փաստաթուղթը, որով նախատեսվում է Հայաստանի տարածքից իբր «վտարված ադրբեջանցիների խաղաղ, անվտանգ և արժանապատիվ վերադարձը»: Հայաստանի տարածքները ոչ բռնի կերպով զավթելու նպատակով դեռևս 1989 թ. ստեղծված «Ադրբեջանի փախստականների ընկերություն» կազմակերպությունը 2022-ին վերանվանվեց «Արևմտյան Ադրբեջանի համայնք»: Վերոնշյալ հայեցակարգը ազգային-պետական մակարդակով անվտանգային խնդիրներ է ստեղծում Հայաստանի

և հայության համար: Բավական է միայն նշել, որ «վերաբնակեցման» հետևանքով, հաշվի առնելով նրանց բնորոշ բնական աճի տեմպերը, կփոխվի Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական պատկերը: Ծրագրային նպատակներից է «համայնք» կոչվածի միջոցով մասնակցություն ունենալ ՀՀ-ի իրավաքաղաքական դաշտի մշակմանը. հայեցակարգում մասնավորապես նշվում է Հայաստանի իրավական համակարգում «արևմտյան ադրբեջանցիների՝ անհատապես և հավաքականորեն» գործունեություն ծավալելու մտադրության մասին: Մտադիր են «պահանջել» նաև օգտագործելու իրենց լեզուն ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական մարմիններում: Անմիջական վտանգ են ներկայացնելու իբր «անվտանգության» ապահովմանն ուղղված պայմանները: Այսպես՝ իրականում գոյություն չունեցող համայնքի ճարտարապետները նախատեսում են «համապատասխան մանդատով միջազգային անվտանգության առաքելության տեղակայում» այն տարածքներում, որոնք մտադիր են բնակեցնել: Ի դեպ, նախապայմանն է այն, որ այդ ուժերը պետք է վստահելի լինեն Ադրբեջանի համար և տեղակայվեն մինչ նրանց բնակեցումը: Ավելին, Ադրբեջանի համար «վստահելի առաքելությունը», ինչը, բնականաբար, ենթադրելու է Թուրքիայի անմիջական ներգրավումն արդեն ՀՀ-ում, պետք է «վերահսկողության տակ վերցնի համապատասխան

տարածքները, ունենա քաղաքացիական-ռազմական կապեր, ոստիկանական և քաղաքացիական կառավարման լիազորություններ և գործի այնքան ժամանակ, որքան համայնքն անհրաժեշտ կհամարի»: «Հաշվի առնելով, որ իրավապահ և արդարադատության հարցերում համարժեք մասնակցությունը նախապայման է, ադրբեջանցիների համար պետք է պայմաններ ստեղծվեն տեղական անվտանգության ուժեր ձևավորելու և դատարաններում համապատասխան դերակատարում ունենալու համար»,– նշված է փաստաթղթում[1]: Այլ կերպ ասած, Ադրբեջանի հանցագործ իշխանությունները Թուրքիայի հետ նախատեսում են ինքնիշխան Հայաստան պետության տարածքում ստեղծել հանցագործ զինված խմբավորումներ, որոնք իբր «խաղաղ բնակիչների» պաշտպանության անվան տակ կզբաղվեն իրենց բնույթին և էությանը հարիր գործունեությամբ՝ ահաբեկչությամբ, սպանություններով և այլն: Այդպիսով, եթե/երբ Հայաստանի իշխանությունը համաձայնություն տա «Վերադարձի հայեցակարգին», ապա օրինական կերպով մեր երկրի տարածքում կհայտնվեն թուրք-ադրբեջանական զինված միավորումներ: Ծրագիրը կյանքի կոչելու համար Ադրբեջանը մտադիր է ներգրավել և մասնակից դարձնել միջազգային հանրությանը տարբեր միջազգային կազմակերպությունների և կառույցների միջոցով՝ ակնկալելով ոչ միայն իրավական-քաղաքական, այլև ֆինանսական օժանդակություն: Այս ամենի նպատակն է մի կողմից՝ լեգիտիմացնել ՀՀ տարածքների նկատմամբ ռազմական ագրեսիան, մյուս կողմից՝ ոչ ռազմական ճանապարհով բռնազավթել Հայաստանի տարածքները:

Ադրբեջանական պետական քարոզչամեքենան «Զանգեզուրի միջանցքի» ստեղծման իրավական հիմքերը փորձում է տեսնել 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետում, որտեղ մասնավորապես գրված է. «Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի միջև համաձայնեցմամբ ապահովվելու է Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունն Ադրբեջանի արևմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների շինարարությունը»[2]: Այդ նպատակով Արցախի բռնազավթված տարածքներում արդեն իսկ իրականացվում են շինարարական աշխատանքներ: Թուրքական և ադրբեջանական լրատվամիջոցներով ակտիվորեն շրջանառվում է քարտեզ, որտեղ նշված են այն երթուղիներն ու ճանապարհները, ըստ որոնց նախատեսվում է կառուցել կամ վերագործարկել դեռևս խորհրդային տարիներին գործող երկաթգծային և մյուս ճանապարհները: Կարս-Նախիջևան երկաթուղու նախագծի շրջանակներում նախատեսում են կառուցել Վելիդաղից Կարս նոր ճանապարհը, ինչպես նաև հիմնանորոգելու են 158 կմ երկարությամբ հատվածը, որն Օրդուբադը կապելու է Վելիդաղ կայարանի հետ, իսկ 14 կմ երկարությամբ ճանապարհ էլ հասնելու է Հայաստանի սահման՝ Երասխի ուղղությամբ: 166 կմ երկարությամբ երկաթուղային նոր ճանապարհ է նախատեսվում Օրդուբադից մինչև Հորադիզ: Այդ ծրագրի շրջանակներում Ադրբեջանը նախատեսում է խորհրդակցություններ անցկացնել Ռուսաստանի հետ Հայաստանի տարածքում 43 կմ-անոց հատվածը կառուցելու համար: Բացի երկաթուղային ճանապարհից՝ շրջանառվում է նաև մայրուղիների վերականգնման հարցը: Դեռևս 2021 թ. մայիսի 11-ին Ալիևը հայտարարեց, որ մեկնարկել է Հորադիզ (Վարանդայի շրջան)-Աղբանդ երկաթուղու շինարարությունը, որի պակասող 15–16 կմ երկարության հատվածը կառուցվելու է Օրդուբադից մինչև Հայաստանի հետ սահման: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ երկաթուղու շինարարության հետ կապված հարցերը, մասնավորապես՝ 43 կիլոմետրանոց հատվածի կառուցումը, Ալիևը նախատեսում էր քննարկել Ռուսաստանի հետ՝ այդ քայլը հիմնավորելով նրանով, որ «Հայկական երկաթուղին պատկանում է Ռուսաստանին»: Այլ կերպ ասած, Հայաստանին չեն դիտարկում որպես կողմ և մեր սուվերեն տարածքի նկատմամբ գործողությունները քննարկում են երրորդ երկրի հետ: Հայաստանին որպես քաղաքական սուբյեկտ չդիտարկելը նախևառաջ պայմանավորված է մեր երկրի գործող իշխանությունների, մեղմ ասած, կրավորական, ամորֆ կեցվածքով: Հաջորդ ուղղություններից է Իջևան-Ղազախ, Ակնա-Բարդա հատվածը, որը ցանկանում են հասցնել մինչև Ստեփանակերտ: Այս ամբողջ ծրագրի ինֆոգրաֆիկ պատկերը տեղադրված է Թուրքիայի «Անադոլու» պետական լրատվական գործակալության կայքում[3]:



Դեպի Նախիջևան «միջանցք» բացելու նպատակով Ադրբեջանը 2021 թվականի մայիսի 12-ին ռազմական ագրեսիա իրականացրեց Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի ուղղությամբ՝ հարավում սահմանը հատելով Սև լճի, իսկ արևելյան հատվածում՝ Վերին Շորժա և Կութ բնակավայրերի տեղամասում: Հետագայում ևս որոշակի պարբերականությամբ շարունակվեցին դեպի ՀՀ տարածք ադրբեջանական ԶՈՒ հարձակումներն ու դիրքավորումը ռազմավարական նշանակության բարձունքներում, ինչի հետևանքով Ադրբեջանն այսօրվա դրությամբ տեսանելի վերահսկողություն է ստացել Հայաստանի մի շարք բնակավայրերի և ճանապարհների նկատմամբ: Հետպատերազմյան սկզբնական շրջանում Ադրբեջանն ակտիվորեն աշխատանքներ էր տանում Հայաստանի հարավային սահմանով «միջանցք» բացելու համար, սակայն Իրանի Իսլամական Հանրապետության կողմից հնչած հայտարարություններն ու զգուշացումները «կարմիր գծերի» ու պաշտոնական Թեհրանի համար տարածաշրջանում որևէ տարածքային փոփոխության անընդունելիության վերաբերյալ, ինչպես նաև սահմանի երկայնքով զորավարժությունների անցկացումը ստիպեց Ադրբեջանին կենտրոնանալ Վարդենիսի և Ջերմուկի, իսկ արևմուտքից՝ Երասխի ուղղությամբ: Ադրբեջանին և Թուրքիային ուղղված բացահայտ զգուշացում էր նաև անցած տարի հոկտեմբերի 21-ին Կապանում Իրանի հյուպատոսության բացումը:

Զանգեզուրի, թե՛ «թուրանական միջանցք»

«Զանգեզուրի միջանցք» նախագիծը դուրս է գալիս հայ-ադրբեջանական, անգամ տարածաշրջանային երկրների հարաբերությունների մակարդակից: Լինելով «թուրանական միջանցքի» բաղկացուցիչ մասը՝ առնչվում է նաև աշխարհաքաղաքական շահերին և հետաքրքրություններին: Բազմաթիվ հանգամանքներ և հայտարարություններ կան, որոնք ապացուցում են «Զանգեզուրի միջանցքի» կյանքի կոչման աշխատանքներում Թուրքիայի ակտիվ դերակատարության մասին: Այսպես՝ Թուրքիայի նախագահի պաշտոնում վերընտրված Ռեջեփ Թայիփ Էրդողանն ընտրություններից հետո՝ հունիսի 12-ին, պաշտոնական այցով մեկնել էր Ադրբեջան, որտեղ խոսել էր «Զանգեզուրի միջանցքի» մասին և այն որակել որպես իրենց համար ամենազգայուն հարցերից մեկը, որն իրենք ամենաշատն են կարևորում: Էրդողանի խոսքով՝ վերոնշյալ «միջանցքի» կյանքի կոչման դեպքում շահելու է թե՛ Ադրբեջանը և թե՛ Թուրքիան, քանի որ ուղիղ հաղորդակցություն է ապահովվելու երկու երկրների միջև[4]: Ուշագրավ հայտարարություն էր արել այս տարվա մայիսին Թուրքիայի արդեն նախկին ԱԳ նախարար Մևլութ Չավուշօղլուն Անթալիա նահանգի Քեփեզ քաղաքում



ելույթի ժամանակ՝ հայտարարելով. «Թուրքի ուղին անցնում է Շուշիով, Ջաբրայիլով (Ջրական.- խմբ.) և Զանգեզուրով՝ հին թյուրքական հայրենիքով, ուր թափվել է նահատակների արյունը»:

Հարկ է ընդգծել, որ «Զանգեզուրի միջանցքի» առաջին շահառուն Թուրքիան է, որը ձգտում է մեծացնել «թյուրքական աշխարհի» աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դերը սեփական օրակարգը սպասարկելու համար: «Զանգեզուրի միջանցքով» կամ ավելի գլոբալ համատեքստում «թուրանական միջանցքով» Թուրքիան ցանկանում է ցամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ, որի միջոցով կկարողանա ներթափանցել Կասպից ծով, իսկ այնտեղից էլ՝ Կենտրոնական Ասիա, որտեղ Անկարան այժմ ակտիվորեն գործում է «փափուկ ուժի» տարբեր գործիքների օգնությամբ:

Թեև «Մեծ Թուրան» նախագիծն իրագործելու ազդակները տրվեցին 2010-ին, սակայն այն սկսել է առարկայանալ հատկապես 2020 թ.՝ Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքներով պայմանավորված, երբ «հայկական սեպը» հանելու գործընթացը որոշիչ փուլ մտավ: Հարյուր տարի առաջ, ինչպես նաև 1988 թ. ազգային զարթոնքի շնորհիվ այդ գործընթացը կասեցվել էր, սակայն այսօր այդ վտանգը կրկին արդիական է «խաղաղության դարաշրջան» բացելու պատրաստ հայաստանյան իշխանությունների վարած քաղաքականության պատճառով. անհեռատես քաղաքականություն, ինչի հետևանքով Հայաստանը կարող է դադարել գործոն մնալ մեր տարածաշրջանում:

Արցախյան երկրորդ պատերազմից սկսած Թուրքիան այլևս պասիվ դիտորդ չէ, այլ խաղավար, որը բացահայտ ուղղորդում է Ադրբեջանին: Թուրքիայի համար այն ցատկահարթակ է դեպի կասպյան տարածաշրջան և Կենտրոնական Ասիա ակտիվ առաջխաղացման, ինչպես նաև թյուրքական պետությունների հետ ավելի սերտ համա-

գործակցության համար: Հետևաբար տարածաշրջանում հայկական քաղաքական միավորի վերացումը թուրքական պետության առաջնահերթություններից մեկն է: Այդպես է եղել նաև 20-րդ դարասկզբին: Այդ առումով տեղին է հիշատակել Նուրի փաշայի խոսքերը. «Մենք ստեղծել ենք մի պետություն, որը գտնվում է պարկի մեջ, իսկ այդ պարկի բերանը մեր ձեռքին է: Ցանկացած ժամանակ մենք կարող ենք փակել պարկի բերանը, և Հայաստանը շնչահեղձ կլինի»: Մեկ պատմական փաստ ևս. 1920 թ. նոյեմբերի 8-ին Անկարայից Կարաբեքիրը գաղտնի փաստաթուղթ-հրաման է ստանում, որտեղ բառացիորեն գրված էր. «Հայաստանը պետք է ոչնչացվի թե՛ քաղաքականապես և թե՛ իրապես»: Սա ամփոփում է հայկական պետության և ընդհանրապես հայության մասով թուրքական մոտեցումները, որի գործնական փուլն այս պահին իրականացվում է Ադրբեջանի արյունոտ ձեռքերով:

«Թուրան» կառուցելու առաջին օղակը Ադրբեջանն է, իսկ մյուս առանցքային կետը՝ Ղազախստանը, որի տարածքային, բնական և մյուս ռեսուրսները խիստ կարևոր են Թուրքիայի համար: Ընդհանրապես Կենտրոնական Ասիան իր մարդկային, տնտեսական, լոգիստիկ և մյուս ռեսուրսներով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Միաժամանակ արևելք ձգվող թուրքակենտրոն աղեղի ձևավորումը զսպիչ գործոն կարող է դառնալ թե՛ Ռուսաստանի, թե՛ Չինաստանի համար: Այդ համատեքստում «Մեծ Թուրան» նախագիծը չի խանգարում Արևմուտքի և ՆԱՏՕ-ի հետ ծրագրերին: Ընդհակառակը, այն հնարավորություն է տալիս արևմտյան դաշնակիցներին այդ ծրագրի իրագործմամբ խնդիրներ ստեղծել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ՝ Իրանի և Չինաստանի համար: Ներկայում Թուրքիան ձգտում է աշխարհաքաղաքական, տնտեսական օգուտներ քաղել Ռուսաստանին այլընտրանք դառնալու հնարավորությունից: «Մեծ Թուրանն» անվտանգային խնդիրներ է առաջացնում ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի և Ռուսաստանի համար, վերջինս, ներկա իրողություններից ելնելով, փորձում է փոխզիջումային տարբերակներով ապագային թողնել թուրքական ծավալապաշտական մտադրությունների սանձումը: Ինչպես տեսնում ենք, կրկնում է հարյուր տարի առաջվա սխալները, որից տուժում են թե՛ Ռուսաստանը, թե՛ Հայաստանը:

Ի վերջո, Թուրանը միայն գաղափար չէ, այն ենթադրում է նաև մարդկային, ֆինանսական, ռազմական, էներգետիկ, կոմունիկացիոն հնարավորությունների համատեղում, որոնք տնօրինելու և կառավարման լծակներին տիրապետելու միջոցով բոլորովին նոր քաղաքական կշիռ ձեռք կբերի Թուրքիան: Եթե, իհարկե, կյանքի կոչվի այդ ծրագիրը: Նկատենք, որ Կենտրոնական Ասիայի ուղղությամբ կան դժվարություններ և խոչընդոտներ: Նախևառաջ հարց է ծագում, թե որքանով են պատրաստ թյուրքական աշխարհի պետությունները և առաջին հերթին Ղազախստանը ընդունել Թուրքիայի գերիշխանությունը: Կենտրոնական Ասիայում տեղական վերնախավերը հազիվ թե ցանկանան դառնալ թուրքական վասալներ, առավել ևս, որ այս տարածաշրջանում դեռևս քաղաքական, գաղափարական, տնտեսական առումներով կշիռ ունեն Ռուսաստանն ու Չինաստանը: Ինչպես երևում է, Թուրքիան նախընտրում է Կենտրոնական Ասիայի երկրների հետ հարաբերությունները (հասկանանք՝ ազդեցության լծակները) զարգացնել տնտեսական, մշակութային, քաղաքակրթական և «փափուկ ուժի» այլ միջոցներով: Մասնավորապես 2022 թ. հոկտեմբերին թյուրքական պետությունների կազմակերպության (ԹՊԿ) անդամ երկրները Թուրքիայի Բուրսա քաղաքում կայացած հանդիպման ժամանակ որոշում կայացրին կազմակերպության կառուցվածքում ստեղծել «Միասնական այբուբենի ստեղծման հանձնաժողով», որի նպատակն է «հասնել թյուրքական պետությունների լեզվական միասնությանը և արագացնել ընդհանուր այբուբենի անցման գործընթացը»: Միասնական ինքնության ձևավորման ճանապարհին կիրառվում են նաև այլ լուծումներ. թյուրքալեզու երկրներին մշակութային միասնական հարթակում միավորելու նախաձեռնություններին լայնորեն աջակցում է «TURKSOY» միջազգային կազմակերպությունը: Այս և նմանատիպ այլ նախաձեռնություններով, հիմնադրամներով, կազմակերպություններով Թուրքիան աշխատում է մշակութային-գաղափարական սերտաճման ուղղությամբ: Ակտիվ աշխատանքներ են տարվում կրթական միասնական համակարգի, մասնավորապես՝ պատմության ընդհանուր դասագրքեր ստեղծելու ուղղությամբ, ինչը վերաբերում է թյուրքական պետությունների կազմակերպության անդամ երկրներին: Սամարղանդում 2022 թ. նոյեմբերի 11-ին կայացած թյուրքական պետությունների կազմակերպության 9-րդ գագաթնաժողովի ընթացքում պետությունների ղեկավարները որոշում ստորագրեցին թուրքական 500 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր նախնական կանոնադրական կապիտալով ներդրումային հիմնադրամի ստեղծման մասին:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա ի հետևանք Արցախյան երկրորդ պատերազմի, այս արհեստածին պետությունը կախվածության մեջ ընկավ Թուրքիայից: Ինչպես ասում են, քաղաքական և ռազմատեխնիկական օգնության դիմաց այսօր Բաքվի իշխանությունները ստիպված են վճարել՝ նաև սպասարկելով թուրքական օրակարգը: Թուրքիան Ադրբեջանի նկատմամբ վարում է «մեկ ազգ-երկու պետություն» մոդելի վրա հիմնված քաղաքականություն: Հայկական բռնազավթած տարածքներ այցի ընթացքում 2021 թվականի հունիսի 15-ին Էրդողանը և Ալիևը ստորագրեցին Շուշիի տխրահռչակ հռչակագիրը, որի նպատակներն են թուրք-ադրբեջանական «հետպատերազմյան համա-

գործակցությունն ու տարածաշրջանում կայունության խթանումը»: Հռչակագրի առանցքում պաշտպանության ոլորտում համագործակցությունն է, որի համաձայն՝ երկու պետությունները պարտավորվում են օգնել միմյանց որևէ մեկի «անկախության կամ տարածքային ամբողջականության վրա երրորդ պետության կողմից սպառնալիքի կամ հարձակման դեպքում»: Հասկանալի է, որ «երրորդ պետություն» ասելով՝ առաջին հերթին պետք է հասկանանք Հայաստանը: Շուշիի հռչակագիրը փաստում է, որ Թուրքիան և Ադրբեջանը հակված չեն տարածաշրջանային խաղաղության և շարունակելու են ագրեսիվ քաղաքականություն իրականացնել Հայաստանի և հայ ժողովրդի դեմ: Թուրք-ադրբեջանական պայմանագիրը չի շրջանցել Հայոց ցեղասպանության թեման՝ այն համարելով «պատմությունը խեղաթյուրելու, տարածաշրջանում խաղաղությանն ու կայունությանը վնասելու փորձ»: Սրանով փաստորեն երկու հանցակից պետությունները վերջնագիր են ներկայացնում մեզ, որպեսզի հրաժարվենք Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը պաշտպանելուց և համակերպվենք Արցախից բացի, նաև Սյունիքի անեքսիային: Շուշիի հռչակագրում հղում է արվում նաև 100 տարի առաջ ստորագրված Կարսի պայմանագրին. «Հռչակագրի անունն ինքնին խոսուն է: Այսօր մենք որակապես նոր կապեր ենք հաստատել, և այս հռչակագրի բոլոր կետերը մեր հետագա համագործակցության երաշխիքն են»[5]:

«Շուշիի հռչակագիրը» իրավական առումով մեկնարկային կետ դարձավ Թուրքիային Ադրբեջանի սերտ ինտեգրման համար, որն ընդգրկում է քաղաքական, տնտեսական, պաշտպանական, մշակութային, հումանիտար, առողջապահական, կրթական, սոցիալական, երիտասարդության և սպորտի բնագավառները: Անցած տարվա սեպտեմբերի 1-ից ինտեգրվել են թուրքական e-devlet էլեկտրոնային կառավարման և ադրբեջանական e-gov պորտալները: Մինչ այդ միասնականացվել էին երկու երկրների վարորդական վկայականները, որի արդյունքում Ադրբեջանի քաղաքացիները կարող են վարորդական իրավունք ստանալ անմիջապես Թուրքիայի պետական մարմիններում, իսկ Թուրքիայի քաղաքացիները՝ Ադրբեջանի պետական մարմիններում:

Մեկ միասնական համակարգի մեջ են միավորվում նաև երկու երկրների բանակների չափանիշները: Անցած տարի Ադրբեջանում բացվեց թուրք-ադրբեջանական ռազմական համալսարան: Հեռահար նպատակներից է «թյուրքական միասնական բանակի» ստեղծումը: Մեզ համար ուշադրության է արժանի պաշտպանական ոլորտում թուրք-ադրբեջանական սերտ համագործակցությունը, քանի որ այն լրացուցիչ անվտանգային մարտահրավերների առջև է կանգնեցնում մեր պետությանը: Վերջերս՝ հունիսի 20-ին, հայտարարվեց, որ երկու երկրները ստեղծում են օդային վերահսկողության միասնական գոտի. Թուրքիայի կողմից մշակված «HAKİM» օդային հրամանատարության և կառավարման համակարգը կօգտագործվի Ադրբեջանի հետ համատեղ: Օդային կառավարման գոտին ձգվելու է Էգեյան ծովից մինչև Կասպից ծով: Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության վարչության ղեկավար Հալուք Գյորգյունի խոսքով՝ այդ նախագծով երկու երկրների ռազմաօդային ուժերը հնարավորություն են ստանում համատեղ գործողություններ իրականացնել, ինչպես նաև վերահսկել Ադրբեջանի օդային տարածքը: Վերոնշյալ նախագիծը լուծելու է մի շարք խնդիրներ, նախևառաջ սինխրոնիզացվելու են հսկողության ստանդարտներն ու զենքերի տեսակները: Դա հերթական քայլերից մեկն է Ադրբեջանի պաշտպանական ոլորտը «կլանելու» ճանապարհին: «Էգեյան ծովից մինչև Կասպից ծով» ասելով՝ պետք է հասկանանք, որ թիրախում են հայտնվում Հունաստանն ու Հայաստանը: Իսկ մեր դեմ ռազմական ագրեսիան վերսկսելու դեպքում թուրք զինվորականների համար ավելի հեշտ կլինի համակարգել ադրբեջանական օդուժի գործողությունները: Խնդրահարույցն այն է, որ դրա հետևանքով էլ ավելի կմեծանա Թուրքիայի ներկայությունը մեր տարածաշրջանում: Եվ ամենակարևորը՝ այս ամենը նախապատրաստական գործընթաց է, մի կողմից՝ Իրանի դեմ հնարավոր հարձակման, մյուս կողմից՝ ռուսական ռազմաքաղաքական ներկայությունը նվազեցնելու համար:

Թերևս կարճաժամկետ կտրվածքով Ադրբեջանի համար շահավետ է նման սերտ համագործակցությունը, սակայն ժամանակի ընթացքում խիստ մեծանալու է Թուրքիայից կախվածությունը: Արտաքին և ներքին քաղաքականության ոլորտներում դա այն գինն է, որը կվճարի Ադրբեջանը Արցախյան երկրորդ պատերազմում Թուրքիայի աննախադեպ օգնության դիմաց:

«Մեծ Թուրան» նախագիծը լիովին տեղավորվում է Էրդողանի արտաքին քաղաքականության գաղափարական հիմքերի մեջ՝ պանսլամիզմ, պան-

թուրքիզմ և պանիսլամիզմ: Տարբեր քաղաքական իրադրություններում նա կիրառում է այդ գաղափարախոսություններից որևիցե մեկը:

Ներկա փուլում ակնհայտ է, որ արտաքին քաղաքականության մեջ Էրդողանի հիմնական գաղափարական հենքը պանթուրքիզմն է: Վերոնշյալ նախագիծն առավել պահանջված դարձավ Ռուսաստան-Արևմուտք ակտիվ առճակատման փուլում, երբ 2022 թ. փետրվարի 24-ին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ռազմական գործողություններ սկսվեցին: Էներգետիկ, տնտեսական, լոգիստիկ նոր, անընդհատ գործող շղթա կառուցելու համար Թուրքիան ավելի ակտիվորեն սկսեց զարգացնել թյուրքական աշխարհի հետ կապերը բոլոր մակարդակներում: Թյուրքական խորհուրդը դարձավ կազմակերպություն, որոշ վերլուծական շրջանակներ նշում էին, թե Էրդողանը ցանկանում է թյուրքական միություն ստեղծել, սակայն թե՛ Արևմուտքի, թե՛ ռուսական քաղաքական շրջանակների հետ կուլիսային շփումների արդյունքում որոշում կայացվեց խորհուրդը դարձնել կազմակերպություն, այլ ոչ թե միություն:

Էրդողանի նպատակները, սակայն, չեն սահմանափակվում տարածաշրջանում և թյուրքական աշխարհում գերիշխող դիրք գրավելու ցանկությամբ: 2021 թ. հոկտեմբերին Էրդողանը, ելույթ ունենալով Անգոլայի խորհրդարանում, հայտարարել էր, որ «աշխարհը հինգից ավելի է»՝ նկատի ունենալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ հինգ պետությունների կազմը, և շեշտելով, որ այդ թիվն այլևս չի արտահայտում աշխարհում ստեղծված նոր իրողությունները: Ծավալապաշտական ծրագրերով աչքի ընկնող Էրդողանը Թուրքիան տեսնում է անվտանգային միջազգային համակարգը ձևավորողների շարքում, նոր ձևավորվող քաղաքական քարտեզի վրա, միջազգային քաղաքական թատերաբեմում այսօրվա Թուրքիան չի պատրաստվում բավարարվել երկրորդական դերով, տարածաշրջանային գլխավոր խաղացողի դերն էլ նրան այլևս չի բավարարում: Այլ կերպ ասած, գերտերություն դառնալու հայտ է ներկայացնում, իսկ դրա համար բոլոր ժամանակներում անհրաժեշտ է ծրագիր, գաղափարախոսություն, որը կկարողանա ապահովել գաղափարական, արժեհամակարգային հենքը: Հենց այդպիսի գաղափարական հենարան է «Մեծ Թուրան» նախագիծը:

Այս տարվա մայիսի 24-ին Անկարայում անցկացվեց «Մեծ Թուրքիայի տեսլականը» պանելային քննարկում, որը հաստատեց այդ երկրի ղեկավարի մեծ նկրտումներն ու ծրագրերը ոչ միայն մեր տարածաշրջանի, այլև ավելի գլոբալ գործընթացների մասով: Պանելային քննարկումը վերաբերում էր 2021 թ. նոյեմբերի 12-ին Ստամբուլում գումարված թուրքական խորհրդի 8-րդ գագաթնաժողովում ընդունված «Թյուրքական աշխարհի տեսլականը 2040» հայեցակարգին, որը «թուրքական դար» նպատակի իրականացմանն է միտված: Այդ նպատակի համաձայն՝ 21-րդ դարը ցանկանում են վերածել «թուրքական դարաշրջանի»: Ելույթ ունենալով պանելային քննարկման ժամանակ՝ Էրդողանը նշել է. «Թուրքիան ներկա է ամենուր, ամենուր կան թուրք քաղաքացիներ և հայրենակիցներ: Մենք օգնության ենք հասել մեր բոլոր ընկերներին Բալկաններից մինչև Կովկաս՝ վերականգնելով և զարգացնելով կապերը Թուրքիայի հետ ընդհանուր պատմություն, լեզու, կրոն և մշակույթ ունեցող երկրների հետ»[6]: «Թուրք քաղաքացիներ և հայրենակիցներ» ձևակերպումն ընդգծում է պետության սահմաններով չբավարարվելու մասին, այլ կերպ ասած, որտեղ թուրք է ապրում, այնտեղ փորձ է արվելու թելադրել թուրքական պետության շահը: Դրանով Էրդողանը ցանկանում է թուրքական սփյուռքը դարձնել այլ երկրների ներքին գործերին միջամտելու գործիք:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ «Զանգեզուրի միջանցք» կոչվածը թուրքական նախագիծ է, որը բավարարում է նաև արևմտյան մի շարք երկրների հետաքրքրություններն ու շահերը: Հասկանալու համար, թե որ երկրների մասին է խոսքը, բավարար է հետևել նրանց դեսպանների և պետական գործիչների հայտարարություններին: Այդ թվում են նաև այն պետությունները, որոնք կարիք ունեն Եվրոպա դուրս գալու համար շրջանցել Ռուսաստանով անցնող հաղորդակցության ճանապարհները, էներգետիկ ենթակառուցվածքները և այլն: Գլոբալ առումով, «Զանգեզուրի միջանցքի» բացումը «թյուրքական աշխարհի» միավորման սկիզբն է՝ Թուրքիայի առաջնորդությամբ, ինչն անհամատեղելի է Հայաստան պետության և, ընդհանրապես, Հայկական լեռնաշխարհում հայերի լինելիության հետ: ■

Հղում

1. https://www.trend.az/azerbaijan/politics/3700603.html
2. https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/
3. https://www.aa.com.tr/ru/%D0%BC%D0%B8%D1%80/%D0%B6%D0%B5%D0%BB%D0%B5%D0%B7%D0%BD%D1%8B%D0%B5-%D0%B4%D0%BE%D1%80%D0%BE%D0%B3%D0%B8-%D0%B2%D0%B0%D0%B6%D0%BD%D1%8B%D0%B9-%D1%84%D0%B0%D0%BA%D1%82%D0%BE%D1%80-%D0%BC%D0%B8%D1%80%D0%B0-%D0%BD%D0%B0-%D1%8E%D0%B6%D0%BD%D0%BE%D0%BC-%D0%BA%D0%B0%D0%B2%D0%BA%D0%B0%D0%B7%D0%B5/2109845
4. https://www.ermenihaber.am/am/news/2023/06/13/%D4%B9%D5%B8%D6%82%D6%80%D6%84%D5%AB%D5%A1-%D4%B1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6/250284
5. https://hhpress.am/hanrapetutyun/2021/1780/
6. https://twitter.com/RTErdogan/status/1660894178161639425

Պատրանքներից հրաժարվելու ժամանակը

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի սևծովյան-կասպիական տարածաշրջանի ինստիտուտի ավագ գիտաշխատող

2022 թ. փետրվարի 24-ի վաղ առավոտյան Ռուսաստանը հատուկ ռազմական գործողություն սկսեց Ուկրաինայի դեմ՝ լրջագույն մարտահրավեր նետելով 1991 թվականից հաստատված աշխարհակարգին: Վստահաբար ուկրաինական ճգնաժամի այս նոր շրջափուլը մեծ ազդեցություն է ունենալու նաև մեր տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների վրա: Այդ առումով կարևոր է հասկանալ, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ ռուս-ուկրաինական պատերազմը Հարավային Կովկասի, մասնավորապես՝ Հայաստանի ու Արցախի համար: Դժվար է կանխատեսել ռուս-ուկրաինական պատերազմի ավարտը, սակայն գուցե այն առաջիկայում վերածվի սառը պատերազմի: Հնարավոր է՝ ամռան վերջին սկսվեն ոչ ֆորմալ բանակցություններ, և լինեն կուլիսային պայմանավորվածություններ:

Արձանագրենք, որ ՌԴ-ի դեմ մերժողական վերաբերմունքի ծավալն այլևս այնքան ուժեղ չէ, որքան պատերազմի սկզբին: Հիմա Բայդենը պատրաստվում է 2024-ի նախագահական ընտրություններին, Եվրոպան հոգնել է պատերազմից: Շատ եվրոպական երկրներ մեծ վնասներ են կրում, օրինակ՝ Գերմանիայի տնտեսությունը չափից շատ կորուստներ է կրել: Կարելի է ենթադրել, որ այս ամենով պայմանավորված, կլինեն կուլիսային բանակցություններ, և ինչ-որ կերպ պատերազմը կսառի: Պատերազմից առաջին հերթին տուժում է Ուկրաինան, երկրորդը՝ ՌԴ-ն, երրորդը՝ Եվրոպան, և շահում է ԱՄՆ-ը: Ռուսաստանը Ուկրաինայի արևելքի ինքնահռչակ հանրապետություններին ճանաչելով՝ սկզբունքորեն որևէ պարգևություն չմտցրեց իր հետագա դիտավորությունների առումով: Նկատի ունենալով Ռուսաստանի նախագահի գործողությունների անկանխատեսելիությունը՝ այնուամենայնիվ պարզ չդարձավ՝ հատուկ ռազմական գործողությունը Դոնեցկի և Լուգանսկի ճանաչման գործընթացի հիմնավորումն էր, թե՞ ընդհակառակը, ճանաչումն ուներ ներխուժելու և Կիևի ռեժիմը փոխելու նպատակ: Բնականաբար, ամենակարևոր տարածաշրջանային խնդիրը, որը լուծում է Ռուսաստանը, Ուկրաինայի դաշնայնացումն է և Արևմուտքից հեռացնելը: Գլոբալ առումով Վլադիմիր Պուտինը լուծում է անձամբ իր համար կարևորագույն խնդիր. սառը պատերազմում պարտություն կրած Ռուսաստանի կարգավիճակը պետք է փոխվի: Ռուսաստանի նախագահը տրամաբանական է համարում, որ եթե Ռուսաստանն ի վիճակի է Արևմուտքի հետ նման ճգնաժամի պայմաններում գոյատևմանը, ապա Ռուսաստանը ևս մեկ անգամ արձանագրում

է գերտերության իր կարգավիճակը: Անդրադառնալով ՀՀ-ի վրա այս պատերազմի բացասական հետևանքներին՝ նշենք Հայաստանի և արցախահայության կախվածությունը Ռուսաստանի հաջողությունից կամ հակառակը: Եթե ՌԴ-ն այս պատերազմում որոշակի հաջողություններ ունենար, ապա Ալիևը չէր կարող նման քայլերի գնալ: Ռուսաստանի պարտության դեպքում ռուս խաղաղապահ ուժերը մեծ ճնշումներ կկրեն Արցախում: Աստիճանաբար փոխվելու է նաև Արևմուտքի վերաբերմունքը Արցախում տեղակայված ռուս խաղաղապահ առաքելության հանդեպ: Մինչև ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկը Արևմուտքի առանցքային դերակատարների դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղում գտնվող ռուս խաղաղապահների նկատմամբ բավականին կառուցողական էր: Բոլորը հասկանում էին, որ նրանք կարևոր ու դրական դերակատարություն ունեն հակամարտության գոտում հարաբերական խաղաղության պահպանման, ինչպես նաև Արցախի հայ բնակչությանը էթնիկ զտումներից պաշտպանելու հարցում: Այնուամենայնիվ, Ռուսաստանի նկատմամբ մեկուսացման այս նոր քաղաքականության որդեգրման հետևանքով Արցախում տեղակայված ռուս խաղաղապահների նկատմամբ վերաբերմունքը համապատասխանելու է Ռուսաստանի հետ դիմակայության տրամաբանությանը: Անկախ արդյունքներից և հետևանք-

ներից՝ այս պատերազմը արդեն իսկ փոխել է ռուս-արևմտյան հարաբերությունների ողջ բնույթը: Եթե նախկինում Ռուսաստանի ու Արևմուտքի միջև գոյություն ունեին հարցեր, որոնց շուրջ հնարավոր էր համագործակցություն, ապա փետրվարի 24-ից հետո հավաքական Արևմուտքը սկսել է վարել Ռուսաստանի տոտալ մեկուսացման քաղաքականություն բոլոր ոլորտներում: Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկը ու դրա հետևանքով Մոսկվայի նկատմամբ Արևմուտքի որդեգրած նոր ռազմավարությունը, ինչը նպատակ է հետապնդում մեկուսացնելու Ռուսաստանին բոլոր ուղղություններով, գրեթե բացառում է այս երկու հակադիր բևեռների համագործակցությունը ղարաբաղյան համատեքստում: Էլ ավելի մշուշոտ է դառնում նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի ապագան, որի դերակատարությունը առանց այդ էլ սառեցվել էր Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ավարտից հետո: Ռուսաստանը այս պատերազմից հետո վստահաբար փորձելու է ամրապնդել իր մենաշնորհային դերը մեր տարածաշրջանում տեղի ունեցող տարբեր գործընթացներում և մասնավորապես՝ հայ-ադրբեջանական համատեքստում: Ուկրաինական պատերազմը ի ցույց դրեց մեկ այլ իրողություն ևս, որը Հայաստանում մինչև վերջերս անտեսվում էր: Մոսկվան հետխորհրդային երկրները համարում է իր ազդեցության գոտի և պատրաստ է դիմել արմատական քայլերի սեփական վերահսկողությունը այդ տարածքում պահպանելու համար: Այդ առումով բավականին միամիտ են հայ քաղաքական ու վերլուծական դաշտի որոշ ներկայացուցիչների այն հույսերը, թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կամ Ադրբեջանի հետ հաշտեցումը հնարավորություն են ընձեռելու Հայաստանին դուրս գալու Ռուսաստանի ազդեցության գոտուց: Ռուսաստանի շահերին հակասող քաղաքականություն վարելու դեպքում Հայաստանի պետականությանը սպառնացող հիմնական վտանգը բխելու է Մոսկվայից, այլ ոչ թե Բաքվից կամ Անկարայից: Այսինքն՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն ու հայ-ադրբեջանական հնարավոր հաշտեցումը չեն կարող էական ազդեցություն ունենալ հայ-ռուսական հարաբերությունների բնույթի ու էության վրա: Ռուս-ուկրաինական պատերազմը կարող է նաև արագացնել Ռուսաստանի ինտեգրացիոն գործընթացները մեր տարածաշրջանում: Արևմուտքի կողմից մեկուսացման մեջ հայտնված Ռուսաստանը փորձելու է մեծացնել իր ազդեցությունը այն տարածաշրջաններում, որոնց նկատմամբ դեռևս վերահսկողություն ունի: Սա զգալիորեն նվազեցնելու է Հայաստանի ինքնիշխանությունը և սահմանափակելու է արտաքին քաղաքական դաշտում Երևանի մանևրելու հնարավորությունը: Ուկրաինական ճգնաժամով պայմանավորված հաջորդ հավանական վտանգը կապված է երկարաժամկետ կտրվածքով Ռուսաստանում քաղաքական կայունության խնդրի հետ: Վերջին շրջանում Արևմուտքը Մոսկվայի նկատմամբ սահմանել է ծանրագույն պատժամիջոցներ, որոնք լրջագույն վնաս են հասցնելու Ռուսաստանի տնտեսությանը: Եթե որպես այս պատերազմի հետևանք Ռուսաստանն ու Արևմուտքը չկարողանան փոխզիջումների հիման վրա որոշակի համաձայնության գալ, որը թեկուզ մասնակի կվերականգնի մինչպատերազմական ստատուս-քվոն, ապա մոտակա տարիներին Ռուսաստանը տնտեսական լուրջ խնդիրների առջև է հայտնվելու, որոնք կարող են նախադրյալներ դառնալ այդ երկրում քաղաքական ապակայունացման համար: Իսկ Ռուսաստանում քաղաքական ապակայունացումը կարող է վտանգներ ստեղծել նաև Ղարաբաղյան հակամարտության գոտում: Անկասկած է, որ Ուկրաինայում պատերազի բռնկումը Հայաստանի համար իրադարձությունների զարգացման վատթարագույն սցենարն էր: Այն լրջագույն ռիսկեր է ստեղծել մեր տարածաշրջանում՝ բարդացնելով Հայաստանի առանց այդ էլ ծանր աշխարհաքաղաքական վիճակը: Վերը նշված չոր փաստերը փորձենք բերել տեսական դաշտ և հասկանանք, թե Հայաստանի ազգային անվտանգության ապահովման խնդրում ինչ ենք սպասում հիմնական խաղացողներից և առաջին հերթին մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանից: Եվ ո՞ր Ռուսաստանից:

Գերմանացի հայտնի սոցիոլոգ Մաքս Վեբերի դիտարկմամբ. «...կայուն քաղաքականության հիմնական նախադրյալներն են ազդեցիկ խորհրդարանը և

պատասխանատու քաղաքական կուսակցությունները»: Ռուսաստանի դեպքում, որպես քաղաքական կուսակցության ատրիբուտներ կրող ուժեր, կարելի է ավելացնել նախագահի շուրջ ձևավորված 5 խիստ ֆրագմենտավորված և նախագահի վրա ազդեցությունը պահելու կամ ձեռք բերելու նպատակով մշտապես մրցակցող վերնախավային խմբերը, և արձանագրենք, որ ներկա Ռուսաստանը գործում է կայուն քաղաքականության, այդ թվում՝ արտաքին քաղաքականության լուրջ դեֆիցիտի պայմաններում: Ինչ մարտահրավերներ է դիմագրավում Ռուսաստանը՝ նկատի ունենալով նաև անցյալի փորձը, և որքանով է ներկա Հայաստանը տեղավորվում Ռուսաստանի աշխարհաքաղաքական և արտաքին քաղաքական առաջնահերթությունների շրջանակում:

Իրականությունն այն է, որ առաջիկա տասնամյակներում Ռուսաստանն իր արևմտյան սահմաններին կունենա վտանգավոր և անկայուն իրավիճակ, ինչը միշտ էլ հղի կլինի ռազմական բախման հավանականությամբ: Հարավային և հարավարևելյան ուղղությունները Մոսկվայի լուրջ մտահոգությունը չեն հարուցում: Չինաստանի հետ բարեկամական, Իրանի հետ գործընկերային, իսկ Թուրքիայի հետ գործնական հարաբերությունները երաշխիք են, որ մոտ ապագայում Կենտրոնական Ասիայի և Այսրկովկասի երկրներից որևէ մեկը լուրջ վտանգ չի ներկայացնի Ռուսաստանի համար: Դրան նպաստում է նաև օտարերկրյա զինուժի բացակայությունը Աֆղանստանում:

Մոսկվան շարունակում է հավատարիմ մնալ իր վերջին 30-ամյակի քաղաքականությանը: Ռուսական զորքերը մշտապես տեղակայված են Հայաստանում և Տաջիկստանում, ռազմական ենթակառուցվածքներ կան Ղրղզստանում և ներկայություն Ադրբեջանում, ինչը, ի դեպ, կարող է և ժամանակավոր բնույթ կրել, եթե դա ցանկանա ինքը՝ Ռուսաստանը: Ուրիշ ոչ մի պարագայում խաղաղապահները չեն լքի Արցախը:

Ինչպես և ցանկացած խոշոր տերության, Ռուսաստանի համար էլ անընդհատ օրակարգում կլինի ռուսական ազդեցության բնական սահմանների համարյա վերջնական պատասխան չունեցող հարցը: Նույնիսկ Արևմտյան Եվրոպայի նախկին գաղութատիրական երկրների ազդեցության կրճատումը միջազգային հարաբերությունների վրա (Պորտուգալիա, Իսպանիա) համարյա չկրճատեց նրանց ազդեցությունը այն երկրների վրա, որոնք գոյացան իրենց նախկին գաղութների տեղում: Ի դեպ, Ռուսաստանը այս կամ այն պատճառով չհետևեց Եվրոպայի երկրների օրինակին և պահպանեց և՛ իր տարածքները, և՛ ռազմական ներուժը, և՛ գերտերության կարգավիճակը: Ընդ որում, Ռուսաստանի համար բավականին հարթ անցավ գերտերության կարգավիճակի պահպանման համար գործադրվող ջանքերի գերլարման գործընթացը: Պետք է նաև հաշվի առնենք, որ Ռուսաստանի հետխորհրդային հարևանները եվրոպական կայսերապաշտական մոտեցումների իմաստով չեն եղել նրա գաղութները,

այլ մաս են կազմել ռուսական նահանգային վարչական բաժանմանը՝ ոչնչով չտարբերվելով Վելիկոռոսիայի կամ Մալոռոսիայի նահանգների կարգավիճակից: Միակ բացառությունը Բուխարայի էմիրությունն էր: Էլ չասած, որ ռուսական մշակութային ազդեցությունը հետխորհրդային տարածքում շատ ու շատ ավելի մեծ է, քան, ասենք, ֆրանսիական մշակույթի ազեցությունը, օրինակ, Չադում կամ Մալիում: Այդ պատճառով էլ Ռուսաստանի համար շատ բարդ է Այսրկովկասի կամ Կենտրոնական Ասիայի նորանկախ երկրները դիտարկել որպես արտասահմանյան պետություններ, որոնց ճակատագրերին կարելի է վերաբերվել՝ ելնելով զուտ ռացիոնալ հաշվարկից: Ռուսաստանի քաղաքակրթական սահմանների ճշգրտումը, ի տարբերություն եվրոպացիների, Աֆրիկայի կամ Մերձավոր Արևելքի առումով, շատ բարդ խնդիր է: Բացառությամբ Կովկասյան լեռների՝ դրա համար չկա որևէ այլ ակնհայտ աշխարհագրական հիմք: Այս գործոնները պետք է հաշվի առնի և՛ Հայաստանի ղեկավարությունը, և՛ աշխարհասփյուռ հայությունը: Պետք է հասկանալ, որ Ռուսաստանը այս պահին հաշտված է որոշակի անհարմարավետ վիճակի հետ, որովհետև դեռևս գտնում է, որ ինքը պետք է մնա Հարավային Կովկասում որպես գործոն, որոշ դեպքերում՝ նաև անվտանգության երաշխավոր: Բայց պետք է նաև հասկանալ, որ վաղը Ռուսաստանը, առանց լուրջ բարդույթների, կարող է հրաժարվել այդ դերակատարությունից: Ռուսաստանում գտնում են, որ կարող են մնալ հեռավոր սահմանների պահապանի դերում՝ առանց լուրջ ջանքեր գործադրելու: Հարավային ուղղության նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքը կարելի է որակել որպես եղած հնարավորությունների պասիվ պահպանում, այն հաշվարկով, որ պոտենցիալ թնջուկները ձեռք չեն բերի իր անվտանգության համար դրամատիկ բնույթ, իսկ Ռուսաստանի ազդեցությունը կպահպանվի՝ առանց լուրջ ճիգերի գործադրման: Առնվազն այս պահին Ռուսաստանը հետխորհրդային տարածքում իր դիրքերը պահում է՝ գործադրելով հարյուրապատիկ ավելի քիչ ջանքեր, քան ԱՄՆ-ը, Չինաստանը կամ Թուրքիան՝ դրանք ձեռք բերելու հա-

մար: Ռուսաստանում վստահ են, որ Այսրկովկասը կամ Կենտրոնական Ասիան երբեք չեն դառնա պլացդարմ Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված երկրների կամ միությունների լուրջ ներթափանցման համար:

Մոսկվայում վստահ են, որ դրան խոչընդոտում է առաջին հերթին հետխորհրդային երկրների աշխարհաքաղաքական դիրքը: Սակայն, եթե ընդունում ենք, որ հարավից Ռուսաստանին սպառնացող վտանգները և մարտահրավերները անհամեմատելի են Արևմուտքից եկող մասշտաբային վտանգներին, դրանից, այնուամենայնիվ, նրանք չեն դադարում գոյություն ունենալ: Ռուսաստանում, այդ թվում՝ քաղաքագիտական շրջանակներում գիտակցում են, որ Ռուսաստանի ազդեցությունը վերոնշյալ տարածաշրջաններում թուլանալու միտում ունի, և այդ ազդեցությունը ռուսական արտաքին քաղաքական «ակտիվից» վերածվում է «պասիվի»: Այս վիճակը փոխելու լուրջ քայլերի այսօրվա Ռուսաստանը պատրաստ չէ, որովհետև իր համար անվտանգային խնդիրներ չի տեսնում: Սակայն, եթե դու մի բան չես ուզում տեսնել, դա չի նշանակում, որ դա գոյություն չունի: Սրընթաց, ինչ- որ տեղ արհեստական ռուս-չինական մերձեցումը ԱՄՆ-ին և Եվրոպային դրդում է լարվածություն ստեղծել Ռուսաստանի ամբողջ հարավային շրջագծով: Հայաստանի դեպքում այժմեական է դառնում հավաքական Արևմուտքի կողմից Կենտրոնական Ասիայի և Այսրկովկասի երկրների պետականության կազմաքանդման քաղաքականությունը: Նպատակն է այդ երկրների կամ տարածքների (ինչն ավելի ցանկալի է) հետ անդրսահմանային համագործակցությունը՝ առանց Ռուսաստանի շահերը հաշվի առնելու: Ընդ որում, սա արդեն ոչ միայն հակառուսական, այլև հակաչինական պայքարի լուրջ գործոն է դառնում: Որքան ավելի Չինաստանը ամրապնդի իր «թիկունքը» Եվրասիայում, այնքան Արևմուտքը, օգտվելով Ռուսաստանի կրավորական դիրքից, դրանց հետևողականորեն կհարվածի՝ կասկածի տակ դնելով նաև Ռուսաստանի նոր «խաղալիքները», Իրանին կապող Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքը, Չինաստանի անդրկասպիական նախագծերը, որոնք, չնայած շրջանցում են Ռուսաստանը, սակայն նպաստում են Չինաստանի՝ Արևմուտքից անկախ տրանսպորտային մայրուղիների դիվերսիկացմանը, կենսունակությունը: Անկեղծ լինենք. ոչ Վաշինգտոնը, ոչ էլ Լոնդոնը չեն ծրագրում Ղազախստանը կամ Հայաստանը Ռուսաստանի համար վերածել «երկրորդ Ուկրաինայի»:

Սակայն «երկրորդ Աֆղանստանի» սցենարը ոչ ոք չի բացառում: Ռուսաստանը կարողացավ զերծ մնալ ղազախական իրադարձություններից հետո այդ երկրում այս կամ այն պատրվակով իր զորամիավորումները թողնելու գայթակղությունից: Չնայած բացառել, որ «գունավոր հեղափոխության» հերթական նման մի փորձ Արևմուտքը չի նախաձեռնի, որից հետո Ռուսաստանը նման քայլի կարող է և գնալ,

չի կարելի: ԱՊՀ-ի հարավում Ռուսաստանի դիրքորոշման երկակիությունը, Հայաստանի հանդեպ ստանձնած անվտանգային պարտավորություններից հրաժարումը լուրջ խնդիրներ են հարուցում առաջին հերթին Իրանի համար, որն, ունենալով խնդիրներ համարյա մնացած բոլոր ճակատներում, ստիպված է նաև լցնել անվտանգային այն վակուումը, որը Ռուսաստանի անպատասխանատու կեցվածքի արդյունքն է: Իրանը ինչ-որ առումով պետք է կարողանար հույս դնել Ռուսաստանի վրա: Առիթ ենք ունեցել զրուցելու Մոսկվա ժամանած Իրանի քաղաքագիտական լուրջ կենտրոններ ներկայացնող մասնագետների հետ: Չգիտես, թե Ռուսաստանի ո՞ր կաբինետներում են որոշել, որ Հայաստանի պետականության կորուստը իրենց համար լուրջ խնդիրներ չի հարուցի: Ջարմանալիորեն Ռուսաստանի քաղաքական վերնախավի մոտ չարախնդալը և ԱԳՆ-ի խոսնակի սարկազմը դարձել են Հայաստանի հանդեպ արտաքին քաղաքականության ուղեգծի տարրեր: Ռուսական մենթալիտետին բնորոշ «сам дурак»-«ինքդ ես հիմար» արտահայտության ոգուն շատ հարիր: Ռուսաստանյան որոշ «վայ քաղաքագետներ» բազմիցս փորձել են տողերիս հեղինակին համոզել, թե միևնույն է, Ռուսաստանը իր անվտանգային պաշտպանական գծերը կկառուցի Կովկասյան լեռնաշղթայի գծով, թե՞ Արաքս գետով: Եվ ոչինչ, որ բարեկամ Իրանի հետ կոմունիկացիաները հայտնվում են լուրջ սպառնալիքի տակ: Նույն կրավորական արտաքին քաղաքական ուղեգիծը որդեգրվել է նաև Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ: Ընդ որում, ամենախոցելիներն են աշխարհագրորեն ամենամոտ Ղազախստանը և Ղրղզստանը: «Տափաստանային ճակատ» չբացելու խոստում ոչ ոք Ռուսաստանին չի տվել: Առաջիկա 10-15 տարում այս տարածաշրջանում Ռուսաստանը լուրջ խնդիրներ կունենա: Ազդանշանները մենք տեսնում ենք ազգայնական տրամադրություններ ունեցող ռուս որոշ քաղաքական գործիչների հայտարարություններում, որոնք արագ լռեցվում են: Ո՛չ Իրանը, ո՛չ էլ Չինաստանը որևէ ձևով ի վիճակի չեն լցնելու «հոգնածության» տարրեր դրսևորող Ռուսաստանի դերակատարության բացը:

Ռուսաստանի քաղաքագիտական շրջանակների սթափ ներկայացուցիչների մոտ կա համոզմունք, որ ներկա պայմաններում Ռուսաստանը ոչ միայն չպետք է նվազեցնի իր ներկայությունը ԱՊՀ «հարավային գոտում», «փափուկ փորատակում», այլև պետք է ավելացնի:

Անվտանգության ռազմական երաշխիքները պետք է լրացվեն քաղաքական երկխոսության ինտենսիվացմամբ, եթե կուզեք, այդ երկրների ներքաղաքական կյանքին ավելի ակտիվ միջամտությամբ: Ռուսաստանի կեցվածքն արդեն ստեղծել է տպավորություն, որ Մոսկվան անտարբեր է դարձել իր գերակայությունը (պատրոնաժը) ընդունող երկրների խնդիրների նկատմամբ: Սրա համար հետո շատ թանկ գին է վճարվելու: Ռուսաստանը, իհարկե, ձերբազատվում է Խորհրդային Միությունը վերականգնելու գայթակղությունից: Մյուս կողմից՝ Ռուսաստանի համար շատ կարևոր է, որպեսզի Խորհրդային Միության փլուզում կոչվող աղետը չընկալվի որպես Ռուսաստանի ուժային հնարավորությունների ներքին և արտաքին գնահատման չափորոշիչ: Պետք է խոստովանել, որ Ռուսաստանը եզակի է հենց նրանով, որ 19-րդ դարում գոյություն ունեցած եվրոպական կայսրություններից միակն է, որ 21-րդ դարում համարյա անփոփոխ պահպանել է իր ներուժը, առաջին հերթին՝ նյութական ռեսուրսները և ուժային լծակները: 1991-ի աշխարհաքաղաքական աղետը Ռուսաստանի ֆիզիկական չափերը նվազեցրել է, սակայն չի զրկել գերտերության կարևորագույն ատրիբուտներից, ինչպես դա տեղի է ունեցել մյուսների հետ: Ինչպես նկատել է Ռուսաստանի և ԽՍՀՄ՝ պատմության խոշորագույն մասնագետ, բրիտանացի պատմաբան Դոմինիկ Լիվենը, խորհրդային կայսրության արտաքին կոնտուրից (ուրվագծից) ձերբազատումը, ինչը, ի դեպ, Լիվենը համարում է, որ ավելի շուտ բեռ էր, քան առավելություն, ոչ մի չափով չնվազեցրեց Ռուսաստանի ռեսուրսային պաշարները և ուժային հնարավորությունները: Այս առանձնահատկությունները շարունակում են որոշիչ մնալ Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղեգծի համար նաև այսօր: Ինչպես և 50 տարի առաջ, Ռուսաստանը նվազագույն չափով ունի միջազգային կարգուկանոնի շրջանակներին ենթարկվելու կարիքը և ինչպես նախկինում, պատրաստ է պատասխանատվություն կրել միայն այն տարածքների համար, որոնք իր անմիջական պատասխանատվության գոտին են համարվում, և որպես այդպիսիք, ընդունվում աշխարհի բոլոր խոշոր խաղացողների կողմից: Ավանդաբար Ռուսաստանը (իմա. ԽՍՀՄ-ը) դուրս է եկել իր շրջանակներից և հայտնվել, ասենք, Լատինական Ամերիկայում (Կուբա, Նիկարագուա) կամ Աֆրիկայում (Եթովպիա, Անգոլա, Մոզամբիկ, Կոնգո) միայն ի պատասխան արևմտյան երկրների ագրեսիվ ոտնձգությունների և դա օգտագործել է որպես իր տարածքից անկոչ եկվորներին դուրս մղելու գործիքակազմ: Այդ առումով Չինաստանի կամ Հնդկաստանի հետ հույս կապող հայ հասարակական–քաղաքական շրջանակները պետք է պարզ գիտակցեն, որ երկու երկրներն էլ նախկին բրիտանական գաղութներ են և ոչ միայն չեն հաղթահարել գաղութային երկիր լինելու բարդույթը, այլև շատ երկար ժամանակ կմնան իրենց համար անգլոսաքսոնների գծած շրջագծի սահմաններից ներս:

Վերադառնանք հետխորհրդային տարածք: Հայաստանի համար ճակատագրական 2020 թվականը հետխորհրդային տարածքում բերեց աշխարհաքաղաքական մի քանի հանգրվանների: Առաջին՝ ավարտվեց բելոռուսական պետության զարգացման մի կարևոր շրջափուլ: Երկրորդ՝ ռազմական ճանապարհով փորձ կատարվեց լուծել արցախյան խնդիրը: Երրորդ՝ Ղրղզստանում փոխվեց քաղաքական համակարգը: Կարևոր է հասկանալ, որ ներկա պատմական փուլում Ռուսաստանի արձագանքը այս իրադարձություններին շատ դեպքերում պայմանավորված է ոչ թե նրանով, թե մարտահրավերները որքանով են վտանգավոր ոչ իր հովանավորության տակ գտնվող աշխարհաքաղաքական համակարգի օբյեկտների համար, այլ որքանով են դրանք հարվածում կոնկրետ Ռուսաստանի ազգային անվտանգությանը: Դաշնակիցների նկատմամբ կրավորական, երբեմն քամահրական վերաբերմունքն էլ շատ դեպքերում պայմանավորված է նրանով, որ Ռուսաստանը իր ռազմական ներուժով, առավել ևս լինելով հզոր միջուկային տերություն, ի վիճակի է իրեն նետված մարտահրավերները դիմագրավել միայնակ: Ակնհայտ է, որ Հայաստանը և Բելառուսը Ռուսաստանի համար ոչ միայն ՀԱՊԿ-ի շրջանակների ձևական դաշնակիցներ են: Այս երկու երկրների առանձնահատուկ լինելու հանգամանքը բազմիցս շեշտվել է Ռուսաստանում՝ բոլոր մակարդակներով: Երկու երկրներն էլ այսօր գտնվում են միջազգային զարգացումների և իրադարձությունների կիզակետում՝ ցայտուն արտահայտված միջազգային ենթատեքստով և ամենատարբեր ակտորների ակտիվ ներգրավվածությամբ, ի տարբերություն, ասենք, ղրղզական իրադարձությունների, որոնք միջազգային ներգգրավվածության նման տարրեր չէին պարունակում: Հետխորհրդային ամբողջ շրջանում երկու երկրներն էլ եղել են Ռուսաստանի ռազմա-

կան դաշնակիցները և Մոսկվայի համար լուրջ խնդիրներ չեն հարուցել: Բայց այսօր և՛ Հայաստանի, և՛ Բելառուսի ներքին կայունությունը, և՛ միջազգային դրությունը լուրջ հարցականի տակ են: Փոխվում է դեռևս 1990-ականների երկրորդ կեսին ձևավորված և Ռուսաստանի համար շատ հարմարավետ ստատուսը, երբ Ռուսաստանն առանց լուրջ ջանքերի լուծում էր իր խնդիրները և՛ Մինսկում, և՛ Երևանում: Նոր իրավիճակին Ռուսատանը շատ ցավոտ և ինչ-որ չափով անպատրաստ է արձագանքում: Որքան էլ Ռուսաստանում չնկատելու տան Հայաստանի և Բելառուսի կարգավիճակի ցանկացած փոփոխություն, դիտորդների կողմից երևույթը դիտարկվում է որպես Ռուսաստանի ազդեցության թուլացման ցուցիչ: Երկու դեպքում էլ Ռուսաստանի ազդեցության գոտիներ ներթափանցման փորձ անող երկրները՝ Լեհաստանը և Թուրքիան, ֆուտբոլային տերմինաբանությամբ՝ երկրորդ դիվիզիոնի խաղացողներ են, որոնք Ռուսաստանին զիջում են բոլոր ակնհայտ չափորոշիչներով և, թերևս, այդ պատճառով է, որ այս դաշտում քաղաքական բանավեճը ավելի շուտ զգացմունքային է, քան թե քաղաքական կամ ռազմական հակամարտության բնույթ է կրում: Տարօրինակ տրամաբանությամբ Ռուսաստանի, ավելի ստույգ՝ պերիֆերիայի նկատմամբ միջազգային քաղաքականությունը վերադառնում է 17-18- րդ դարերի աշխարհաքաղաքական իրականությանը, երբ Ուկրաինան մասնատված էր, իսկ լիարժեք չուժեղացած Ռուսաստանը դիմակայում էր Լեհաստանին և Օսմանյան կայսրությանը: Հիշենք, սակայն, որ արդեն 18-րդ դարավերջին Լեհաստանը կորցրեց իր անկախությունը, իսկ Օսմանյան կայսրությունը միջազգային քաղաքականության մեջ դարձավ ոչնչություն (Եվրոպայի հիվանդ մարդ՝ ըստ Մարքսի): Այսօր հիշյալ երկու երկրների գիշատիչ պահվածքը պայմանավորված է Ռուսաստանի երևակայական թուլությամբ: Թուլություն, որն առնվազն չի համապատասխանում Ռուսաստանի ղեկավարության հավակնություններին գլոբալ քաղաքականության լուրջ դերակատար լինելու առումով, էլ չասած, որ «թույլ» Ռուսաստանն իր դերակատարությունը որոշիչ է համարում եվրասիական տարածաշրջանում Լիսաբոնից մինչև Տոկիո իր հանգուցային դիրքի առումով: Ի՞նչ թուլության մասին է խոսքը: Հիմա փորձենք հասկանալ Ռուսաստանի մոտեցումների տարբերությունը բելառուսական և արցախյան իրադարձություններին, ինչը առաջին հերթին պայմանավորված է Ռուսաստանի ազգային անվտանգությանը սպառնացող հանգամանքներով:

Առաջին դեպքում Ռուսաստանը չի կարող թույլ տալ իր արևմտյան սահմաններին հերթական ՆԱՏՕ-ական ամրակետի (ֆորպոստի) ձևավորումը և հանուն դրա պատրաստ է գնալ վճռական գործողությունների, այդ թվում՝ միջուկային զենքի տեղակայմանը: Այո՛, իր հայտարարություններով և գործողություններով Լուկաշենկոն բազմաթիվ առիթներ է տվել, որպեսզի Ռուսաստանը բավական հաճախ կասկածի տակ դնի նրա լոյալությունը: Չնայած, խոստովանենք, որ Բելառուսի նախագահը երբեք լուրջ մարտահրավեր չի նետել իր արևելյան դաշնակից-ազգակցին:

Հայ-ադրբեջանական թնջուկի դեպքում իրավիճակը այդքան էլ ակնհայտ չէ: Հայաստանը և Ադրբեջանը Ռուսաստանում համարժեքորեն ընկալվում են որպես բարեկամ երկրներ: Երկու ժողովուրդներն էլ Ռուսաստանում ներկայացված են բազմաքանակ համայնքներով: Մոսկվայում ապրած և սովորած Ալիևը ևս ընկալվում է որպես «մեր մարդ» (наш человек): Գաղտնիք չէ, որ Հայաստանի ներկա ղեկավարության մի շարք որոշումներ Մոսկվայում արժանացել են, մեղմ ասած, ոչ միանշանակ արձագանքի: Որակապես տարբերվում է նաև թնջուկների միջազգային ենթատեքստը: Ադրբեջանի հարձակումը դիվանագիտական և ռազմական դաշտերում միանշանակ սպասելի պաշտպանեց Թուրքիան: Լինելով ՆԱՏՕ-ի անդամ երկիր՝ Թուրքիան իր հարուցած խնդիրներով, ամբիցիաներով հաստատ չի տեղավորվում Եվրոպայում ԱՄՆ-ի «նորմալ» դաշնակիցների շարքում: Եվրոպական համարյա բոլոր երկրների հետ Թուրքիան ունի խնդիրներ, իսկ ԱՄՆ-ից հետո արևմտյան երկրորդ խոշոր միջուկային տերության՝ Ֆրանսիայի հետ հարաբերությունները գրեթե թշնամական են: Թուրքիայի հետ ռազմական բախում Մոսկվայում հաստատ չեն ենթադրում, իսկ պարբերաբար մանր-մունր բախումները Սիրիայում միշտ էլ ավարտվել են դիվանագիտական այմանավորվածություններով: Ռուսաստանի համար Արցախի հարցը ո՛չ անվտանգային է, ո՛չ էլ՝ գոյաբանական: Այն ավելի շուտ դիվանագիտական համագործակցության, խաղերի և, ներողություն, մանրադրամի դաշտում է: Առավել ևս, որ Մինսկի խումբը Ռուսաստանում միշտ էլ ընկալվել է որպես իր ազդեցության գոտի արևմտյան ներթափանցման գործիք:

Միջազգային այդ ձևաչափը գոյություն ունի 1992 թվականից և Ռուսաստանում ասոցացվում է որպես իր նորագույն պատմության ամենաթույլ շրջանի դիվանագիտական մնացուկ (արտեֆակտ): Ստեղծված

իրավիճակում Ռուսաստանը կատարում է արտաքին մարտահրավերների իր դասակարգումը: Արցախյան խնդիրը Ռուսաստանի դեպքում պարունակում է ընդամենը դիվանագիտական խաղի տարրեր: Բելառուսական խնդրի հանգուցալուծման ճանապարհին Ռուսաստանը արտաքին ակտորների կարիք չէր զգում, քանի որ հասկանում էր, որ դրսից ցանկացած միջամտություն կբերի իր համար բալանսի անբարենպաստ փոփոխության: Իսկ արցախյան խնդրում Թուրքիայի հետ համագործակցությունը, ռուսների կարծիքով, ընդհակառակը, բերեց նրան, որ սառեցվեց ԱՄՆ-ի և Եվրոպայի՝ հետխորհրդային տարածքի վրա ազդեցության կարևորագույն լծակներից մեկը: Հրաժարվելով արցախյան խնդրում պատասխանատվությունից՝ Ռուսաստանը ավելի շատ շահում է, քան կորցնում: Ժամանակակից պայմաններում դժվար է ակնկալել, որ Ռուսաստանը կշարունակի նույն կայսերապաշտական քաղաքականությունը, ինչպես նախորդ դարաշրջաններում: Ռուսաստանը, ի տարբերություն Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի, Թուրքիայի կամ Ֆրանսիայի այսպես, թե այնպես պահպանեց ակտիվ զավթողականության շրջանի իր գլխավոր ձեռքբերումը՝ Ուրալից մինչև Խաղաղ օվկիանոս ընկած հսկայական տարածությունը: Ռուսները գտնում են, որ այդ տարածքները Ռուսաստանի միակ ձեռքբերումն են, ինչը ռուսներին օգուտ է բերել, ոչ թե կորուստներ, ինչը չի կարելի ասել Մերձբալթիկայից մինչ Պամիր ընկած տարածքների մասին: Հայաստանում պետք է հասկանան, որ իրենց խնդիրների լուծմանը ռուսական շահագրգիռ մասնակցություն կարող են ակնկալել միայն Ռուսաստանի անվտանգության համար ծայրահեղ կարևորություն ներկայացնող երկրները: Հետխորհրդային տարածքում կա ընդամենը երկու այդպիսի երկիր՝ Ղազախստանը և Բելառուսը: Տողերիս հեղինակը արդեն առիթ ունեցել է անդրադառնալու գերտերությունների կողմից իրենց դաշնակցային պարտավորությունների կատարման կամ դրանցից հրաժարվելու ֆենոմենին: Քաղաքագիտության մեջ այժմեական է դառնում հարցը, թե ինչո՞ւ գերտերությունը պետք է փնտրի դաշնակիցների, եթե ինքնուրույն լուծում է իր անվտանգային, ինչն էլ նշանակում է, նաև իր անվտանգ զարգացման խնդիրները: Չի կարելի չնկատել, որ միջազգային անվտանգային ինստիտուտները խոր ճգնաժամի մեջ են, և որքան ավելի հաճախ մեծ տերությունները խնայեն իրենց ուժերը՝ կապված միայն իրենց համար կոնկրետ առանձնացված առաջնահերթությունների հետ, այնքան քիչ է հույսը, որ առաջացող մարտահրավերներին ընդհանուր ուժերով դիմագրավելու կամք կդրսևորվի: Որքան էլ երրորդ աշխարհի երկրները դժգոհեն, միջուկային ակումբի առաջատար 5 երկրները չեն կարող ունենալ դաշնակիցներ՝ ապրիորի: Նրանց վերաբերմունքը մյուս երկրների նկատմամբ միշտ էլ կձևավորվի ռազմական առավելության անմրցելի դիրքերից: Ինչը Ջորջ Օրուելի (անգլիացի գրող Էրիկ Բլեր) խոսքերով՝ ստեղծում է պերմանենտ «սառը պատերազմի» նախադրյալներ նրանց և աշխարհի մնացյալ երկրների միջև: ԱՄՆ-ի դաշինքը Մեծ Բրիտանիայի և ՆԱՏՕ-ի իր մյուս դաշնակիցների հետ հիմնված է այդ երկրի բացարձակ ռազմական գերակայության վրա և հենց այդ պատճառով է, որ Հյուսիսատլանտյան դաշինքում կենտրոնական հարցը ստեղծման օրվանից ի վեր մեկն է՝ որքանով է Վաշինգտոնը պատրաստ իր վրա վերցնել այն ռիսկերը, որոնք նպաստելու են մնացած մասնակիցների շահերի իրացմանը: Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան 1956 թվականին, Ֆրանսիան Ալժիրում և Հնդկաչինում գաղութային պատերազմների ընթացքում, Անգլիան Ֆոլկլենդյան կղզիների համար Արգենտինայի հետ պատերազմում ամբողջ ծավալով գիտակցեցին, որ իրենց գլխավոր դաշնակիցը իրենց կաջակցի միայն այն դեպքերում, երբ դա 100 տոկոսով կհամապատասխանի իր ազգային շահերին: Տրամաբանական հարց է, թե Հայաստանը, որպես կրտսեր դաշնակից, կարո՞ղ է ակնկալել Ռուսաստանի աջակցությունը այս դժվար օրերին: Այո՛, իհարկե: Բայց ընդամենը մեկ դեպքում: Եթե միջազգային ենթատեքստը ձևավորվի հօգուտ Հայաստանի, և կոնկրետ մեր տարածաշրջանում Ռուսաստանի շահերը գերակա լինեն, և Հայաստանին օգնելը նպաստի իր ազգային անվտանգային համակարգի էլ ավելի ուժեղացմանը: Հետևություն. ռուսական ռազմական ներկայությունը Արցախում պայմանավորված կլինի Ռուսաստանի և Ադրբեջանի միջև ձեռք բերվելիք համաձայնություններով: Ուրիշ որևէ գործոն չի աշխատելու: Մենք իրավունք չունենք բացարձակացնել Արցախում ռազմական ստորաբաժանում պահելու ռուսական ցանկությունը: Պետք է արձանագրենք, որ նկատելի է մեծ տերությունների միտումը իրենց սահմաններից դուրս ռազմական ստորաբաժանումների կրճատման առումով: Ռուսաստանը բացառություն չէ: Մենք չենք կարող նշել որևէ չորրորդ երկիր, որի հետ միությունը կարող է ունենալ կենսական նշանակություն Ռուսաստանի, ԱՄՆ-ի կամ Չինաստանի համար: Ավելին, աշխարհն այսօր արդեն կախված չէ ինստիտուցիոնալ համակարգերից: Ավելի շատ դերակատարություն է ձեռք բերում ռազմական լուծումների կործանարարության գիտակցումը: Ձևական դաշնակիցների առկայությունը կամ բացակայությունը նույնպես փոխում է այս իրավիճակի բնույթը:

2020 թվականի աշնանը հայկական ամենամեծ պատրանքն այն էր, որ Ռուսաստանը պետք է պայքարի Հայաստանի շահերի համար, սակայն ճշմարտությունն այն է, որ Հայաստանը պետք է պայքարի տարածաշրջանում Ռուսաստանի շահերը պաշտպանելու համար: Երկիրը միայն սեփական հնարավորություններին ռացիոնալ գնահատական տալու դեպքում կարող է ճիշտ գնահատել իր տեղը գերտերության շահերի համակարգում, որպեսզի հասնի նրան, որ սուբյեկտիվ ինքնագնահատականը ձգտի օբյեկտիվ իրականության գոնե

արտացոլմանը: Արդեն ասվել է, որ իրավիճակային (սիտուատիվ) դաշնակիցների առկայությունը կարող է ավելի շատ նպաստել նույն Ռուսաստանի ազգային անվտանգության խնդիրների լուծմանն այն դեպքում, երբ ինստիտուցիոնալ դաշնակիցները այդ առումով խնդիրներ հարուցեն: Հետխորհրդային տարածքում Ռուսաստանի անցումը նոր քաղաքականության հանկարծակի տեղի չունեցավ: 2014-2015 թվականների դրամատիկ իրադարձությունները չդարձան Խորհրդային Միության վերականգնման սկիզբը: Այն ժամանակ չկար գիտակցումը, որ Ռուսաստանը, լուծելով Ղրիմի հարցը, լուծում է ընդամենը սեփական անվտանգության խնդիրը, ոչ թե ստեղծում է անվտանգային գոտի բոլորի համար: Եվ այն ժամանակ, և այսօր Ռուսաստանը չի մտահոգվել և չի մտահոգվելու ուկրաինացի ժողովրդի ճակատագրով: Ժամանակն է հասկանալ, որ մարդկության պատմության ամբողջ ընթացքում ոչ մի գերտերություն իր առջև չի դրել և չի լուծել ալտրուիստական (այլասիրական) խնդիրներ: Համարյա միաժամանակ Ռուսաստանը ընկալեց, որ Չինաստանի ուշադրությունը դեպի Կենտրոնական Ասիա իրեն ոչնչով չի սպառնում: Դրանով կարելի է բացատրել Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը: 2020 թվականին Թուրքիան հսկայական դերակատարություն ունեցավ Այսրկովկասում ուժերի հարաբերակցության փոփոխության գործում: Մենք պետք է գիտակցենք, որ արցախյան հարցի լուծման ներկա ընթացքը, ստեղծված միջազգային պայմանները շատ ավելի հարմարավետ են Ռուսաստանի համար, քան մինչև 2020 թվականի սեպտեմբերը: Հիմա Ռուսաստանը այստեղ տեղակայել է իր խաղաղապահներին և ստանձնել Բիսմարկի խոսքերով՝ «արդար մակլերի» դերը:

Ցանկանում է դա Էրդողանը, թե ոչ, սակայն իր ղեկավարած Թուրքիան, մնալով ՆԱՏՕ-ի անդամ, ներքաշվել է իր եսասիրական շահերը հետապնդող Ռուսաստանի ուժային քաղաքականության ուղեծրի մեջ: Պատրանքներից պետք է հրաժարվել: Հարավային Կովկասը շարունակում է մնալ միջազգային փոխազդեցության գոտի, որտեղ մասնակիցների քանակը սահմանափակված է ռուսական շահերի նկատմամբ իրենց մտադրություններով կամ դիտավորություններով: Մերձդնեստրը Ռուսաստանի համար նշանակություն ունի միայն ՆԱՏՕ-ում Ռումինիայի դերի ռազմական պլանավորման առումով: Կենտրոնական Ասիան Ռուսաստանի համար Չինաստանի հետ համագործակցության տարածք է, ինչը բացառում է Արևմուտքի ակտիվ ներթափանցումը և իսլամ արմատականների ակտիվացումը: Ռուսաստանի շուրջ գտնվող կամ նրա ազդեցության ենթակա երկրների քաղաքական ռեժիմները, Ռուսաստանի հետ հարաբերությունների ինստիտուցիոնալ ձևաչափը Մոսկվայի համար որևէ նշանակություն չունեն, ամեն ինչ որոշվում է, եթե այդպես կարելի է ասել, կոնտենտ վերլուծությամբ: Օրինակ՝

Ղրղզստանում պետական յուրաքանչյուր հեղաշրջում ուղեկցվում է նոր իշխանությունների կողմից ռուսական առաջնահերթությունների և շահերի անսասանելիության վերաբերյալ սրտաճմլիկ երդումներով: Ընդ որում, բնավ չպետք է հուսալ, որ Ռուսաստանի հրաժարումը որևէ մեկին հովանավորելուց կամ որևէ մեկի հետ «հատուկ հարաբերություններ» զարգացնելուց չմիջամտելու երաշխիք է այն իրավիճակներում, որոնք վտանգ կներկայացնեն ռուսական շահերի տեսանկյունից: Հայաստանի դեպքում, եթե Փաշինյանը նույնիսկ կես ժամը մեկ հայտարարի իր նվիրվածությունը ռուսական գերակա շահերին, «կոնտենտ վերլուծության» ձևաչափում ինքը քննությունը չի անցել հենց առաջին իսկ պահից: Պատրանք է, որ Թուրքիան, էլ չասած՝ խղճուկ Ադրբեջանը, ի զորու են առանց Ռուսաստանի գիտության և թողտվության հատել այն կարմիր գծերը, որոնք նախանշել է Ռուսաստանը Հարավային Կովկասում: Հայաստանի խնդիրն է ոչ թե փորձել արևմտյան ներգրավվածության ավելացումով հարուցել Ռուսաստանի ավելի լուրջ դժգոհությունը, այլ ստիպել, որպեսզի և Թուրքիան, և Ադրբեջանը հատեն կարմիր գծերը: Մաթեմատիկայի լեզվով ասած՝ դրա համար անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայմանն այն է, որ պետք է դադարել Ռուսաստանի հետ խոսել վերջնագրերի լեզվով, ինչը պարբերաբար անում է Հայաստանի ԱԽՔ-ը, չփորձել անընդհատ կասկածի տակ դնել Վլադիմիր Պուտինի նախաձեռնությամբ ստեղծված ինտեգրացիոն կառույցները, բանակի և ուժի նկատմամբ միշտ արտակարգ հարգանք դրսևորող Ռուսաստանի աչքի առաջ առիթ-անառիթ չմրոտել իրենց իսկ բանակի նմանակին՝ Հայոց բանակին և հնարավորինս քիչ նվնվալ՝ սեփական անզորությունը բարդելով ուրիշների վզին: Հայերս պետք է մեր ականջին օղ անենք մի պարզ ճշմարտություն. «ռնգեղջյուրը վատ տեսողություն ունի, սակայն դա նախևառաջ ոչ թե ռնգեղջյուրի խնդիրն է, այլ շրջապատի»: ■

Լեռնային Ղարաբաղի հանձնումը դժոխքի դարպասներ կբացի Ռուսաստանի համար

Միխայիլ Ալեքսանդրով
Քաղաքական գիտությունների դոկտոր, ռազմաքաղաքական հարցերի փորձագետ

Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակի առիթով Ռուսաստանի և Ադրբեջանի միջև վերջերս տեղի ունեցած խոսքակռիվը հանգեցրել է նրան, որ ռուսական փորձագիտական միջավայրում սկսել են մեկնաբանություններ հայտնվել ռուս-ադրբեջանական հակասությունների՝ զինված հակամարտության վերաճելու հավանականության մասին: Օրինակ՝ կարելի է առանձնացնել Մաքսիմ Յուսինի այս տարվա հուլիսի 18-ի հոդվածը «Կոմերսանտում»: Նա մասնավորապես գրում է. «Բաքվից ավելի վճռական հնչող հայտարարությունները կասկած չեն հարուցում, որ նախագահ Ալիևը և նրա թիմը պատրաստ են արագացնելու իրադարձությունների զարգացումը և, հնարավոր է՝ չեն սպասի հինգ տարվա լրանալուն, որի ընթացքում կարգուկանոնը և ստատուս քվոն Լեռնային Ղարաբաղում պետք է ապահովեն ռուսաստանցի խաղաղապահները…. չի բացառվում այն տարբերակը, որ նրանց ներկայությունը չի խանգարի ադրբեջանական բանակին՝ իրականացնելու Ստեփանակերտի և հարակից տարածքների զտումը «ռազմական կազմավորումների մնացորդներից»»:

Իրավիճակի նման զարգացում ես կանխատեսել էի դեռևս անցյալ տարի: Սակայն լինելով ռազմաքաղաքական կանխատեսման և պլանավորման ոլորտի մասնագետ՝ ես ոչ միայն արձանագրեցի նման հակամարտության հնարավորությունը, այլև առաջարկեցի Ռուսաստանի ուժային պատասխանի կոնկրետ տարբերակ, ինչը կստիպեր Բաքվի ռեժիմին՝ հրաժարվելու Լեռնային Ղարաբաղի բնակչության և ռուս խաղաղապահների նկատմամբ ագրեսիայից: Հիշեցնեմ, որ այս կանխատեսման համար ինձ հեռացրին աշխատանքից, քանի որ ՄԳԻՄՕ-ի (Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտ (խմբագրություն)) ռեկտոր Տորկունովը, որն Ադրբեջանի նախագահ Ալիևի հին բարեկամն է, իմ գնահատականը համարեց «ոչ պրոֆեսիոնալ»: Այնինչ, իմ կանխատեսումն իրականանում է:

Վերջին իրադարձությունների հետ կապված՝ հարկ համարեցի ներկայացնել իրավիճակի իմ վերլուծությունը և դիտարկել Ռուսաստանի վարքագծի հնարավոր սցենարները: Այս թեման գերարդիական է թվում, քանի որ հայտնվել են բազմաթիվ հրապարակումներ, որոնցում Ռուսաստանը դիտարկվում է որպես ինչ-որ տկար պետություն, որն ի վիճակի չէ պաշտպանելու իր շահերը և կատարելու իր միջազգային պարտավորությունները: Ուստի, իբր նրան այլ բան չի մնում, քան խաղաղ հեռանալ Լեռնային Ղարաբաղից՝ ճակատագրի քմահաճույքին թողնելով ավելի քան 120 հազար ղարաբաղցի հայերին, որոնց այդ դեպքում սպասվում է անխուսափելի էթնիկ զտում: Յուսինի հոդվածի կանխատեսմամբ. «Իսկ ինչ վերաբերում է Կրեմլին, ապա նրա արձագանքից Բաքվում, կարծես, առանձնապես չեն երկյուղում: Այնտեղ, հավանաբար, կարծում են, թե Ռուսաստանը չափազանց խորն է խրվել Ուկրաինայում և չունի ո՛չ ուժ, ո՛չ հնարավորություն, ո՛չ ցանկություն ևս մեկ ճակատ բացելու Հարավային Կովկասում», – գրում է նա»:

Այս կապակցությամբ ցանկանում եմ ընթերցողներին հիշեցնել, որ Ռուսաստանը միջուկային գերտերություն է, ուստի ունի բավարար ուժ և միջոցներ ամբողջ Արևմուտքը ոչնչացնելու համար, իսկ ինչ-որ Ադրբեջանից գլուխ հանելը նրա համար ընդհանրապես խնդիր չէ: Ուստի ամեն ինչ կախված է բացառապես Ռուսաստանի ղեկավարության քաղաքական կամքից և նրա ցանկությունից կամ ցանկության բացակայությունից՝ կատարելու Լեռնային Ղարաբաղի հանդեպ Ռուսաստանի ստանձնած պարտավորությունները՝ համաձայն 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության:

Այս համատեքստում կարելի է դիտարկել Ռուսաստանի վարքագծի երկու սցենար: Առաջին սցենարը պայմանականորեն կարելի է անվանել «ագրեսիայի սանձում», իսկ երկրորդը՝ «Անդրկովկասից հեռացում»: Առաջին սցենարի համաձայն՝ Ռուսաստանը օգտագործում է ուժային միջոցների լայն շրջանակ՝ զսպելու Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի դեմ ագրեսիայից: Եթե չստացվի ետ պահել, ապա հետ մղել նման ագրեսիան և Ադրբեջանին խաղաղություն պարտադրել: Ընդ որում, կիրառվող ուժերը բոլորովին էլ չեն սահմանափակվի միայն Լեռնային Ղարաբաղի ռուսական խաղաղապահ զորակազմով:

Մոռացկոտ հեղինակներին հիշեցնեմ, որ Գյումրիում է գտնվում ռուսական ռազմաբազան, որն ի զորու է աջակցելու ռուսական խաղաղապահ զորախմբին: Այդ բազայի քանակն այնքան էլ մեծ չէ, բայց այն ունի սպառազինության ժամանակակից համակարգեր, մասնավորապես՝ «Իսկանդեր» հրթիռներ, որոնք հաշված րոպեների ընթացքում կարող են խոցել նախանշված թիրախները: Երևանում տեղակայված են նաև մի քանի տասնյակ ռուսական ինքնաթիռներ, որոնք կարող են գրոհել ագրեսորի զորքերի վրա: Իսկ Հայաստանում ռուսական ՀՕՊ համակարգը շատ ավելի ժամանակակից և արդյունավետ է, քան հայկական ՀՕՊ-ը: Բոլորին են հայտնի ռուսական «Կալիբր», «Կինժալ», «Իքս-101» հեռահար հրթիռները, որոնք ունակ են խոցելու ագրեսորի առանցքային օբյեկտները Ռուսաստանի տարածքից կամ Կասպից ծովի ջրային տարածքից:

Հասկանալի է, որ Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահներն անմիջապես կստանան Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի աջակցությունը: Միասին 2000 մարդուց ավելի կլինեն: Իսկ մի քանի ժամից խաղաղապահներին օգնության կհասնեն Գյումրիի ռուսական ռազմաբազայի ցամաքային զորքերն ու Հայաստանի զինված ուժերի կոնտինգենտները:

Ադրբեջանը չի կարող օգնություն ակնկալել Արևմուտքից, քանի որ այնտեղ նրա օգտին չկա այնպիսի կոնսենսուս, ինչպիսին կա Ուկրաինայի նկատմամբ: Ընդհակառակը, այդ դեպքում Արևմուտքում հայամետ տրամադրությունները շատ ավելի ուժեղ կլինեն, քան ադրբեջանամետ տրամադրությունները:

Միակ երկիրը, որը կարող է օգնություն ուղարկել Ադրբեջանին, կլինի Թուրքիան: Բայց գործնականում այդ ամենը կլինի չափազանց դժվար: Ռազմական բեռների փոխադրումը հնարավոր է միայն Վրաստանի տարածքով: Փաստ չէ, որ Վրաստանը կհամաձայնի թուրքական ռազմական բեռների տարանցմանը Ադրբեջան: Բանն այն է, որ դեպի ադրբեջանական սահման տանող երկու ճանապարհներից յուրաքանչյուրն անցնում է Հարավային Օսիայի և Հայաստանի տարածքից հրետանային զենքերի, համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի և հեռահար ականանետերի խոցման շառավղով: Եթե Վրաստանին հստակ ազդանշան ուղարկվի, որ սպառազինության փոխադրումները կգնդակոծվեն, ապա նա, ամենայն հավանականությամբ, նման տարանցում թույլ չի տա:

Կապիտուլյացիայի կողմնակիցների վերջին փաստարկն էլ Թուրքիայի հնարավոր ռազմական միջամտությունն է հակամարտությանը: Այստեղ մենք պետք է անմիջապես բացատրենք թուրքերին, որ եթե նրանք հարձակվեն Հայաստանի վրա, ապա մենք կկիրառենք միջուկային զենք: Եվ թուրքական զորքերը Հայաստանի հետ սահմանին արագ կոչնչացվեն՝ նույնիսկ առանց հայկական բանակի հետ ռազմական գործողությունների մեջ մտնելու:

Այս կապակցությամբ ուզում եմ հիշեցնել, որ միջազգային լպիրշների ողջ ոհմակը, որը շրջապատել է Ռուսաստանին և պատրաստ է պատառ-պատառ անել այն, համարձակություն է ձեռք բերել բացառապես ռուսական իշխանությունների անհասկանալի գերզգուշության պատճառով: Եթե հակառակորդները հաստատ իմանան, որ մենք միջուկային զենք ենք օգտագործելու մեր շահերը պաշտպանելու համար և փոշի ենք դարձնելու նրանց, ոչ ոք մեր գործերին չի միջամտի: Այնպես որ, Ադրբեջանն ու նրա դաշնակից Թուրքիան այդ պայքարում հաղթելու շանսեր չունեն, եթե միայն Ռուսաստանը չցանկանա հեռանալ Անդրկովկասից, ինչպես Գորբաչովի ու Ելցինի ժամանակ մենք հեռացանք Արևելյան Եվրոպայից ու Մերձբալթյան երկրներից: Այդ ժամանակ այդ «վազքը դեպի խաղաղություն», ինչպես գիտենք, ավարտվեց շատ տխուր՝ ԽՍՀՄ փլուզմամբ և ՆԱՏՕ-ի՝ դեպի Ռուսաստանի սահմաններ դուրս գալով: Նմանատիպ իրադարձություններ տեղի կունենան նաև Լեռնային Ղարաբաղի պաշտպանությունից հրաժարվելու դեպքում: Այստեղ մենք մոտեցանք երկրորդ հնարավոր սցենարին, որը ես պայմանականորեն անվանեցի «հեռացում Անդրկովկասից»:

Լեռնային Ղարաբաղից ռուսական խաղաղապահ զորակազմի դուրսբերումը կհանգեցնի խաղաղ բնակչության փախուստին դեպի Հայաստան: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակը չի կարողանա երկար դիմադրել թվով գերազանցող թշնամուն և ստիպված կլինի կամ նահանջել Հայաստանի տարածք, կամ անցնել պատերազմ վարելու պարտիզանական մեթոդների: Ընդ որում՝ Լեռնային Ղարաբաղը կհայտնվի ադրբեջանական օկուպացիայի ներքո:

Այս ամենը կհանգեցնի հակառուսական տրամադրությունների կտրուկ աճին Հայաստանում, հատկապես՝ հայրենիքից վտարված ղարաբաղցիների շրջանում: Անդրկովկասում Ռուսաստանի ամենաամուր բաբեկամները միանգամից կվերածվեն թշնամիների: Հայաստանի հասարակությունը կպահանջի խզել Ռուսաստանի հետ դաշնակցային պայմանագիրը և դուրս գալ ՀԱՊԿ-ից, փակել Գյումրիում տեղակայված ռուսական ռազմակայանը: Կսկսվեն ռազմա-

կայանի շրջափակման ակցիաներ և սադրանքներ ռուս զինծառայողների դեմ: Այդպես եղել է արդեն Մերձբալթիկայում, ես դա լավ եմ հիշում:

Հայաստանի կառավարությունը կբավարարի այդ պահանջները, չեղյալ կհայտարարի Ռուսաստանի հետ դաշնակցային համաձայնագրերը և կպահանջի դուրս բերել ռուսական ռազմականները: Ադրբեջանի հետագա էքսպանսիայից պաշտպանվելու համար նա կդիմի ԱՄՆ-ին՝ իր տարածք ամերիկյան զորքեր մտցնելու խնդրանքով: Եվ ԱՄՆ-ը, որը շահագրգռված է Իրանի հետ պատերազմի համար պլացդարմ ստեղծելու հարցում, հաճույքով կանի դա: Իսկ Ադրբեջանին սիրաշահելու համար ամերիկացիները նրան ակնհայտ բոնուսներ կառաջարկեն: Նախ՝ Նախիջևանի և Ադրբեջանի տարածքի միջև, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» ստեղծումը, ինչի մասին վաղուց երազում է Բաքվի ռեժիմը: Այդ միջանցքը կգործի ամերիկյան զինվորականների վերահսկողության ներքո, ինչը լիովին կբավարարի Բաքվին, իսկ անելանելի վիճակում գտնվող Երևանը դա պարզապես «կուլ կտա»:

Երկրորդ՝ ամերիկացիները Բաքվին կխոստանան, որ Իրանի ջախջախումից հետո Ադրբեջանը պատկառելի կտոր կստանա Հյուսիսային Իրանից: Այդ բոնուսներն Ադրբեջանի համար ավելի ծանրակշիռ կլինեն, քան հայկական տարածքի մանր կտորների զավթումը, և Բաքուն կհամաձայնի Հայաստանի հետ սահմանը սահմանազատել ԽՍՀՄ ժամանակների քարտեզներով: Այս ամենից բացի՝ ամերիկացիներն Ադրբեջանին կպարտադրեն Իրանի դեմ համատեղ գործողությունների ռազմական համաձայնագիր և Կասպիայում ամերիկյան հետախուզական կենտրոնների ստեղծում՝ ծովային փոխադրումների վերահսկման համար: Իրանը հյուսիսից շրջապատված կլինի չորս պետությունների՝ Ադրբեջանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի և Իսրայելի թշնամական կոալիցիայով:

Դե, իսկ Ռուսաստա՞նը: Նա դուրս կմղվի Անդրկովկասից: Լեռնային Ղարաբաղը Բաքվի ռեժիմին հանձնելուց հետո Ալիևը հնարավոր է Պուտինին «շնորհակալություն» հայտնի, բայց Ռուսաստանի դաշնակիցը չի դառնա: ԱՄՆ-ի, Իսրայելի և Թուրքիայի թիմում խաղալը շատ ավելի նախընտրելի տարբերակ է ալիևյան ռեժիմի համար, քան Մոսկվայի հետ դաշինքը: Իսկ մատուցված ծառայությունը քաղաքականության մեջ ոչինչ չարժի: Ադրբեջանը շահագրգռված է ավելացնելու իր նավթագազային արտահանումը եվրոպական երկրներ և վերածվելու տարանցիկ հանգույցի Միջին Ասիայից և Չինաստանից համաշխարհային շուկա ապրանքներ տեղափոխելու համար՝ շրջանցելով Ռուսաստանը: Այս դեպքում նա Մոսկվայի համար մրցակից է, այլ ոչ թե դաշնակից:

Ի հավելումն ամերիկացիների առաջարկած վերը նշված բոնուսների՝ սա գերազանցում է Մոսկվայի ցանկացած առաջարկ: Այդ պատճառով Ռուսաստանը կկորցնի իր ազդեցությունը Անդրկովկասում, քանի որ նա այնտեղ հենման կետ չի ունենա՝ ի դեմս



Հայաստանի և նույնիսկ ի դեմս Լեռնային Ղարաբաղի՝ առանց Հայաստանի: Իսկ հեռանկարում Իրանի ջախջախումից հետո տեղի կունենա Անկարայի և Վաշինգտոնի համար այդքան բաղձալի «թյուրքական աղեղի» միակցումը, որն Անատոլիայից Ադրբեջանին միացած Իրանի հյուսիսային շրջաններով կանցնի Թուրքմենստան, այնուհետև՝ Ուզբեկստան և չինական սահման:

Պարտվելով Աֆղանստանում՝ ամերիկացիները Կենտրոնական Ասիա կվերադառնան որպես հաղթողներ՝ շնորհիվ ՌԴ ԱԳՆ-ի «հանճարեղ ստրատեգների», որոնք հետխորհրդային տարածքում պարտվեցին գրեթե ամենուրեք: Իսկ հիմա Ռուսաստանին տանում են էպիկական պարտության Անդրկովկասում: Ընդ որում, հարավային ուղղությամբ ռուսական հաղորդակցությունները, այդ թվում՝ «Հյուսիս-Հարավ» լայնորեն գովազդված միջանցքը, կհայտնվի ԱՄՆ վերահսկողության տակ և կփակվի: Այնուհետև կսկսվի ճնշումը Ռուսաստանի հարավային սահմանների վրա: Այդ ճնշումը կգործադրվի հզոր թյուրքական կոալիցիայի կողմից, որը կգործի Վաշինգտոնի հովանավորությամբ և ռազմական աջակցությամբ:

Լավ է, եթե մինչ այդ մենք կարողանանք հաղթանակով ավարտել պատերազմը Ուկրաինայում: Բայց նույնիսկ այդ դեպքում Ռուսաստանի համար ռազմավարական իրավիճակը կտրուկ կփոխվի դեպի վատը: Արևմուտքից մեզ կճնշի ՆԱՏՕ-ն, իսկ հարավից՝ թյուրքական կոալիցիան: Ռուսաստանը կկանգնի նոր լայնածավալ պատերազմի վտանգի առջև: Եվ այդ պատերազմում Ռուսաստանում մեզ կառաջնորդեն այն մարդիկ, որոնք արդեն հիմա առաջարկում են կապիտուլյանտ արարք գործել՝ հանձնել Լեռնային Ղարաբաղը: Բայց այս արարքը դժոխքի դարպասներ կբացի Ռուսաստանի համար: Իսկ գուցե ի սկզբանե այդպես էր մտածված, չէ՞ որ հինգերորդ շարասյունը իրապես գոյություն ունի: ■

https://dzen.ru/a/ZLhYR7Aka2g2vxeA?fbclid=IwAR2hnzKlVYx1v7qe1wNq5auWJhZnERlDPoS4SNx-XdRV-UT2gbNACDHJ7cA&utm_referer=l.facebook.com

(մուտք՝ 27.07.2023)

Ռուսերենից թարգմանությունը՝
Գայանե Մանուկյանի

Արցախ. գոյատևման պայքարը շարունակվում է

Տաթևիկ Աղաջանյան
Արցախ, լրագրող

Շարունակվում է Արցախի շրջափակումը, իսկ հունիսի 15-ից Քաշաթաղի (Լաչինի) միջանցքը փակ է նաև հումանիտար բեռնափոխադրումների համար: Ինչպես հայտնում է ՀՀ ԱԱԾ սահմանապահ ծառայությունը, հունիսի 15-ի առավոտյան Ադրբեջանի սահմանապահ ծառայության մի խումբ զինծառայողներ Հակարիի կամրջի ուղղությամբ առաջխաղացման փորձ են կատարել ՀՀ տարածքում դրոշ տեղադրելու նպատակով: Հայկական կողմի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ադրբեջանցի զինծառայողների առաջխաղացման փորձը կանխվել է:

Դեպքից հետո արգելվել են բոլոր տեսակի հումանիտար ուղևորափոխադրումներն ու բեռնափոխադրումները: Միայն հունիսի 25-ից վերականգնվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Արցախի գրասենյակի կողմից բուժառուների տեղափոխումը ՀՀ բժշկական կենտրոններ, ռուս խաղաղապահների շարժն արգելված է: Մինչ այդ, չնայած ապրիլի 23-ից Լաչինի (Քաշաթաղի) միջանցքում ապօրինի անցակետի տեղադրմանը և Արցախի քաղաքացիների հանդեպ ապօրինի հսկողական միջոցների կիրառմանը, ԱՀ կառավարությունը որոշել էր ՌԴ խաղաղապահ զորակազմի աջակցությամբ ու ուղեկցությամբ կազմակերպել սահմանափակ թվով մարդկանց երթևեկը միջանցքով: Ըստ տարածված հայտարարության՝ բոլորը հրատապ մարդասիրական՝ ներառյալ առողջական, հարազատի խնամքի, ընտանիքի հետ վերամիավորման կարիք ունեցող անձինք են:

Ինչպես նշվում է հաղորդագրության մեջ. «Արցախի Հանրապետության կառավարությունը ապօրինի է համարում 2022 թ. դեկտեմբերի 12-ից սկսված շրջափակումը և ապրիլի 23-ից ադրբեջանական անցակետի գոյությունը, ինչպես նաև Արցախի քաղաքացիների, մեքենաների ու բեռների տեղաշարժի հանդեպ հսկողական միջամտություններն ու այլ խոչընդոտները»: Նաև ընդգծվում էր. «Մարդասիրական խիստ սահմանափակ տեղաշարժը ոչ մի դեպքում չի կարող դիտարկվել որպես Արցախի շրջափակման ավարտ, քանի դեռ Լաչինի միջանցքում առկա են ադրբեջանական հսկողական միջամտություններն ու այլ խոչընդոտները»:

Հուլիսի 11-ին Ադրբեջանը հայտարարել է Լաչինի միջանցքով երթևեկության դադարեցման մասին՝ պատճառաբանելով, թե ԿԽՄԿ մեքենաները, իբր, մաքսանենգության փորձ են արել: Ադրբեջանական կողմը մեղադրել է ԿԽՄԿ-ին վստահությունը չարաշահելու մեջ. «Կարմիր Խաչի մեքենաներով Հայաստանից Լեռնային Ղարաբաղ ուղևորվող հայերը փորձել են ապօրինի բեռներ փոխադրել, դրանց թվում՝ ծխախոտ, բջջային հեռախոսներ, բենզին»,– ասվում է հրապարակման մեջ:

ԱՀ առողջապահության նախարար Վարդան Թադևոսյանը նշում է, որ նման իրավիճակներում ամենախոցելին դառնում է առողջապահության համակարգը, որովհետև միանգամից դադարեցվում են պլանային վիրահատությունները: «Վիրահատությունների ժամանակ բավական մեծ թվով դեղորայք և բժշկական պարագաներ են օգտագործվում, դրա համար ստիպված պետք է դադարեցնես, որպեսզի սուղ պայմաններում ունեցածը ավելի երկար ժամանակով օգտագործելու հնարավորություն ունենաս: Իսկ պլանային վիրահատություններ չիրականացնելը կարող է որոշների մոտ հանգեցնել ավելի սուր վիճակի: Դա խնդիր է դառնում, որովհետև սուր վիճակում գտնվող հիվանդների վիրահատություններն անում ենք: Մյուս խնդիրը կապված է ՀՀ-ից ներմուծվող դեղամիջոցների ու բժշկական այլ պարագաների հետ, պետք է ամեն ինչ անենք, որ հիվանդանոցները հնարավորինս սահմանափակ չափով օգտագործեն իրենց ունեցած դեղորայքը: Ճանապարհի փակվելուց խնդիր է առաջանում դեղատներում հանրության համար նախատեսված դեղորայքի առումով: Ճիշտ է, դա մասնավոր սեկտորն է, բայց ամեն դեպքում առողջության հետ է կապված»,–ասում է նախարարը:

Հումանիտար բեռների ներկրման արգելքից հետո Արցախում առաջացել են վառելիքի ու սննդի հետ կապված նոր խնդիրներ: Տեղեկություններ էին տարածվում, որ ալյուրի ծավալի պակաս կա ու տարբեր հացի փռերի մոտ հերթեր էին գոյանում: ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը հայտարարություն է տարածել՝ տեղեկացնելով, որ խանութներում առաջացած հացեղենի արհեստական սղությունը պայմանավորված է որոշ անբարեխիղճ տնտեսավարողների հարուցած խուճապային տրա-

մադրությամբ, որն էլ հանգեցրել է բազմաթիվ քաղաքացիների կողմից ավելորդ քանակի հացեղենի գնման և մնացածի համար սղության առաջացման. «Ուստի քաղաքացիներին հորդորում ենք հացեղենի գնումները կատարել ամենօրյա կարիքին համապատասխան քանակով՝ առանց տրվելու խուճապային տրամադրությունների, քանի որ ալյուրի ծավալի խնդիր չկա և որոշակի ծավալով ու պարբերականությամբ կառավարության կողմից մատակարարվում է բոլոր փոերին»:

Հունիսի կեսից հանրապետությունում մեկնարկել է աշնանացան հացահատիկի բերքահավաքը: ԱՀ կառավարությունը նախատեսել է ցորենի հանձնման դիմաց մի շարք աջակցության ձևեր՝ խրախուսելու բերքի մթերումը ԱՀ պետական պահեստներ:

Բերքահավաքի նախնական արդյունքները, ըստ գյուղատնտեսության նախարարության, գոհացուցիչ չեն, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով. նախ՝ շրջափակման պատճառով չի իրականացվել ցանքսերի սնուցման գործընթացը, ինչը բացասական ազդեցություն է ունեցել բերքի վրա հենց ձևավորման փուլում, այնուհետև վիճակն էլ ավելի է բարդացել աննախադեպ երաշտի, տեղացած կարկուտի և սելավների պատճառով: Տուժել են բուսաբուծության ոլորտի բոլոր ճյուղերը, ինչը ազդել է նաև անասնաբուծության ճյուղի վրա, քանի որ բուսաբուծական արտադրանքը անասնաբուծական կերերի հիմնական հումքն է:

Վնասներ են կրել հիմնականում Ասկերանի ու Մարտակերտի շրջանները. հունիսի 15-ի տվյալներով՝ կարկտահարվել է 1661,4 հա տարածք: Այնուհանդերձ, գյուղատնտեսության նախարարության կանխատեսմամբ՝ Արցախը երկար ժամանակ ապահովված է լինելու անհրաժեշտ ծավալի հացահատիկով:

Արցախի Հանրապետության ամբողջական շրջափակման հետևանքով առաջացած պարենային մթերքների խնայողական օգտագործման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ԱՀ կառավարության որոշմամբ 2023 թվականի հուլիսի 5-ից հանրային սննդի օբյեկտներում արգելվում է.

1) Տոնական, ընտանեկան կամ անձնական այլ ճաշկերույթների (բացառությամբ մինչև 50 անձանց մասնակցությամբ անցկացվելիք հարսանյաց ճաշկերույթների) կազմակերպումը և անցկացումը,

2) 30-ից ավելի անձանց մասնակցությամբ սգո արարողությունների կազմակերպումը և անցկացումը,

3) սննդամթերքի պատրաստումն ու իրացումը՝ մատուցման և առաքման ձևով (խոհարարական արտադրանքի սպառումը)՝ բացառությամբ սուրճի, թեյի, ըմպելիքների, պաղպաղակի, ալյուրե և շաքարե հրուշակեղենի մատուցման, հանրային սննդի օբյեկտներ են համարվում հանդիսությունների սրահները, ռեստորանները, ճաշարանները, սրճարանները, բարերը, բուֆետները, ինչպես նաև հյուրանոցներին, զբոսաշրջային տներին կից հանրային սննդի օբյեկտները:

Շրջափակման ընթացքում Ադրբեջանը պարբերաբար խախտում էր հրադադարը՝ կրակելով ԱՀ մարտական դիրքերի, գյուղատնտեսական աշխատանքներ կատարող տեխնիկայի ու մարդկանց ուղղությամբ: Հունիսի 28-ին Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները հրետանային կրակ են բացել Մարտունու և Մարտակերտի հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաև ԱԹՍ-ներ: Սադրանքի հետևանքով զոհվել են ՊԲ զինծառայողներ Արմո Աբգարյանը, Սամվել Թորոսյանը, Երվանդ Թադևոսյանը, Գագիկ Բալայանը: Զոհված չորս զինծառայողներից երկուսի՝ Սամվել Թորոսյանի և Երվանդ Թադևոսյանի մարմինները ՀՀ տեղափոխելու և Եռաբլուրում հուղարկավորելու՝ նրանց ծնողների խնդրանքը օրեր շարունակ մերժվում էր Ադրբեջանի կողմից, ի վերջո Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով աճյունները տեղափոխվել են ՀՀ:

ԱՀ Ազգային ժողովը հունիսի 28-ին հայտարարություն է ընդունել՝ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ նոր միջադեպն արձանագրվել է այն ժամանակ, երբ ԱՄՆ պետական քարտուղարի միջնորդությամբ Վաշինգտոնում տեղի են ունենում Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հերթական բանակցությունները հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման հարցերի շուրջ: «Դա, անշուշտ, ևս մեկ անգամ վկայում ու հաստատում է, որ «խաղաղության պայմանագրի» շուրջ տեղի ունեցող այս բանակցությունները նույնպես իրականում ոչ այլ ինչ են, քան տարածաշրջանում տևական խաղաղության ու կայունության հաստատման մթնոլորտի ձևավորման նմանակում իբր թե միջազգային ջանքերի համատեքստում:

«Խորապես անհանգստացած առկա վտանգավոր իրողությամբ՝ Արցախի Հանրապետության ժողովրդի անունից դիմում ենք.

• ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներին՝ կարեկցանքի հայտարարություններից, հորդորներից և խորհուրդներից զատ՝ ձեռնարկել

կոնկրետ գործնական քայլեր, մասնավորապես՝ պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ՝ զսպելով նրա ագրեսիվ նկրտումները: Համոզված ենք, որ երկակի ստանդարտներով գործելառճը ավելի է ոգևորում Ադրբեջանին՝ նրան դարձնելով սանձարձակ և անվերահսկելի,

• Ռուսաստանի Դաշնությանը՝ խաղաղապահ առաքելության շրջանակում առավել կոշտ միջոցներով կասեցնել Ադրբեջանի հակամարդկային, ցեղասպան գործողությունները,

• Վաշինգտոնյան բանակցություններում Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը՝ անհապաղ դադարեցնել մեկնարկած բանակցությունները մինչև Արցախի հետ շփման գծում և ՀՀ սահմաններում լիակատար հրադադարի հաստատումը և այն պահպանելու փաստաթղթային երաշխիքների տրամադրումը, հակառակ դեպքում բանակցությունների շարունակումը կնշանակի ադրբեջանական կողմի ագրեսիվ պահվածքի խրախուսում և միջազգային մակարդակով արտոնություն»,– ասվում է Արցախի խորհրդարանի հայտարարության մեջ:

Վերջին ամիսներին բավական ակտիվ էր Արցախի ներքաղաքական կյանքը: Նախ՝ մայիսի 15-ին Ստեփանակերտի Վերածնունդ հրապարակում կայացել է «Միասնական հայրենիք» կուսակցության ղեկավար Սամվել Բաբայանի կողմից հրավիրված հանրահավաքը: Հանրահավաքի հիմնական նպատակը եղել է Սամվել Բաբայանին պետնախարար նշանակելու պահանջը: Հանրահավաքի ընթացքում հայտարարվել է քաղաքական խորհրդակցություններ սկսելու ԱՀ նախագահի առաջարկն ընդունելու մասին: Այնուհետև Արցախի Հանրապետության նախագահը մայիսի 23–ի իր ուղերձում հայտարարել է, որ դադարեցնում է օրեր առաջ մեկնարկած քաղաքական խորհրդակցությունները, իսկ պետական պաշտպանության կոմիտեի մոդելով կառավարման մարմին, փաստացի, չի ստեղծվի: Ավելին՝ նախագահը հայտարարեց, որ սահմանափակելու է հավաքների ազատությունը, ստեղծված պայմաններում անընդունելի է համարում առանց քաղաքական հավասարակշռման, առանց Արցախի ժողովրդի համար հետևանքներն ու երկրի շահերի վրա ազդեցությունը լիարժեք գնահատելու՝ այս կամ այն քաղաքական ուժի կամ խմբի գործողությունները՝ ուղղված Արցախի անվտանգության հարցում կարևոր նշանակություն ունեցող սուբյեկտների դեմ:

ԱՀ պետական նախարարի պաշտոնից հեռանալուց հետո Արցախում քաղաքական խորհրդակցություններ է նախաձեռնել նաև Ռուբեն Վարդանյանը: Շուրջ 3 ամիս այդ քննարկումներին մասնակցել են 100-ից ավել քաղաքացիներ՝ քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և պարզապես անհատներ՝ ստեղծված իրավիճակից ելքեր գտնելու և ընդհանրապես Արցախի շուրջ զարգացումները քննարկելու և ճշտելու նպատակով: Ստեղծվել է «Արցախի անվտանգության և զարգացման ճակատ» հանրային շարժումը, որի հիմնադիր ժողովը կայացել է հունիսի 1-ին:

Ռուբեն Վարդանյանը խոսելով շարժման առաքելության մասին՝ ընդգծել է, որ նախաձեռնողները շարժումը սկսել են երեք նպատակով:

«Առաջինը՝ համախմբվել գաղափարի շուրջ՝ հաղթահարելով ապատիան և անտարբերությունը, որը շատ վտանգավոր է:

Երկրորդը՝ որպեսզի աշխարհը հասկանա, որ մենք չենք ենթարկվելու այն ծրագրին, որն ուզում է իրագործել Ադրբեջանը: Ու դա միայն Արցախի իշխանության դիրքորոշումը չէ, այլ ողջ ժողովրդի, որը պատրաստ է պայքարել իր իրավունքների համար: Կարևոր է, որ այդ դիրքորոշումը հնչի, հնչի

բարձրաձայն ու միասնաբար, և Հայաստանը, հայկական աշխարհը, մեր ընկերները միանան:

Երրորդը՝ հանրային շարժման միջոցով ազդել կառավարության կողմից ընդունվող որոշումների վրա: Եվ այդ ճնշումը լինի առողջ և օգտակար, ոչ թե քանդող ու վնասակար»:

«Արցախի անվտանգության և զարգացման ճակատ» հանրային շարժման խորհրդի՝ հունիսի 12-ին կայացած նիստում ընտրվել է շարժման գործադիր կոմիտեն, որի համակարգող է ընտրվել Ռուբեն Վարդանյանը:

Շարժումը շարունակում է հանդիպումները, քննարկումները Արցախի տարբեր շրջանների բնակիչների ու տարբեր շրջանակների հետ, հանդես գալիս քաղաքական հայտարարություններով:

«Պահն օրհասական է և իր երկրի ճակատագրով մտահոգ յուրաքանչյուր հայորդուց, Արցախի հանդեպ համակրանք ունեցող ամեն մի բարեկամից պահանջվում է հայրենասիրական մղումները, կարողություններն ու նվիրումի պատրաստակամությունն ուղղել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի համար պայքարին՝ բոլոր հնարավոր միջոցներով:

Մեր նախնիներից ստացած հարազատ ու ծաղկուն Արցախը հայկական պահելու սուրբ նպատակի համար մենք, հրաժարվելով նեղ անձնական շահերից, վեր կանգնելով կուսակցական, պաշտոնական դիրքերից, հռչակում ենք «Արցախի անվտանգության և զարգացման ճակատ» հանրային շարժումը՝ որպես համախմբման ու միասնաբար պայքարելու կամքի և վճռականության դրսևորում:

Բոլոր նրանք, ովքեր ընդունում են մեր կողմից հայտարարված գաղափար-նպատակը, ովքեր գիտակցում են իրենց պատասխանատվությունը հայրենիքի հանդեպ, ում համար թանկ են հայկական արմատներն և մեր երեխաների ապագան, կարող են միանալ մեզ՝ անդամակցելով հանրային շարժմանը և ուժեղացնելով Արցախի անվտանգության ու զարգացման ճակատը»,– ասվում է շարժման տարածած հռչակագրում:

Հուլիսի 13-ի երեկոյան Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը հանդես է եկել համաժողովրդական պայքարի կոչով: «Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդին պատանդառելու և Հայաստանի հետ կապող ճանապարհն արգելափակելու հետևանքով հումանիտար իրավիճակն Արցախում օր օրի վատանում է, իսկ այսպես շարունակվելու դեպքում ունենալու ենք ծանր ու անդառնալի հետևանքներ, որը մենք թույլ տալ չենք կարող, ուստի վաղվանից սկսում ենք համաժողովրդական անժամկետ շարժում»,- իր կոչում նշել է պետնախարարը:

Հաջորդ օրը՝ հուլիսի 14-ին, Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակում մեկնարկել է բազմահազարանոց հանրահավաք՝ Արցախի ապաշրջափակման պահանջով:

Հանրահավաքին մասնակցում էին նաև Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը, Ազգային ժողովի նախագահ Արթուր

Թովմասյանը, օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչները:

Արցախում տիրող իրավիճակի մասին խոսելուց հետո պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը հարց է ուղղել միջազգային հանրությանը, Հայաստանի Հանրապետությանն ու Ռուսաստանի Դաշնությանը. «Ձեզ ինչ է անհրաժեշտ, ինչին եք սպասում: Ուզում եք այս հրապարակում մենք մարդկանց դիակներ ունենանք, որ արձագանքեք: Ուզում եք մեր երկրում մանկահասակների մահվան դեպքի կրկնություններ լինեն, որ խելքի գաք: Եվ ես ձեր բոլորի անունից ասում եմ՝ բավական է: Արդեն երրորդ տարին է՝ արցախցին համբերատար կրում է ամենատարբեր բնույթի տառապանքներ: Մենք ուշի-ուշով հետևում ենք աշխարհի այս կամ այն կետում կազմակերպվող հանդիպումների արդյունքներին: Հետևում ենք, բայց ոչ արդյունքն ենք տեսնում, ոչ՝ ազդեցությունը զգում, իսկ երբ այդ հանդիպումներում հանկարծ առաջանում են տարաձայնություններ, անհամաձայնություններ, և հարկ է լինում որևէ մեկի վրա ճնշում գործադրել, ապա մուրճի ողջ հարվածն իջնում է արցախցու գլխին: Եվ նորից ձեր բոլորի անունից ուզում եմ գոռալ՝ մենք արդեն հասել ենք համբերության եզրագծին և այլևս զրկանքների հաշվին ի վիճակի չենք ձեզ ընձեռել քաղաքական մանևրեր կատարելու հնարավորություններ»:

Այնուհետև հանրահավաքի մասնակիցները շարժվել են դեպի Կարմիր խաչի Արցախի գրասենյակ ու ռուսական խաղաղապահ զորակազմի տեղակայման վայր՝ կոչ անելով տեղ հասցնել տիրող իրավիճակի մասին տեղեկությունը:

Վառելիքի սղության պատճառով հնարավորություն չունենալով հասնել մայրաքաղաք, բազմահազարանոց հանրահավաքներ են տեղի ունեցել Մարտունի և Մարտակերտ քաղաքներում, իսկ Ասկերանի բնակիչները միացել են քայլերթի մասնակիցներին: Նույն օրը Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակում տեղադրվել են վրաններ՝ պայքարը շարունակելու ու, անհրաժեշտության դեպքում, իրադարձություններին արագ արձագանքելու համար:

Հայ դատի «Խաչեցյալներին»
(«Լիզբոնի 5»-ի 40-րդ տարելիցին)

Անի Մելքոնյան
Պատմաբան

1983 թ. հուլիսի 27-ը հայոց պատմության մեջ նշանավորվեց որպես անձնվիրումի ու ինքնազոհաբերման խորհրդանշական օր: Այդ օրը հինգ հայ երիտասարդներ Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում կատարեցին մի գործողություն, որը աշխարհի անտարբերության պատը փշրող պողպատյա բռունցք, իսկ հայության համար նոր զարթոնքի շեփորականչ պետք է դառնար: Գործողությունն իրականացրած տղաները պատմության մեջ մնացին «Լիզբոնի 5» անունով:

Մինչ գործողությանն անդրադառնալը նախ՝ մի փոքր դրան ծնունդ տված հանգամանքների մասին:

Հայոց ցեղասպանությունից և Հայաստանի Առաջին Հանրապետության անկումից հետո թվում էր, թե հայկական հարցը մեկընդմիշտ փակված է, սակայն հայ ազգային կուսակցություններից ՀՅԴ-ն հիմնադրել էր Հայ Դատի հանձնախմբեր ու գրասենյակներ և դրանց միջոցով քաղաքական պայքար էր մղում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և Թուրքիայի կողմից հատուցման համար:

Հայոց ցեղասպանությունից կես դար անց, սակայն, պարզ դարձավ, որ պայքարը սպասված արդյունքը չէր տվել, աշխարհում կարծես մոռացել էին, որ ընդամենը կես դար առաջ տեղի էր ունեցել մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող ոճրագործություն: Հայրենազրկված հայության ցավի հանդեպ մարդկության անտարբերությունը սփյուռքահայությանը դրդեց «թղթե շերեփին» զուգահեռ օգտագործել նաև «երկաթե շերեփ», ասել է, թե քաղաքական պայքարը զուգակցել զինված պայքարի հետ: Այդ նպատակով էր, որ ասպարեզ իջան Սփյուռքի զինյալ կազմակերպությունները: Զինյալ պայքարը բողոքի ճիչ էր, որն աշխարհի հզորներին պետք է ստիպեր լսելու հայրենազրկված հայության պահանջատիրության ձայնը:

Սփյուռքի զինյալ կազմակերպություններից ամենահայտնին ՀՅԱՄ-ն էր, որը 1983 թ. ասպարեզը զիջեց մեկ այլ կազմակերպության՝ ՀՅԲ-ին (Հայ Յեղափոխական Բանակ), որի ամենահայտնի ձեռնարկն էլ թերևս լիսաբոնյան գործողությունն էր:

1983 թ. հուլիսի 27-ին «Պորտուգալիայի մայրաքաղաք էին ժամանելու Եվրոպայում գործող թուրքական դեսպանատների պատասխանատու մարմիններն ու կցորդները...»[1] և որոշված էր, որ հենց այդ օրը հինգ հայ երիտասարդներ՝ Վաչե Տաղլյանը, Սարգիս Աբրահամյանը, Սեդրակ Աճեմյանը, Սիմոն Յահնիյանը և Արա Քըրճըլյանը պետք է իրականացնեին մի գործողություն, որը կստիպեր աշխարհին խոսել Հայոց ցեղասպանության մասին:

Նույն օրը հինգ հայ երիտասարդներ երկու մեքենայով մոտեցան Լիսաբոնի թուրքական դեսպանատանը և փորձեցին ներս մտնել. «Պահակների

հետ փոխանակած կրակոցների ընթացքում 10:45-ին տղաներից մեկը՝ Սիմոն Եահնիեանը զոհվում է»[2]: Մյուսները ներխուժում են փոխդեսպանի թուրքական դեսպանատանը մաս կազմող բնակարան, քանի որ դեսպանատան գլխավոր մուտքը փակված էր պորտուգալացի ոստիկանների կողմից:

Ժամը 12:30-ին ՀՅԲ-ն լրատվականների միջոցով աշխարհին հղում է հինգ հայ երիտասարդների հաղորդագրությունը. «Բոլոր կառավարություններին, համաշխարհային հանրային կարծիքին եւ մամուլին: Սա անձնասպանություն չէ, ոչ էլ խելագարություն, այլ գերագույն զոհաբերում ազատության բագինին: Մեր ժողովրդի ինքնորոշման ձեռքբերման միակ միջոցը զինյալ պայքարն է: Բռնի ուժին դիմելու մեր որոշումը հետեւանքն է թուրք պետության եւ նրա պաշտպան պետությունների մերժումի՝ գոհացում տալու հայ ժողովրդի արդար ու խաղաղասեր իրավունքներին: Հայերի իրավունքն է ապրել ու բարգավաճել իրենց նախահայրերի հայրենիքում՝ ազատ ու անկախ...»[3]:

Ավելի քան մեկ ժամ անց 170 հոգուց բաղկացած ոստիկանական հատուկջոկատայինները գրոհում են շենքը, որտեղ գտնվում էին հայ վրիժառուները: Նախքան գրոհի սկսվելը շենքում հրդեհ է բռնկվում, հետո լսվում են պայթյունի ձայներ, քիչ ուշ շենք մտած հատուկջոկատայինները գտնում են չորս հայ երիտասարդների այրված մարմինները:

«....Լիբանանահայ տղաների անձնազոհությունը գագաթնակետն էր տասնամյա պայքարի, որը միջազգային ու հայրենական մամուլի գլխագրերում բնորոշվում է «նորագույն զինյալ պայքար», «հայկական դիմադրական շարժում», օտարների կողմից՝ նաև «ահաբեկչություն»: Այն Հայոց ցեղասպանության ուրացման դեմ արշավի մասն էր, որը սկիզբ էր առել 1975 թվականի հոկտեմբերին»[4]:

Լիբանանում ծնված հայ երիտասարդները չէին համակերպվել առաջադեմ կոչվող մարդկության անտարբերության հետ և պետք է գնային մի գործողության, որը ինչպես նախապես որոշվել էր «…. լինելու էր ինքնազոհութեան ակտ, որ պէտք էր կոտրէր Հայ Դատը թաղող անտարբերութեան շղթաները»[5]:

Ինչպես հետո պարզ դարձավ, իրենց կյանքը հանուն Հայ Դատի զոհաբերած 19-20-21 տարեկան տղաները «երկար ժամանակ պատրաստուել են գործողութեանը, մարզուել եւ քննարկել են բոլոր մանրամասները, սակայն իրենց ընկերներից եւ հարազատներից որեւէ մէկը տեղեակ չի եղել եւ անգամ չի նկատել որեւէ տարօրինակ հանգամանք»[6]:

Հատուկ ուզում ենք նշել, որ ինչպես ՀՅԱՄ-ի, այնպես էլ ՀՅԲ-ի գործողությունների թիրախում եղել են բացառապես թուրք պաշտոնյաները, ուստի թե՛ ՀՅԱՄ-ի և թե՛ ՀՅԲ-ի գործողությունները ոչ թե ահաբեկչություն են, այլ վրիժառուական ակտեր՝ ուղղված թուրքական ցեղասպան պետության դեմ:

Ցեղասպանության հետևանքով օտար հողում ծնված, Հայաստանի կարոտով մեծացած «Հայաստան չտեսած հինգ հայ երիտասարդներ գիտակցաբար նահատակվեցին, որպեսզի աշխարհը խոսի հայ ժողովրդի արդար դատի մասին, Հայոց ցեղասպանության ճանաչման, հայի՝ անկախ ու ամբողջական Հայաստան ունենալու իրավունքի մասին»[7]: Տղաների մարմինները սեպտեմբերի 19-ին տեղափոխվեցին Բեյրութ և ամփոփվեցին կողք կողքի Բուրջ Համուդի հայկական գերեզմանատանը՝ Դաշնակցության պանթեոնից քիչ հեռու. այդ վայրը սրբավայր դարձավ աշխարհի շատ հայերի համար:

Իսկ Հայաստանու՞մ…. Լիզբոնի 5 անձնազոհ տղաների՝ Հայ Դատի «խաչեցյալների» գործողությունից 40 տարի անց ինչպե՞ս են ընկալել «լիսաբոնյան խաչելությունն» ու 20-ամյակը նոր բոլորած Արա Քըրճըլյանի պատգամը.

«Առանց հայրենիքի, առանց մեր հողերուն ո՛չ ապագայ կայ, ո՛չ կեանք կայ, ո՛չ ընտանիք կ՚ըլլայ»:

Վերջին տարիներին «ապագա կա» կրկնել սիրողները, արդյոք հասկացե՞լ են 20-ամյա Արայի խոսքերի նշանակությունը՝ առանց հայրենիքի ապագա չկա: Վստահ ենք, որ անդադար «ապագա կա» կրկնողները կա՛մ չեն ճանաչում Լիզբոնի տղաներին, կա՛մ նրանց հիշատակն ու գաղափարը դավաճանողներ են (ինչն ավելի ակնհայտ է): Հակառակ դեպքում այդ տղաների հայրենիքը թուրքին չէին հանձնի: Ցավոք սրտի, Հայաստանում «Լիզբոնի ողջակեզների» մասին (ինչպես նրանց անվանում էր մեծն Շիրազը) քչերը գիտեն, մինչդեռ այս տղաների անունն ու գործը պետք է ուղեկից լինեին յուրաքանչյուր հայի՝ դպրոցական տարիքից սկսած, քանզի նրանց կամավոր «խաչելությունը» աշխարհասփյուռ հայության խլված իրավունքների համար էր, դրա վկայությունն է նաև Բուրջ Համուդի ազգային գերեզմանատանը նրանց շիրիմի հուշաքարը, որի վրա «միացեալ Հայաստանի քարտեզն է, որից վեր են խոյանում հինգ դաշոյններ»[8]՝ ի հիշատակ Անկախ և Միացյալ Հայաստանի սիրույն ինքնազոհաբերված հինգ հայորդիների և որպես պատգամ աշխարհասփյուռ հայությանը. երբեք չմոռանալ Լիզբոնի 5 հայ երիտասարդների զոհաբերությունը և նրանց վառած արդարության ջահը տանել մինչև վերջնանպատակ՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի կերտում՝ այդ ճանապարհին մտքում ունենալով 20-ամյա Սեդրակ Աճեմյանի կոչ-հորդորը. «Ես կ՚ուզեմ երիտասարդութեան ըսել, թէ երբէք թող չտխրին, ինչքան ալ թուրքը զօրաւոր ըլլայ մեզմէ աւելի նոր զէնքերով կամ նոր դիւանագիտութեամբ: Մենք առաջինները չենք, որ կը քալենք: Մեզմէ առաջ շատեր քալած են եւ կը յուսամ, որ մեզմէ աւելի լաւերն ալ պիտի գան, մեզմէ աւելի գործեր պիտի ընեն»: Այդ գործերը պետք է լինեն ապրել, գործել ու մեռնել հանուն այն հայրենիքի, որի համար գիտակցաբար իրենց զոհաբերեցին երբեք հայրենիքը չտեսած հինգ լիբանանահայ երիտասարդներ, որոնց հիշատակին արժանի լինելու համար նախևառաջ պարտավոր ենք մաքրել Հայաստանը «Լիզբոն 5»-ին ուրացած իշխանությունից, որը զոհաբերում է Հայաստանը իր շահերի համար և բարեկամանում է մեր դարավոր թշնամու՝ թուրքի հետ, որի ոճրագործ էության դեմ պայքարում էլ ընկան Սարգիսը, Սիմոնը, Սեդրակը, Արան, Վաչեն՝ իրենցից հետո եկողներին թողնելով իրենց երազած Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի համար անձնվեր պայքարի մշտարթուն խորհուրդ, որ 21-ամյա Սարգիսի ձայնով հայությանը մարտակոչ է հղում. «…. Եկէ՛ք, միացէ՛ք մեզի: Կը հաւատամ,որ կը տիրանանք մեր հայրենիքին»:

1983 թ. հուլիսի 27-ից 40 տարի անց, իրեն հայ համարող յուրաքանչյուր ոք պարտավոր է մեր «սրբազան խենթերի» գործը շարունակել՝ ամուր պահելով Արցախը, պաշտպանելով Հայաստանի Հանրապետությունը և պայքարելով կորուսյալ հայրենիքին՝ Արևմտյան Հայաստանին վերատիրանալու համար, հանուն Հայ Դատի խաչեցյալների սրբազան երազի՝ Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի իրականացման…

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախշքարյան Ա., Սրբազան խաչելություն. Եր., 2019., էջ 19:
2. Նախշքարյան Ա., Լիզբոնի իմ ընկերները, Եր., 2013., էջ 1:
3. http://www.lisbon5.com/02html:
4. https://yerkirmedia.am/hy/article/2022/07/27/59539:
5. https://asbarez.am/%D4%BC%D5%AB%D5%A6%D5%A2%D5%B8%D5%B6-5%E2%80%A4-%D5%80%D5%A5%D5%BF%D5%A1%D6%84%D6%80%D6%84%D5%AB%D6%80-%D5%93%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D6%80-%D
6. Նույն տեղում:
7. https://aparaj.am/lizboni-tghaneri-erazatc-ays-mi-bur-hogheh-handznvec-thurkhin/:
8. https://asbarez.am/%D4%BC%D5%AB%D5%A6%D5%A2%D5%B8%D5%B6-5%E2%80%A4-%D5%80%D5%A5%D5%BF%D5%A1%D6%84%D6%80%D6%84%D5%AB%D6%80-%D5%93%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D6%80-%D4%BC%D5%AB%D5%BD%D5%A1%D5%A2%D5%B8%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6/:

Հայոց պետականության գաղափարի հարցը՝ ըստ Ստ. Նազարյանցի «Հայերի կոչումը մարդկության մէջ» հրապարակման

Արարատ Հակոբյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուտք

19-րդ դարի 40-60-ական թվականներին, հայ հասարակական-քաղաքական հոսանքների ձևավորման և մտքի վերելքի ժամանակաշրջանում, արտաքին ու ներքին ազդակներով պայմանավորված, հայ ժողովրդի հետագա ճակատագրի, հայրենիքի ազատագրության ու հայոց պետականության վերականգնման գաղափարները պիտի ավելի պարարտ հող գտնեին ու ավելի առարկայական քննության բնույթ ստանային: Այդ շրջանից թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ իրականության մեջ սկսում են աստիճանաբար արմատավորվել եվրոպական արժեհամակարգի տարրեր, այդ թվում՝ Ֆրանսիական մեծ հեղափոխության (1789-1793 թթ.) հռչակած ազատության, հավասարության, ժողովրդավարության, եղբայրության սկզբունքները: 19-րդ դարակեսերին եվրոպական բազում երկրներում ծավալված բուրժուա-դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումները հայ ինտելեկտուալ շրջանակներին խորհելու նյութ էին տալիս՝ արծարծելու ազատաբաղձության, ազգային ու հայրենասիրական թեմաներով խնդիրներ: Իսկ մինչ այդ հայ առաքելական եկեղեցու կողմից դարերով քարոզվող ու արմատացած հպատակվելու և հնազանդվելու ասիական մտայնությանը աստիճանաբար փոխարինելու էր գալիս «ազատության տեսլականը»[1]:

Դարակեսերից հայ գրական, հասարակական-քաղաքական, գաղափարական շրջանակներին հաջողվում է կրոնական համայնքի մտածելակերպից ավելի ու ավելի անցում կատարել եվրոպական քաղաքական-գաղափարական ու մշակութային ազգերին բնորոշ արժեհամակարգին, ինչը գրական-գեղարվեստական, գեղագիտական և այլ ձևերով ու արտահայտչամիջոցներով մարմնավորում էր գտնում նրանց երկերում, ստեղծագործություններում, մամուլում, հրապարակախոսությունում և այլուր: Ամենից առաջ երկատված հայրենիքի, ճնշված ու հարստահարված ազգի ազատագրության գաղափարները պիտի դառնային հայ առաջադեմ մտքի շարժիչ ուժն ու գլխավոր նպատակը: Առաջին պլանում է հայտնվում ազգ ու հայրենիք գաղափարների միասնացման խնդիրը, որը պիտի տաներ հող-հայրենիքի ազատագրմանն ու պետականության վերականգնմանը:

Հայոց պետականազուրկ դարերի ընթացքում հայ հասարակական-քաղաքական մտքի պատմագիտական քննության կարևորագույն հիմնահարցերից են հայոց պետականության ու քաղաքական անկախության հարցերը: Դարեր շարունակ դա հետաքրքրել ու հուզել է հայ աշխարհիկ և հոգևոր

շրջանակներին: Բանն այն է, որ հին և միջին դարերում հայ ժողովուրդն իր քաղաքական շրջանակներով կերտել է պետականությունների մի ամբողջական շարք-շղթա: Սակայն հետագայում, արտաքին ու ներքին աննպաստ գործոններով պայմանավորված, Հայաստանն ու հայ ժողովուրդը կորցրին իրենց պետականությունը, այն ընկավ օտար նվաճողների գերիշխանության տակ, ենթարկվեց տարածքային բաժանումների, կրեց սոցիալ-տնտեսական, ազգային ու կրոնական հարստահարություններ, դժնդակ հալածանքներ ու հետապնդումներ և այլն: Այստեղից էլ կարող է օրինական հարց ծագել, թե ինչո՞ւ այդպես դասավորվեց:

Այդ համատեքստում, ինչպես պատմական անցյալում, նույնպես և արդի ժամանակներում հայ հոգևոր և աշխարհիկ շրջաններում մշտապես չթուլացող հետաքրքրության երկընտրանքային հարցերից է եղել քաղաքական կառույց հանդիսացող պետության և հոգևոր հիմնարկություն համարվող եկեղեցու հարաբերությունների հարցը: Եվ այդ առումով հայ հասարակական շերտերին մեծապես հետաքրքրել է՝ ունենալ քաղաքակա՞ն, թե՞ կրոնական անկախություն:

Ահա այս հարցի քննությանն ու պարզաբանմանն է նվիրված 19-րդ դարի հայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչ, ականավոր հրապարակախոս, գրող, գիտնական, պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանցի (1812-1879 թթ.) հիմնադրած «Հիւսիսափայլ» ամսագրի 1859 թ. հունվարյան համարի առաջաբան-խմբագրականը՝ «Հայերի կոչումը մարդկութեան մէջ» վերտառությամբ[2]:

Հիշյալ խմբագրական հոդվածում Ստ. Նազարյանցի կողմից բարձրացված քաղաքական կարևոր իմաստ պարունակող կրոնակա՞ն, թե՞ քաղաքական անկախության երկընտրանքի հարցին: Նախ՝ հե-

ղինակը հոդվածում զարգացնում է հետևյալ մտահոգիչ միտքը. «Մեզանում պակասել է հայրենիքի ու պետականութեան պահպանութեան ընդհանրական գաղափարը»[3]: Այս կապակցությամբ պատմագիտական գնահատականի առումով վաստակաշատ պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյանի) կողմից Ստ. Նազարյանցի այդ հոդվածին տրված մեկնաբանության մեջ նշվում է, որ, իրոք, դարերի ընթացքում հայերը հաճախ չեն հասկացել (գիտակցել) քաղաքական անկախության նշանակությունը, և այդ անկախությունը, ցավոք, զոհաբերվել է կրոնական անկախությանը[4]: Եվ դա, ըստ էության, համարվել է պետության և եկեղեցու հարաբերության հարցը հայ հանրության գիտակցության մեջ և նրա ընկալումներում:

Հարցի նազարյանական մեկնաբանությունը և գնահատականը

Նախ՝ հեղինակը, թռուցիկ հայացք նետելով աշխարհի ու երկրների ավելի քան 6 հազարամյա պատմությանը, դրվատանքով ընդգծում է հին դարերում հայերի քաղաքական կյանքի, այսինքն՝ պետականության առկայության մասին: Միաժամանակ նշում է թագավորական իշխանության դեմ մինչև 240-ի հասնող հայ նախարարական տների կենտրոնախույս ձգտումների և գործողությունների մասին, որոնք «անխորհրդաբար աշխատել են միշտ սահմանափակել ու նեղացնել թագաւորի իշխանութիւնը և այդպէս թուլացնել բոլոր թագաւորութեան զօրութիւնը»[5]: Ստ. Նազարյանցը անցյալում հայոց պետականությունների կորուստը բացատրում է նաև Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ պայմաններով, երբ նա հայտնվեց «մի կողմից՝ Պարսից քրիստոնեատեաց ազգի, իսկ մյուս կողմից՝ ֆանատիկոս դաւաճան Բիւզանդիայի միջև»[6]: Նազարյանցի կարծիքով՝ մեր պատմական անցյալում Հայք (հայերը) բավարար ուշադրություն ու նվիրում չեն ցուցաբերել հայոց պետականության պահպանությանը, իսկ դրա փոխարեն ավելի կարևորվել է հավատքի, դավանանքի պաշտպանությունը: Իբրև դրա արտահայտություն՝ Ստ. Նազարյանցը բացառիկ մեծարանքի արժանի երևույթ է համարում 5-րդ դարի ազատագրական պատերազմը, երբ «հայերը անվեհեր քաջութեամբ թափել են իրենց արիւնը, գնացել են նահատակութեան և մարտիրոսութեան՝ հանուն յուրյանց հավատի»[7]: Այդ մասին ակնարկելով՝ Նազարյանցն ամենից առաջ նկատի է ունեցել 5-րդ դարի «Վարդանանց» և «Վահանանց» ազատագրական պատերազմները՝ հանուն հավատի, բայց վերջին հաշվով՝ հանուն ազգի ու հայրենիքի պահպանության (ազատագրության): Հետագա դարերում պետականության կորուստը հայ աշխարհիկ և հոգևոր բարձր շրջանակներում խորհելու տեղիք պիտի տար՝ ջանալ առաջին հերթին վերականգնելու պետականությունը:

Ավելին, Ստ. Նազարյանցի պատկերմամբ՝ հայերը մեծ կարևորություն են տվել ոչ միայն կրոնական, այլև դավանական տարբերությանը: Եվ այդ հողի վրա դարերով թշնամացել են քաղկեդոնական Բյուզանդիայի, նույնն է, թե հույների հետ: «Հայք իբրև քրիստոնեայք,– գրում է հոդվածագիրը,–պիտոյ է միշտ հաւատարիմ դաշնաւոր մնային Յունաց հետ՝ վեհանձնութեամբ տանելով Յունաց կրօնական նեղսրտութեանը և տեղիք չտալով մի քանի դավանաբանական տարբերութիւնների, որ կային Յունաց ու Հայոց մէջ»[8]: «Հայք հանուն իւրանց ազգի պահպանութեան,– կշտամբանքով շարունակում է Նազարյանցը,– պարտական էին իւրանց բնական դաշնակից ու թիկունք համարել Բիւզանտիոնը, բայց Հայոց պոլիտիկան (քաղաքականությունը) այդպէս չէ եղել»[9]:

Նույն քաղաքագետ-հրապարակախոսի դիտարկմամբ՝ պետականությունը՝ իբրև գերագույն արժեք. «թագաւորութիւնն է, որ, իբրև մարմնացած հոգի և զօրութիւն, գործ է կատարում ազգի թէ՛ նիւթական և թէ՛ իմացական բաղդաւորութեան համար. թագաւորութիւնն է, որ ամենայն բան ազգի մէջ կարգի ու սահմանի տակ է պահում»[10]: Նազարյանցը իրավացիորեն կատարյալ չէր համարում այն ազգային կյանքը, որը հիմնված է միայն կրոնի վրա: Ըստ նրա՝ նման տեսակի կյանքի մեջ չի կարող լինել լայն աշխարհիկ կրթություն, գրականություն, նյութական և իմացական բախտավորություն: Դրա համար հայերը առաջնային կարևորություն պիտի տային ոչ այնքան եկեղեցական, որքան քաղաքական անկախությանը, քանզի ամեն մի ազգի ինքնության կեցության և զարգացման ամենամեծ նեցուկը նրա քաղաքական անկախության մեջ է[11]: Վերը բերված մտքերը մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ Ստ. Նազարյանցին իրավամբ կարելի է համարել Հայաստանի անկախ պետականության գաղափարի ջերմ ջատագովն ու պաշտպանը: Եվ նա պատմական անցյալի նյութերի համադրմամբ կշտամբանքի խոսքեր է ուղղում Հայոց եկեղեցուն և հոգևոր առաջնորդներին: Եվ պատահական չէ, որ հայ ազատական, մեզանում պետականության գաղափարակիր, առաջադեմ մտածող Ստ. Նազարյանց գործիչը

և նրա խմբագրած «Հիւսիսափայլ» հանդեսը հաճախակի ենթարկվել են հայ եկեղեցու հայրերի ու կղերական ու պահպանողականի համարում ունեցող «Ճռաքաղ», «Մայաց աղավնի», «Մեղու Հայաստանի», «Կռունկ» և այլ պարբերականների բանավիճային հարձակումներին:

Ի դեպ, Ստ. Նազարանցի սույն հրապարակմանը անդրադարձել է վաստակաշատ պատմաբան Լեոն, որը հիմնականում հավանություն է տվել եկեղեցու և պետականության հարցի շուրջ նրա արտահայտած մտքերին, դատողություններին ու տրված գնահատականին[12]:

19-րդ դարակեսերի հայ հասարակական-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչ, հրապարակախոս Ստ. Նազարյանցի կարծիքով. «Հայք միշտ ընդգծել են իրենց քրիստոնեական հաւատին հավատարիմ լինելու մասին փաստը, բայց դա,– ըստ նրա,– շատ փոքր բան է», որ «հաւատն առանց իշխանական գաւազանի թեւարկութեան, խաչն առանց սրի տկար են և չե՛ն կարող ազգաշինութեան պատճառ լինել»: «Եթէ սուտ է մեր ասածը,– շարունակում է հրապարակախոսը,– թո՛ղ ցույց տան մեզ աշխարհի երեսին մի լուսաւորեալ, քաղաքացեալ (քաղաքակիրթ-Ա. Հ.), հզօր և հրամայող ազգ, որ միայն կրօնի զօրութեամբ՝ առանց քաղաքական կեանքի և մեծութեան հասած լիներ որևիցե ազգաշինութեան, բարեկարգութեան և ազգային պարծանքի մարդկութեան ազգերի մէջ»[13]: Իբրև օրինակ նա նշում է, որ պարսիկը զորեղ է ոչ թե իր «պղտոր մահմեդականութեամբ, այլ իր քաղաքական կեանքով, թագաւորութեամբ: Նոյնն է եւ սունիթական տաճիկը»[14]: Նազարյանցը հասկացնել էր տալիս, որ «թագաւորութիւնն է, որ իբրև մարմնացած հոգի և զօրութիւն, գործ է կատարում ազգի թէ՛ նիւթական և թէ՛ իմացական բաղդաւորութեան համար. թագաւորութիւնն է, որ ամենայն բան ազգի մէջ կարգի ու սահմանի տակ է պահում»[15]: Բայց և միաժամանակ արձանագրում է, որ, ցավոք, հազարամյակով «Հայոց կեանքը զուրկ է եղել դրանից»[16]: Նազարյանցի կարծիքով՝ արդեն 19-րդ դարակեսին չորս միլիոնի հասնող հայությունը, ընդ որում 500 հազարը՝ ռուսական տիրապետության տակ, իսկ մնացյալ մասը՝ Տաճկաստանում, Եվրոպայում, Ասիայի ու Աֆրիկայի այլ երկրներում, կորած չէ, «նա մի մեծ եւ գեղեցիկ խորհուրդ ունի»[17], այլ խոսքով՝ նա լավատես էր, որ մի գեղեցիկ օր հայ ժողովուրդը կհասնի ազատագրության ու անկախության գաղափարի նյութականացմանը:

Հանրագումարի բերելով Ստ. Նազարյանցի դիտարկումները կրոնական (եկեղեցական), թե քաղաքական (պետական) անկախության հարցում՝ կարելի է եզրահանգել, որ Ստ. Նազարյանցը եղել է հայոց անկախ պետականության գաղափարի ջերմ պաշտպան և այդ ճանապարհին հայոց պատմական անցյալի հոգևոր ու աշխարհիկ կյանքի թեմայի համադրմամբ քննադատական խոսք է ուղղում հայ շրջանակների կողմից կրոնական (դավանական) մոտեցմանը նախապատվություն տալուն: Բայց կարծում ենք, որ Ստ. Նազարյանցի արտահայտած կարծիքն ու գնահատականը դավանական առումով Բյուզանդիայի (հույների) հետ զիջող ու հաշտ լինելու հարցում միակողմանի է ու ոչ ամբողջական: Բանն այն է, որ Բյուզանդիայի վարած քաղաքականությունն ու հանդես բերած վերաբերմունքը պայմանավորված չէին միայն ինչ-որ դավանաբանական խնդիրներով, այլ դրա հիմքում ընկած էին քաղաքական, գերիշխելու-մեծապետական, նվաճողական և այլ նպատակներ: Մյուս կողմից՝ ճշմարտությունն այն է, որ ազգի կրոնն ու դավանանքը, իբրև ազգի հոգևոր և մշակութային ինքնության դրսևորում, ինչպես մայրենի լեզուն, դպրոցը, կրթությունը, մշակույթը և այլն, չպետք է բաժանել (տարանջատել) ազգային պետականության ու անկախության գաղափարից: Կարծում ենք, որ դրանք, որպես ազգային-հոգևոր արժեքներ, պետք է դիտարկել մեկ նպատակի ուղղորդված միասնության մեջ: Ինչ վերաբերում է Հայոց եկեղեցուն, ապա նա իր **հոգևոր զորեղ լծակներով պիտի նեցուկ լինի Հայոց պետականությանը**:

Ամփոփում

Այսպիսով՝ քննելով ու գնահատելով Ստ. Նազարյանցի ստեղծած գրական, գիտական, հոգևոր, հրապարակախոսական վաստակը՝ կարելի եզրակացնել, որ նա հայտնի էր ոչ միայն որպես ազգային կրթա-լուսավորական գաղափարների կրող ու տարածող, դրանց զարգացման հետևորդ, եվրոպական արժեքային համակարգի արմատավորման հետևողական պաշտպան մտավորական գործիչ, այլև եղել է Հայաստանի անկախ պետականության վերականգնման գաղափարի ջերմ պաշտպան, ինչի ապացույցը նրա հրապարակախոսությունն է և ի մասնավորի՝ «Հիւսիսափայլի» սույն հրապարակումը:

Հղումներ

1 Խուդինյան Գ., Հ. Յ. Դաշնակցության ծնունդը, Եր., «Արտագերս» հրատ., 2000, էջ 7:
2 Նազարեանց Ստ., Հայերի կոչումը մարդկութեան մէջ, տես «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 1-14:
3 «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 4:
4 Ստեփանոս Նազարյանց, «Հյուսիսափայլի» շրջանը (1858-1864), տես Լեո, Երկերի ժողովածու (տասը հատորով), հ. 6, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 103:
5 «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 3:
6 «Հիւսիսափայլ», նույն տեղում, էջ 4:
7 Նույն տեղում, էջ 5:
8 Նազարեանց Ստ., Հայերի կոչումը մարդկութեան մէջ, «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 4:
9 «Հիւսիսափայլ», նույն տեղում, էջ 4:
10 «Հիւսիսափայլ», նշվ. աշխ., էջ 6:
11 Ստեփանոս Նազարյանց, «Հյուսիսափայլի» շրջանը (1858-1864), տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 103:
12 Տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 103-104:
13 «Հիւսիսափայլ», նշվ. աշխ., էջ 5:
14 «Հիւսիսափայլ», նույն տեղում:
15 «Հիւսիսափայլ», նույն տեղում, էջ 6:
16 «Հիւսիսափայլ», նույն տեղում:
17 «Հիւսիսափայլ», նույն տեղում, էջ 7:

Հայ «Նեմեսիս»-ը, հետախոյզ առասպելն ու ազգային-պետական գործիչը Հրաչ Փափազեան (մաս 1)

Աւօ Գաթրճեան
Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս

Հայ ժողովուրդի հերոսական ծնունդներու անմոռանալի փաղանգին մէջ յաճախ կը հանդիպինք յանձնառու առաքելութիւններ ստանձնող անձնուրացներու, ճառագայթող անուններու:

Այս յօդուածով յաւելեալ լոյս կը սփռենք վերոնշեալ փաղանգին մաս կազմող առասպելական անձի մը վրայ, որ իր կեանքն ամբողջութեամբ նուիրաբերեց իր ազգին:

Արժանի գնահատականի ու համընդհանուր ճանաչումի համար թուղթին կը յանձնենք անոր խիստ կարեւոր ու անփոխարինելի դերը, նաեւ անհաւատալի հնարագիտութիւնը՝ իբրեւ ընդյատակեայ աշխատանքներու կազմակերպիչ, վիթխարի հետախոյզ, իրազեկող գործիչ ու պատասխանատու անձ:

Աննախընթաց դէմք մը, որուն անունը գլխատառերով գրուած է հայոց եւ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան ժամանակակից պատմութեան մէջ:

Անհատ մը, որ երկար ծառայութիւն ունեցաւ ազգին, իր պատկանած կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ճամբով: Ան իր ամբողջ կեանքին տեւողութեան գիտակցաբար խուսափեցաւ իր մասին խօսիլ տալէ:

Շրջահայեաց, գաղտնապահ, սակաւախօս, համեստ ղեկավարի եւ առաջնորդի բոլոր յատկութիւններու տէր անձ մը:

Բնականաբար ամէն անհատ իր անունով կը ճանչցուի, իր անունով կը զանազանուի եւ իր անունով կը ստանայ իր ինքնութիւնը: Եւ ուրեմն մարդկային կեանքին ու մանաւանդ ընկերային-հասարակական կեանքին մէջ անունը որոշիչ, կարեւոր դեր մը կը խաղայ: Ինքնութիւնը անունով կը կազմուի, անունով արժէք կը ստանայ եւ ընկերութեան մէջ անունով կ'արտայայտուի: Ուստի Հրաչ Փափազեանի նուիրական արժէք ներկայացնող ինքնութիւնը հերոսական գործի ծածկանունով դրոշմուեցաւ ու ճանչցուեցաւ: Թէեւ ունէր այլ ծածկանուն ալ՝ Հրափ:

Մեր երէց ընկերներէն ու ընտանեկան անմիջական պարագաներէս յաճախ լսած էի իր մասին: Բոլորն ալ կը պատմէին անոր ազնուական նկարագրին մասին թէ՛ արտաքնապէս՝ իր նիստ ու կացով ու արտայայտութեամբ, թէ՛ իր հոգիով: Կը նկարագրէին անոր պատկառելի դէմքը՝ այնքան խորհրդաւոր ու հմայող... Մեհմեթ Ալին: Կը խօսէին կուռքի մը նման, բայց ոչ իբրեւ կուռք, անոր երկարամեայ յեղափոխական ու քաղաքական գործունէութեան մասին, որ իր մահէն ետք նոյնիսկ դաստիարակող անձնուիրութիւն եղած է մեզի:

Իսկական անունը՝ Կարապետ-Կարպիս, Հրաչ Փափազեան ծնած է Եոզկատ, 19 Յունիս 1892 թուականին:

Եօթը տարեկանին կը փոխադրուի Սեբաստիա, ուր հինգ տարի մնալէ ետք, 1904 թուականին կը ղրկուի Կ. Պոլիս իր ազգականներուն մօտ. հոն կը ստանայ իր կրթութիւնը՝ աւարտելով Կ. Պոլսոյ համալսարանի իրաւաբանական բաժանմունքը:

1910 թուականին կ'անդամակցի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը:

Առաջին աշխարհամարտի անմիջական վաղորդայնին, երբ Հ.Յ. Դաշնակցութեան ուշադրութիւնը կեդրոնացած էր Պոլիսէն փախստական կամ Պոլիս պահուըտած եղեռնագործներուն հետքերը գտնելու եւ զանոնք պատժելու անհրաժեշտութեան վրայ, կը փնտռուէին նուիրեալներ, որոնց պիտի վստահուէին այդ հետապնդումները եւ անոնց յաջորդելիք ահաբեկումները: Ուրիշներու կարգին Հրաչ Փափազեան եւս կ'ըլլայ ընտրեալներէն մէկը:

Պատերազմի հոչակումէն ետք կը ղրկուի զինուորական վարժարան՝ պահեստի սպայ դառնալու համար: Հազիւ սպայի աստիճանը ստացած՝ կը փախչի եւ կը պահուըտի նախ՝ Պոլիս եւ ապա՝ պատերազմի վերջին տարին թուրք սպայի մը ինքնութեան թուղթով կը յաջողի հասնիլ Հալէպ եւ դարձեալ կորսնցնել իր հետքը: Զինադադարին Հալէպ է եւ 1919 թուականին կը վերադառնայ Պոլիս:

Աչքերով կը տեսնէ Մեծ եղեռնը, եւ սիրտը կը լեցուի արդարահատուցման տենչով:

Այսպէս. Սեպտեմբեր 1919 թուականին Երեւանի մէջ գումարուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 9-րդ ընդհանուր ժողովին, տրուեցաւ որոշումը Հայոց ցեղասպանութեան պատասխանատուներու մահապատիժին:

Այս գործողութիւններուն տրուեցաւ «Յատուկ գործ» եւ «**Նեմեսիս**[1]» անունը[2]:

«**Նեմեսիս**» գործողութեան նպատակն էր պատժել 1915 թուականի Հայոց ցեղասպանութիւնը կազմակերպող եւ իրականացնող երիտթուրք պարագլուխներուն, 1918 թուականի Պաքուի հայկական ջարդի կազմակերպիչներուն եւ թուրքերու հետ գործակցած հայ դաւաճաններուն:

Այսպիսով՝ կեանք առաւ հայ ժողովուրդին դէմ թրքական պետութեան գործադրած ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատուները պատուհասող «**Նեմեսիս**» գործողութիւնը:

Հրաչ Փափազեանի իսկ առաջարկով իրեն կը վստահուի ամէնէն պատասխանատու աշխատանքներէն մէկը Պերլինի մէջ:

Թալաաթի ահաբեկումէն ետք անցած էր շուրջ վեց ամիս: Պերլինի մէջ, ուր խմբուած էր ջարդարարներու խումբը, անկարելի կը դառնար գտնել հետքը տոքթ. Պեհաէտտին Շաքիրին:

Պերլին գտնուող հայ հետախոյզները կրցած էին երեւան հանել հետքը Տրապիզոնի հայերու ջարդարար կուսակալ Ճեմալ Ազմիին, որ ծխախոտի խանութ մը բացած էր: Կրցած էին գտնել նաեւ հետքերը Պոլսոյ ոստիկանութեան տնօրէն եւ ապա Պէյրութի կուսակալ Ճեմալ Ազմիին եւ նաեւ ուրիշներու, բայց տակաւին անյայտ կը մնար Պեհաէտտինի թաքստոցը: Յապաղումը կրնար ձախողեցնել անոր դէմ արձակուած մահավճիռին գործադրութիւնը, որովհետեւ մէկ օրէն միւսը ան կրնար հեռանալ Պերլինէն: Ասկէ զատ՝ կարեւոր էր բուն իսկ ոճրագործներուն շրջապատէն իմանալ անոնց մշակած ծրագիրները եւ տեղեկանալ անոնց շարժումներուն մասին, որպէսզի ըստ այնմ ձեռք առնուէին անհրաժեշտ միջոցները:

Ահա Հրաչն է, որ կ'առաջարկէ Պոլսոյ պատասխանատու մարմինին թուրքի ծպտումով երթալ Պերլին եւ հոն ստեղծել ջարդարարներու շրջանակին մօտենալու եւ անոնց հետ մտերմանալու պատեհութիւնը: Լաւ թրքագէտ եւ թրքախօս, մօտէն ծանօթ թրքական բարքերուն եւ կրօնական սովորութիւններուն, այդ պատճառով ալ՝ նոյնիսկ թլփատուած: Մեծապէս պաղարիւն եւ շրջահայեաց՝ ան կը ցուցաբերէ առաջադրուած գործը լաւագոյն արդիւնքով գլուխ հանելու ինքնավստահութիւնը: Առաջարկը կ'ընդունուի:

Արշաւիր Շիրակեան այսպէս կը նկարագրէ Հրաչ Փափազեանը. «Վայելչակազմ ու կենցաղագէտ, **սալոն**ի[3] տղայ, որուն հոգիին խորը, սակայն, ցեղին վրէժխնդրութեան կրակը կը վառէր: Իրաւաբանական ուսանող Կարպիս Փափազեան կամ մեր

Հրաչ Փափազեան

ընկերական շրջանակներուն մէջ ծանօթ Հրաչ ծածկանունով, որ բուն անունն էր մեր մեծ նահատակներէն մէկուն, ընդունած էր Մեհմէթ Ալի թրքական անունը»[4]:

Հրաչ Պոլիսէն կը մեկնի Պերլին, կը վերածուի «թուրք» Մեհմէթ Ալիի եւ թուրք ջարդարարներու շրջանակը թափանցելով՝ իր մեծ ներդրումը կ'ունենայ Պեհաէտտին Շաքիրի եւ Ճեմալ Ազմիի ահաբեկման: Փաստօրէն ան հող պատրաստեց այս վրիժառութեան: Հետեւաբար Մեհմէթ Ալի (Հրաչ Փափազեան) յաջողութեամբ ներթափանցած էր **Իթթիհատ վէ Թերաքքի**ի («Միութիւն եւ յառաջադիմութիւն») շարքերը եւ զանոնք յայտնաբերած իրենց թաքստոցներէն:

Հետազօտական մեր աշխատութեամբ, ինչպէս նաեւ անմիջական բանաւոր պատմութեամբ ու յիշողութեան տեղեկութեամբ չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք, որ Հրաչ Փափազեանի ձեռքին մէջ եղած է միշտ **նեմեսիս**եան բազմաքայլ գործողութիւններու գլխաւոր բանալին:

Հրաչ Փափազեանի կեանքին ու գործունէութեան մասին ուսումնասիրական այս աշխատութիւնը բազմակողմանի դիտանկիւնէ ներկայացնելու եւ աւելի հարստացնելու համար բնականաբար դիմած ենք գրաւոր եւ բանաւոր վկայութիւններու:

Յատկապէս «**Նեմեսիս**» գործողութեան ժամանակահատուածի մասին կը դիմենք այդ գործողութեան մասնակից երկու «**Նեմեսիս**»-ականներու յուշերուն՝ Արամ Երկանեանի եւ Արշաւիր Շիրակեանի գրաւոր վկայութիւններուն:

Դաշնակցական երկու երիտասարդներ՝ Երկանեան եւ Շիրակեան, միասնաբար Պերլինի Ուլանտ-

շտրասէ (Ulanstraße) փողոցին վրայ 17 Ապրիլ 1922-ին արդար մահապատիժի ենթարկեցին Հայոց ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատուներէն երկուքը՝ բժիշկ Պեհաէտտին Շաքիրն ու Ճեմալ Ազմին:

Ցեղասպանները խնճոյքէն յետոյ հանգիստ կը ճեմէին շքախումբով Ճեմալ Ազիմի տան մօտակայքը. անոնց հետ էր նաեւ մէկ տարի առաջ Սողոմոն Թեհլիրեանի արձակած գնդակէն տապալուած Թալաաթ **փաշա**յի այրին: Դիմահար կրակոցով տապալելով Պեհաէտտին Շաքիրը՝ Ճեմալ Ազմին ու անոնց թիկնապահներէն մէկը՝ Արամ Երկանեանն ու Արշաւիր Շիրակեանը խոյս տուին ոստիկանութեան հետապնդումէն:

«**Նեմեսիս**»-ականներ Արամ Երկանեան եւ Արշաւիր Շիրակեան իրենց յուշերուն մէջ մանրակրկիտ կերպով մէկ կողմէ՝ կ'անդրադառնան Հրաչ Փափազեանի հետ առնչուած նիւթերուն, իսկ միւս կողմէ՝ Հրաչի տեսակէտներուն ու խօսքերուն:

Արամ Երկանեանի «Այսպէս. սպաննեցինք կամ գիրք մատուցման եւ հատուցման» գիրքը կը բաղկանայ քանի մը գլուխներէ, գիրքին խորագրէն արդէն կը պարզուի, թէ Երկանեան «**Նեմեսիս**» գործողութեան մասին իր յուշերը յանձնած է թուղթին: Գիրքին «Բ. յաւելուած»ի առաջին գլխուն «Կարեւոր ծանօթագրութիւն»ի մէջ կը կարդանք. «1. ՅԱՒԵԼՈՒԱԾը կը կազմէ լրացուցիչ մասը տոքթ. Պեհաէտտին Շաքիր **պէյ**ի եւ Ճեմալ Ազմի **փաշա**յի ահաբեկման գործին, քաղուածքներ քիմիական մելանով ծածկագիր օրագրութիւններէ, որոնք բացուած են 1923-ին եւ ընդօրինակուած Հ.-ի ձեռագրով»[5]:

Արամի յուշերուն եւ «Բ. յաւելուած»-ի մէջ Մեհմէթ Ալիի ով ըլլալու մասին ոչ մէկ ակնարկութիւն կայ, տակաւին «Կարեւոր ծանօթագրութիւն»-ի մէջ հետեւեալը գրուած է. «Բացառելով Մեհմէթ Ալի **պէյ**ը, որու դերը ըլլալով միայն ու միայն թրքական շրջանակէն տեղեկատուութիւններ տալ՝ խիստ նախազգուշութեամբ հեռու պահուած է այլ քայլերու մասնակցութենէ»[6]:

Տարիներ վերջ Մեհմէթ Ալին կը բացայայտուէր, թէ Հրաչ Փափազեանն է:

Երկանեանի «Այսպէս. սպաննեցինք կամ գիրք մատուցման եւ հատուցման» գիրքի «Բ. յաւելուած»-ի «ՄԵՀՄԷԹ ԱԼԻ **ՊԷՅ**» գլխուն տակ հետեւեալ տողերուն մէջ կը բնութագրուին Մեհմէթ Ալի **պէյ**ը (Հրաչ Փափազեան) եւ անոր յուշերը.

«Թալաաթի ահաբեկման օրերու փորձառութիւններէն սորված, թէ ինչպիսի թափառումներ ու հետապնդումներ կը պահանջէ անունները փոխուած, զգուշաւորութիւնով թաքնուած ոճրագործներու հասցէն գտնելու, ստուգում ընելու գործը (վեց հոգեհան ամիսներ տեւեր էր Թալաաթի հասցէն գտնելը).

«1. Որպէսզի կարճեցուի նպատակին հասնելու ժամանակը, եւ թափառումներու, հետապնդումներու հետ կապուած անպատեհութիւնները նուազ ըլլան:

«2. Որպէսզի «սուրբ գործը» արագ հասնի իր վախճանին, քանի որ ստուգուած էր, թէ մահապարտները կը պատրաստուին թողելու Գերմանիան

«Նեմեսիս»-ի կազմակերպիչներն ու իրականացնողները

եւ երթալ, միանալու Էնվէրին ու Քեմալին, էական կը դառնար աչք մը ունենալ թուրք շրջանակէն ներս:

«Անոր դերը պիտի ըլլար գլխաւորապէս հայթայթել փնտռուածներու հասցէն: Մասնաւորապէս՝ Պեհաէտտինի հասցէն:

«Իսկ դատաստանը տեղի ունենալէ յետոյ, ըստ գործի առած ընթացքին, եթէ անհրաժեշտ դառնար մնալ եւ շարունակել ներքին լուրերը հաղորդել, որպէսզի տեղեակ ըլլայինք թուրքերու մտածումներուն:

«Այսպէս կը ծնէր Մեհմէթ Ալի **պէյ**ը»[7]:

Մեհմէթ Ալի **պէյ**ի եւ միւս «**նեմեսիս**»-ականներու սուրբ գործի յաջողութիւնը «քիմիական մելանով ծածկագիր օրագրութիւններու» շարքին մէջ այսպէս կ'եզրակացուի.

«Եւ վերջապէս Ապրիլ 17-ի գիշերը:

Ուլանտշտրասէի վրայ կը յածին միլիոնով անթաղ հայ մեռելներու վրիժականչ հոգիները երեք ստուերներու մէջ:

Դեռ Մեռելոցի օրն է: Չփակուած՝ կը պահանջեն անոնք իրաւ հոգեհանգիստ մը տալ իրենց:

Եւ կը կրակուին երկու գնդակներ: Ու թուրք արիւնով ու արցունքով կը հովանան հայ մեռելները:

«Նոյն գիշերը, – կը պատմէ Մեհմէթ Ալի, – նորէն միասին ենք Էքմէլին հետ գիշերային մեր արշաւանքներուն մէջ: Բացառապէս աւելի հեթանոսական, քան երբէք, բագոսային՝ տեղէ տեղ»:

Ժամը առտուան երկուքին յափրացած՝ փողոցն ենք արդէն:

Կ'ուզեմ մեծ եղբօր հոգածութիւն ցոյց տալ:

Ինչ բախտ, որ Էքմէլ իր տղամարդութիւնը վիրաւորուած զգալով՝ կը մերժէ զիս ընկերանալ իրեն մինչեւ տուն: Այլապէս ո՞վ կրնար երաշխաւորել նման պահերու անակնկալին առեղծուածը: Որովհետեւ չեմ գիտեր, թէ «օրը» հասունցած է այնքան:

Կը բաժնուինք: Ես՝ իմ սենեակը, Էքմէլ՝ իր տունը:

Կը քնանամ՝ գլուխս բարձին դրած-չդրած:

Առտուան ժամը 6-ին հեռախօսը կը ցնցէ զիս:

Էքմէլն է:

– Մեհմէթ Ալի, հօրս գլուխն ալ կերան...

– Պօշպողազլըգ իսթէմէզ[8], Էքմէլ..

– **Վալլահի, Էրմէնիլէր պապամը վէ Պեհաէտտին Շաքիր պէյի տէ վուրմուշլար կէչէն ագշամ**...»[9]:

Այնուհետեւ «ՄԵՀՄԷԹ ԱԼԻ **ՊԷՅ**» գլխու վերջաւորութեան մեզի կը ներկայացուեն Պերլինի մէջ լոյս տեսած թերթերը, որոնք լուսարձակի տակ կ'առնեն 17 Ապրիլ 1922-ին երկու «**նեմեսիս**»-ականներու կատարած գործողութիւնը:

«**Նեմեսիս**» գործողութեան, յատկապէս՝ տոքթ. Պեհաէտտին Շաքիր **պէյ**ի եւ Ճեմալ Ազմի **փաշա**յի ահաբեկման նախապատրաստման ու գործընթացի մասին կը դիմենք կրկին Արշաւիր Շիրակեանի «Կտակն էր նահատակներուն» գիրքին, որուն մէջ ան կը նկարագրէ «Մեհմէթ Ալիի»՝ Հրաչ Փափազեանի մասին մանրամասնութիւններ:

Շիրակեանի յուշերուն մէջ Հրաչի կողքին կը կարդանք նաեւ Արամ Երկանեանի եւ միւս արդարահատոյցներուն մասին: Շիրակեան հետեւեալը կը գրէ. «Արամը գտայ եւ մտանք սրճարան մը ու խորհրդակցութիւն մը ունեցանք ապագայի մեր ընելիքներու մասին: Ան ալ շարք մը նորութիւններ բերաւ. տեղեկացուց Հրաչ Փափազեանի պարագան: Մասնաւոր կարգադրութեամբ Հրաչը թուրք ուսանողի դերը պիտի կատարէր թուրք շրջանակներու մէջ եւ այդ հանգամանքով ալ եկած էր Հռոմ՝ Պերլին անցնելու համար: Շատ հետաքրքրական էր Հրաչի պարագան եւ կրնար մեծ օգուտներ ունենալ: Մեր հետապնդումներուն ատեն մեծ դժուարութիւններու կը հանդիպէինք եւ կը յոգնէինք: Այնպէս որ թուրք շրջանակի մէջ գտնուող մեզմէ մէկը անգնահատելի ծառայութիւն կրնար մատուցանել՝ դիւրացնելով մեր գործը, կարեւոր անձնաւորութիւնները մեզի տեղեկագրելով»[10]:

Ապա կ'աւելցնէ. «...Կը ճանչնայի Հրաչը. ուշիմ եւ գործունեայ, Կ.Կ.-ի վստահելի գործավարը, եռանդուն երիտասարդ մըն էր, որմէ հրահանգներ ալ ստացած էի Վ. Իհսանի[11] ահաբեկման շրջանին: Իրաւաբանական համալսարանի ուսանող, թուրքի մը չափ սահուն թուրքերէն կը խօսէր եւ լաւատեղեակ էր թրքական բարքերուն ու սովորութիւններուն: Բոլորովին ապահով էի յաջողութեան: Արամը նորութիւն մը եւս աւելցուց:– Թէ Հրաչ թլփատման պզտիկ գործողութեան մըն ալ ենթարկուած է... կատարեալ դարձնելու համար իր «թրքացումը»: Յայտնեմ, թէ հետագային Պերլինի մէջ Հրաչը շատ նուրբ եւ անթերի կերպով կատարեց իր դերը եւ շատ օգտակար եղաւ մեզի՝ խնայելով մեզի այն թանկագին ժամանակը, զոր ստիպուած պիտի ըլլայինք վատնել երկարատեւ ու տաժանելի հետապնդումներու համար»[12]:

Շիրակեան «ՀՐԱՉ ԿԸ ԳՏՆԷ, ԵՒ ԵՍ ԿԸ ՍՏՈՒԳԵՄ» խորագրին տակ կը նկարագրէ Հրաչի հետախուզութեան իբրեւ արդիւնք Պեհաէտտին Շաքիրին բնակարանի յայտնութիւնը: Շիրակեան կը գրէ. «Յաջորդ օրը Քուրֆիւրսթենտամի վրայ գտայ Հրաչը, դէմքը կը ճառագայթէր: Նշան ըրաւ, որ հետեւիմ իրեն. քովընտի փողոց մը մտանք:

«Թորգում[13],– ըսաւ ժպտելով,– քեզի հրաշալի լուր մը տամ... Պեհաէտտին Շաքիրին բնակարանը գտայ...

«Ուրախութենէս ուժով մը սեղմեցի ձեռքը:

«Շահանը գիտէ,– աւելցուց,– այսօր միեւնոյն սրճարանը պիտի հաւաքուինք եւ մեր որոշումին համաձայն՝ ուղիղ հասցէն չպիտի տանք Ս.-ին, նախնք ինչ պիտի ընէ...

«Անհամբերութեամբ Հրաչէն առի հասցէն եւ մեկնեցայ անձամբ ալ ստուգելու համար»[14]...:

Արշաւիր Շիրակեան, արձանագրած իր յուշերուն մէջ, ահա այսպէս կը բնութագրէ Հրաչ Փափազեանի Պերլին հասնիլն ու անոր հետախուզական գործունէութիւնը.

«Մեզմէ երկու ամիս առաջ հասած էր Պերլին եւ յաջողած էր մտերմանալ Ճեմալ Ազմիի տղուն՝ Էքմէլին հետ եւ դառնալ անոր զուարճութեան ընկերը, տան փնտռուած բարեկամը կամ հիւրը, որուն ներկայութեան ամէն ինչ կարելի էր խօսիլ: Ներկայացած անոնց իբրեւ կեսարացի մեծահարուստի մը զաւակ՝ սիրելի դարձած էր այդ գազանի որջը այցելող շարք մը բարձրաստիճան թուրքերուն, որոնք հոն հաստատուած էին կամ կու գային, կ'անցնէին, ինչպէս նաեւ սիրելին՝

Դրօ եւ Հրաչ

հանրմներուն: «Մեհմէթ Ալին» քանիցս «**քավալիէ**»[15] եղած էր նոյնիսկ Թալաաթ **փաշա**յին այրիին:

«Արտաքնապէս անխոռով, սրտին քար դրած՝ օրերով մտիկ կ'ըներ ջարդարարներուն անմարդկային պատմութիւններուն, հայկական կոտորածի անլուր դէպքերուն եւ գազանավայել մանրամասնութիւններուն: Օր մը դահլիճին մէջ այդ անխիղճ հանրմներն ու գազան **պէյ** ու էֆենտիները հաճոյքով ու ծիծաղներ արձակելով՝ կը պատմեն, թէ ինչպէս Ճեմալ Ազմին հպարտութեամբ իրենց հաղորդած է սա անհերեւակայելի հրէշութիւնը.

«Տրապիզոնի հայերուն երկսեռ առողջ ու սիրուն մանուկները զատեցի, մէկ քանին՝ 10-13 տարեկան նուէր տուի տղուս, իսկ միւսներն ալ կողովներու եւ սնտուկներու մէջ տեղաւորել տալով՝ ծովը թափել տուի:

«– **Պու սենէ խամսի չօղալսըն**»[16],– աւելցուցած էր ճիւաղը՝ ծիծաղելով:

«Հրաչը կամ Մեհմէթ Ալին այդ ամէնը կը լսէր անխոռով՝ արտաքնապէս, այլ ներքնապէս չարչարուելով ու տանջուելով: Ձիղերը քայքայուած էին, ինչպէս կը զգայի ու կը տեսնէի ամէն հանդիպումիս»[17]:

Շիրակեան կ'աւելցնէ. «1922 Յունիս 1-ին Հրաչին հետ ճամբայ ելանք դէպի Պուլկարիա: Ան Ֆիլիպէ գնաց, իսկ ես քանի մը օր հանգիստ ընելու նպատակով գացի Վառնա, ուր հայկական հիւպատոսարանէն նոր անցագիր մը պիտի առնէի, նոր անուն-մականունով մը ճամբորդելու համար»[18]:

«**Նեմեսիս**» գործողութեան աւարտէն ետք Արշաւիր Շիրակեան իր «Կտակն էր նահատակներուն» գիրքին մէջ, «Մեհմէթ Ալիի»՝ Հրաչ Փափազեանի մեծ դերակատարութեան մասին իր ունեցած տպաւորութիւնը կը յայտնէ հետեւեալ տողերուն մէջ. «Տարիներ անցած են այդ ահաւոր օրերուն վրայէն: Երբեմն կ'անդրադառնամ, որ առանց «Մեհմէթ Ալիի» կամաւոր զոհողութեան՝ հաւանաբար հրէշները չգտնէինք, եւ անոնք ազատէին մեր վրիժառու գնդակներէն, ինչպէս ազատեցան շարք մը արիւնարբու իթթիհատականներ՝ Նազըմը, Մուսամմերը եւ այլն»[19]:

Այստեղ կը մէջբերենք նաեւ Սողոմոն Թեհլիրեանին նուիրուած «Թեհլիրեան արդարահատոյցը» գիրքի «Երրորդ մասը», որ «Հատուածներ Սողոմոն Թեհլիրեանի յուշերէն» ենթագլուխի տակ՝ «Բ) Նախապատրաստական աշխատանքներ» վերնագրի տակ, Հրաչի մասին ակնարկութիւն կը կատարուի: Հոն մանրամասն կը բացատրուի Հրաչի իսկական անունի եւ անոր խիստ կարեւոր արժանիքներուն մասին: Այսպէս. «Հրաչ ծածկանունն է Հրաչի կամ Կարպիս Փափազեանի, դաշնակցական եւ ազգային իրականութեան մէջ հետագայ տասնամեակներուն ծանօթ իբր Հրաչ Փափազեան: Իր անսովոր խորհրդապահութիւնը, ինչպէս եւ, անշուշտ, գործին բնոյթը պատճառ եղած են, որ Հրաչ Փափազեանի կենսական, անփոխարինելի դերը, նաեւ առասպելականի ճարտարութիւնը՝ իբր ընդյատակեայ գործի կազմակերպիչ, տեղեկատու գործիչ ու պատասխանատու, չարժանանան ընդհանուր ճանաչման եւ գնահատումի:

Զափազանցութիւն պիտի չըլլար զայն նկատել **նեմեսիս**եան բազմահանգրուան այս գործին ոգին, գլխաւոր շարժիչը՝ սկսած զինադադարէն, պոլսական ահաբեկումներէն, ուր կը գործէր իբրեւ տեղւոյն Կեդրոնական կոմիտէի գործավար»[20]: ■

Հղումներ

1 Յունական դիցաբանութեան վրէժի չաստուածին՝ անուան հետեւողութեամբ:

2 Տասնապետեան Հրաչ, «Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհ. ժողովը (1890-1924)», Աթէնք, 1688, էջ 162:

3 Կենցաղագէտ, բանիմաց մարդ:

4 Շիրակեան Արշաւիր, «Կտակն էր նահատակներուն», Պէյրութ, 1965, էջ 262:

5 Արամ Երկանեան, «Այսպէս. սպաննեցինք կամ Գիրք մատուցման եւ հատուցման», Պէյրութ, տպարան «Օնիպար», 1954, էջ 79:

6 Նոյն տեղը, էջ 79:

7 Նոյն տեղը, էջ 89-90:

8 Թրքերէն՝ boşboğazlik istemez, կը նշանակէ շատախօսութիւն մի ընէր: Այսինքն՝ անհաւատալի բան կը յայտնես:

9 «Աստուած վկայ, հայերը գիշերը հօրս եւ Պեհաէտտին Շաքիր պէյին գնդակահարեցին»: Արամ Երկանեան, «Այսպէս. սպաննեցինք կամ Գիրք մատուցման եւ հատուցման», Պէյրութ, տպարան «Օնիպար», 1954, էջ 98-99:

10 Արշաւիր Շիրակեան, «Կտակն էր նահատակներուն», Պէյրութ, տպարան կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1965, էջ 206:

11 Վահէ Իհսան:

12 Արշաւիր Շիրակեան, նշվ. աշխ., էջ 206 եւ 208:

13 Արշաւիր Շիրակեանի ծածկանունը, որ արձանագրուած է նաեւ «Թ.» միայն:

14 Արշաւիր Շիրակեան, նշվ. աշխ., էջ 261-262:

15 Պարային զոյգը:

16 Այս տարի խամսի ձուկը թո՛ղ շատնայ: Խամսին՝ համսին է, այսինքն՝ անձրուկ, հարինգակերպերու կարգի ծովային մանր ձուկ:

17 Արշաւիր Շիրակեան, «Կտակն էր նահատակներուն», Պէյրութ, 1965, էջ 262-264:

18 Նոյն տեղը, էջ 320:

19 Նոյն տեղը, էջ 262-264:

20 «Թեհլիրեան արդարահատոյցը», խմբագիր՝ Յարութիւն Քիւրքճեան, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի «Վահէ Աէթեան» տպարան, Պէյրութ, 1981, էջ 51:

Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության կարկառուն դեմքերը. Լևոն Բաշինջաղյան

Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոն

Առաջին Հանրապետությունը կազմակերպված պետություն էր, և ինչպես ամեն մի պետություն որոշակի ջանքեր գործադրեց՝ ունենալու ինչպես կառավարման պետական մարմիններ, խորհրդարան, այնպես էլ բանակ, միլիցիա և ներքին գործերի մարմիններ, նաև առ այսօր պատմաբանների հետազոտման դաշտից դուրս մնացած հատուկ ծառայություններ՝ հետախուզական և հակահետախուզական կառույցներ, որտեղ աշխատում էին հիրավի նվիրյալներ: ՀՀ գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետը նրա ստեղծման իսկ պահից Սարդարապատի ճակատամարտի հերոս, բազմահմուտ փոխգնդապետ Ա. Կ. Շնեուրն էր: 1919 թ. սեպտեմբերից սկսած մինչև 1920 թ. ապրիլը այդ բաժանմունքի պետն է եղել կապիտան Վ. Գ. Մուրադյանը, որն անկուսակցական էր: 1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը հետախուզական բաժանմունքի գործունեությունը ղեկավարել է Տ. Թ. Դևոյանցը, որը ՀՅԴ անդամ էր, Դրոյի դասընկերը, հենց որի գլխավորությամբ էլ 1919 թ. կեսերին Թուրքիայի սրտում՝ Կ. Պոլսում, գաղտնի ձևավորվեց և մինչև 1920 թ. սկիզբը գործեց հայկական հետախուզական խումբը, որը Հայաստան էր առաքում միանգամայն արժեքավոր հետախուզական տեղեկություններ Թուրքիայի, Անդրկովկասի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների, հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաշարժերի մասին և այլն, իսկ արդեն 1920 թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը՝ դեկտեմբերի 2-ը, այդ կառույցը գլխավորել է Մ. Ն. Դոդոխյանը:

Հետախուզության բաժանմունքում և նրա ենթաճյուղերում աշխատում էր պոդպորուչիկ Լևոն Գևորգի Բաշինջաղյանը (հանձնարարությունների գծով սպա, այնուհետև՝ հետախուզության ռեզիդենտ Վրաստանում): Լևոն Գևորգի Բաշինջաղյանը (կեղծանունը՝ Լևոն Բաշ) հանրաճանաչ հայ նկարիչ և բանաստեղծ Գևորգ Ջաքարի Բաշինջաղյանի չորս որդիներից ավագն էր, որի մասին խորհրդային հայտնի հետախույզ Կարեն Արմենի Խաչատուրովը չափազանց մեծ դրվատանքով է արտահայտվում:

Նա ծնվել է Թիֆլիսում [04.01.1884/93 - 11.10.1938] հայտնի նկարչի ու մտավորականի ընտանիքում և վախճանվել 1938 թվականին: Դատելով ժամանակակիցների մի շարք արժանահիշատակ վկայություններից՝ Լևոն Բաշինջաղյանը ևս տաղանդավոր նկարիչ էր ու ինքնատիպ բանաստեղծ: Պահպանվել է Լ. Բաշինջաղյանի շատ հետաքրքիր և տպավորություններով լի «Կովկասյան օրագիրը», որը վերաբերում է Առաջին աշխարհամարտի 1918 թ. իրադարձություններին:

Ավագ եղբայրը՝ կովկասագետ, ազգագրագետ-երկրագետ Արմեն Գևորգի Բաշինջաղյանը (1903-17.10.1938) ևս գրեթե նույն ճակատագիրն է ունեցել: Արմեն Բաշինջաղյանը 1930 թ. մարտից եղել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի կովկասյան կաբինետի գիտատեխնիկական աշխատակից, այնուհետև՝ կաբինետի քարտուղարը, այնուհետև՝ նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի (վերանվանվել է 1926 թ., մինչ այդ եղել է նյութական մշակույթի պատմության ռուսաստանյան ակադեմիա) ասպիրանտ (1930-1935 թթ.), որտեղ «Ֆեոդալիզմը Հայաստանում և Մանանդյանի պատմական կոնցեպցիան» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն. եղբոր նման ինքն էլ է եղել ակադեմիկոս Նիկողայոս Մառի լեզվաբանական-ազգագրական-հնագիտական գիտախմբի և դպրոցի համակիր և մասնակից: Սակայն ինչպես և իր տաղանդավոր եղբայրը՝ հետախույզ-գիտնական Լևոն Բաշինջաղյանը, 1938 թ. փետրվարի 4-ին անհիմն ձերբակալվել է և ստալինյան ԽՍՀՄ ՆԳԺԿ հատուկ եռյակի որոշմամբ դատապարտվել պատժի բարձրագույն ձևին՝ մահապատժի, որն ի կատար է ածվել 1938 թ. հոկտեմբերի 17-ին Լենինգրադում:

Լևոն Բաշինջաղյանի՝ որպես հասուն մարդու կայացման առաջին իսկ քայլերը եղել են հստակ և անպաճույճ: Դեռևս 20-րդ դարասկզբին՝ 1903-1912 թթ., Լևոն Բաշինջաղյանն ավարտել է թիֆլիսյան 3-րդ գիմնազիան, իսկ 1913-1916 թթ. եղել է Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանող:

Այնուհետև նա դարձել է հայտնի Պավլովյան յունկերական ուսումնարանի սան: Առաջին աշխար-

համարտը նոր և անակնկալներով, ինչպես նաև փորձություններով հագեցած էջ է բացում նրա ճակատագրում. Լևոն Բաշինջաղյանը զորակոչվում է ցարական բանակ: Արդեն 1917 թ. փետրվարից դառնում է ռուսական կովկասյան բանակի մարտական սպա:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո Լևոն Բաշինջաղյանը դառնում է նոր ոտքի կանգնող և կայացման ձգտող հայկական պետության պետական անվտանգության համակարգի՝ հետախուզական ծառայության կարկառուն դեմքերից և նոր պետականության համար կենսակառորեն կարևոր, գործնականում խիստ անհրաժեշտ ուժային կառույցների ձևավորման մասնակիցներից և հիրավի երդվյալ նվիրյալներից մեկը: Այդ կապակցությամբ պրոֆեսոր Կարեն Խաչատուրովը ջերմությամբ անդրադառնալով Լևոն Բաշինջաղյանի կերպարին և հիշատակումներ անելով նրա «Կովկասյան ձեռագիր» օրագրի մասին՝ հաստատում է, որ դրանում հետաքրքիր փաստեր կան 1918 թ. գարնանից մինչև 1920 թ. հունվար ամիսը տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունների մասին՝ Առաջին հանրապետության հռչակումից մինչև ՀՀ դե ֆակտո ճանաչումը դաշնակիցների կողմից: Եվ ինչպես ակնհայտ է դառնում Հայկական դիվիզիայի գծով ՀՀ զինվորական նախարարի 1918 թ. օգոստոսի 26-ի հրամանագրից, Հայաստանի Հանրապետության հակահետախուզության պետ Բաշինջաղյանը վերագործուղվել էր գլխավոր շտաբ՝ հատուկ հանձնարարությունների համար:

Բավականաչափ հետաքրքիր է գլխավոր շտաբի հետախուզական մի ամփոփագիր (N 8), որը վերաբերում է մինչև 1919 թ. հունվարի 5-ը ընկած ժամանակահատվածում Կարսի մարզում ծավալված իրադարձություններին ու զանազան անցքերին: Ամփոփագրի հեղինակը՝ հանձնարարությունների գծով սպա ***Լ. Բաշինջաղյանը,*** անդրադառնում է Կարսի մարզի որոշ զորամասերում իշխող կարգուկանոնին՝ շեշտելով, որ չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ դասալքությունը շարունակվում է՝ զուգահեռաբար անդրադառնալով նաև մնացած ոչ մեծաթիվ թուրքական զորամասերում իշխող իրավիճակին, թուրք սպաների լայն քարոզչության մասին Կարսի մարզի բնակչության և մասնավորապես քրդերի մեջ՝ ընդդեմ հայերի: Տեղեկագրում նշվում էր, որ մարզի թուրքական բնակչությունը լավ զինված է՝ փաստելով, որ Կաղզվանի օկրուգի Նախիջևանի շրջանում, Դիգորում և այլ գյուղերում, ինչպես նաև Կիզիլ-Չախչախ (կամ Ղըզըլ-Չախչախ) կայարանում թուրքերի կողմից մթերքի մեծ պաշարներ են կուտակվել: Վերջնամասում նշվում էր Շահթախթիի թաթարների ակտիվության, ինչպես նաև քրդերի եռանդուն կուտակումների մասին Արալիխի շրջանում՝ Բաշքենդ, Օրթաքենդ, Շախլեր և այլ գյուղերում:

Բաշինջաղյանը կատարելով գլխավոր շտաբի հանձնարարականները՝ հայտնվում էր Հայաստանի թեժ կետերում՝ ադրբեջանահայկական հակամարտության գոտում: Նախիջևանում հակառակորդի հակահայկական գործողությունների, գործակալական ցանցի մասին հետաքրքիր փաստեր են պարունակվում հատուկ բաժնի պետի 1919 թ. մարտի 13-ի զեկուցագրում (N 136), որի տակ ստորագրել է հանձնարարությունների գծով սպա, պոդպորուչիկ Բաշինջաղյանը: Փաստեր էին բերվում «Նախիջևանյան Հանրապետության» մասին՝ նշելով, որ այդ նպատակով Թիֆլիս-Ելիզավետպոլ-Բաքու է ուղարկվել Բագրամ խանը՝ ընդգծելով, որ անգլիացիները նրան շատ սիրալիր են ընդունել՝ սկզբունքորեն ընդունելով նախիջևանյան այդ կառավարության նպատակները: Ասվում էր, որ Բագրամ խանը արժանացել է ընդունելության Վրաստանի վարչապետի և արտաքին գործերի նախարարի կողմից, որոնք շնորհավորել են վերջինիս նախիջևանյան կառավարության հաջողությունների կապակցությամբ՝ Հայաստանի դեմ պայքարում՝ խնդրելով ողջունել փառապանծ թաթարական զորքերին: Նշվում էր, որ Բագրամ խանի նպատակներից մեկն էլ Ելիզավետպոլից և Բաքվից օգնության ձեռքբերումն է փողով և զենք ու զինամթերքով, որ խոռվարարներն ունեն Պարսկաստանից բերված մեծ քանակությամբ փամփուշտներ, զինվորական հրահանգավորումը անցկացվում է թուրքական և ադրբեջանական սպաների կողմից, որոնց ղեկավարում էր Խալիլ բեյը: Այդ կապակցությամբ նաև նշվում էր, որ ձերբակալվել է նախիջևանյան կառավարության հրահանգով Երևան ժամանած Հաջի Ռիզա Քասումբեկովը՝ լրտեսության մեղադրանքով, որից պահանջվել է վճարել 100 հազար ռուբլի տուգանք և հեռանալ Թավրիզ՝ նշելով, որ Նախիջևանի և Բաքվի միջև պահպանվում է կայուն հեռագրակապ՝ Թավրիզ-Թեհրան գծով: Տեղեկատվության մեջ նշվում էր նաև, որ ապստամբների համար անհրաժեշտ հաղորդակցությունն իրականացվում է Մակու-Բայազետ-Ղարաքիլիսա գծով:

Արտաքին գործերի նախարարին հասցեագրված 1919 թ. ապրիլի 5-ի (N 91) գրությունում գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Դ***ոլուխանյանը*** և բաժանմունքի պետի պաշտոնակատար պոդպորուչիկ Բ***աշինջաղյանը*** տեղեկացնում էին, որ Արալիխի շրջանում (Բաշքենդ) կենտրոնացած են 3000 թաթարներ ու քրդեր, որոնցից 1000-ը ոչ վաղուց եկել են Մակուից:

Զինվորական գերատեսչության գծով մի այլ փաստաթղթում՝ թվագրված 1919 թ. հուլիսի 25-ի դրությամբ, արձանագրվում է, որ գեներալ Հ. Քիշմիշյանից ստացված հուլիսի 18-ի գրությամբ (№ 1220) պարզ է դարձել, որ ինքն արդեն անցել է իր նոր պարտականությունների կատարմանը: Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հոկտեմբերի 20-ի (N 271) հրամանի համաձայն՝ Բաթումի մարզում զինվորական կցորդ է նշանակվում պորուչիկ Անիևը, Բորչալուի գավառի չեզոք գոտու նահանգապետին առընթեր պորուչիկ Լ. Բաշինջաղյանը:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ հռչակման պահից սկսած՝ պոդպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի կազմում էր, նրա տարբեր ենթաճյուղերում: Եվ եթե Լ. Բաշինջաղյանը

1918-1919 թթ. հանձնարարությունների գծով սպա էր, ապա 1920 թվականի սկզբին՝ ՀՀ զինվորական դատարանի քարտուղարի օգնական, իսկ այնուհետև՝ հետախուզության ռեզիդենտ Վրաստանում, որտեղ հետախուզական ծառայությունը փաստացի ղեկավարում էր գեներալ-մայոր Հովսեփ Արտեմի Քիշմիշյանը, որը համակողմանի պատրաստված կիրթ անձնավորություն էր, տիրապետում էր ֆրանսերենին և մի շարք այլ լեզուների, ինչը կարևոր էր այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ հարաբերվելու տեսանկյունից:

1920 թ. ապրիլի 5-ի N 108 զեկուցագրում Հ. Քիշմիշյանը հայտնում էր այն մասին, որ զինվորական գործի գլուխ կանգնած անձանց հերթափոխության խնդիրը իրեն մղում է անհապաղ զեկուցելու, որ զինվորական գործակալի վրա դրված գլխավոր խնդիրներից մեկը հետախուզության կազմակերպումն է՝ ընդգծելով, որ այդ նպատակով իր կողմից գրվել է մանրամասն հրահանգ, որն այնուհետև հաստատվել է զինվորական նախարարի կողմից: Սակայն Քիշմիշյանը դժգոհում էր, որ ո՛չ նյութական միջոցները, ո՛չ էլ այդ բնագավառում իրավասու անձինք իր մոտ չեն ուղարկվել, եթե նկատի չառնվի պոդպորուչիկ Բաշինջաղյանի գործուղումը (ի դեպ, դիվանագիտական հավատարմատարին կից զինվորական վարչության ղեկավարի կարգադրության տակ գտնվող պոդպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը որոշ ժամանակ անց նշանակվում է Բորչալուի գավառի «Չեզոք» գոտու ղեկավարությունը իրականացնող ամերիկյան սպային կից կապերի գծով սպա, ինչի մասին հաղորդվում էր ՀՀ զինվորական գերատեսչության 1920 թ. նոյեմբերի 13-ի հրամանում (N 467)՝ հիմք ընդունելով զինվորական կցորդի N 284 զեկուցագիրը): Քիշմիշյանը սակայն հայտնում է վերջինիս, որ, ժամանելով նոյեմբեր-հունվարին, պոդպորուչիկ Բաշինջաղյանը հեռացել է անհայտ հասցեով՝ ո՛չ մեկին տեղյակ չպահելով (ակնհայտ է, որ այս հանգամանքը նյարդային վիճակի մեջ էր գցել գեներալ Քիշմիշյանին, ինքնին հասկանալի է, որ նա չէր էլ կարող ամեն ինչի մասին տեղյակ լինել, և բոլոր օղակները չեն, որ պետք է ենթարկվեին իրեն, վերջին հաշվով, դա հատուկ ծառայություն էր, և ամեն մեկն ուներ իր իրավասությունների շրջանակը՝ գումարած այն հանգամանքը, որ հայկական հետախուզության կառուցվածքը նոր-նոր էր ձևավորվում և շատ բան դեռ հստակ չէր - Վ. Վ.): Վերոհիշյալ հանգամանքը հաստատում է նաև հենց Քիշմիշյանը՝ Բաշինջաղյանի վարքագծից եզրահանգելով, որ վերջինս գործուղվել է ինքնուրույն գործառնություններով: Այդ մասին գեներալ Քիշմիշյանը կարող էր տեղյակ չլինել, քանզի Լ. Գ. Բաշինջաղյանը Թիֆլիս էր գործուղվել դեռևս նախկին դիվանագիտական հավատարմատար Լ. Գ. Եվանգուլյանի ժամանակ: Այդ մասին մենք տեղեկանում ենք Սաշա (Ալեքսանդր) Խատիսյանի 1919 թ. հուլիսի 14-ի հեռագրից՝ ուղղված Լեոյին (Լևոնին՝ Լ. Եվանգուլյանին), որով խնդրվում էր հիշատակվող գրությամբ ներկայացող Լ. Գ. Բաշինջաղյանին լիովին վստահել մեր քաղաքականության բոլոր գաղտնիքները՝ ընդգծելով, որ նա գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքից է: Ալ. Խատիսյանը սույն գրությամբ խնդրում էր Լ. Բաշինջաղյանին հնարավորություն տալ հարաբերությունների մեջ մտնելու բոլոր այն անձանց հետ, որոնց հետ ինքը նպատակահարմար կգտնի՝ նրան հետաքրքրող ցանկացած հարցի վերաբերյալ՝ նաև տեղեկացնելով, որ հետաքրքրություն ներկայացնող հարցերի մեջ են եղել կամավորական բանակի մտադրությունները, անգլիացիների բռնած դիրքորոշումը և այլ խնդիրներ:

Հենց այդ հանգամանքն էլ առաջ էր բերում գեներալ Հ. Քիշմիշյանի դժգոհությունը, որը ցանկանում էր ըմբռնել իրավիճակի բոլոր նրբերանգները, տնօրինել կադրուժը: Այդպես շարունակվում է նրա գործունեությունը: 1920 թ. մարտի 22-ին (N Po 180) ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Տ. Դևոյանցը կառավարությանն առընթեր հատուկ հանձնարարությունների գծով սպային ուղղված գաղտնի հեռագրում հայտնում էր, որ զորքերի հրամանատարը համաձայն է գործուղել պոդպորուչիկ Լևոն Բաշինջաղյանին զբաղեցված պաշտոնից ազատվելու պայմանով: Իսկ արդեն գլխավոր շտաբի պետին հասցեագրված 1920 թ. մարտի 24-ի (N 2518) հեռագրում ԱԳ նախարարության գլխավոր քարտուղարը՝ ի պատասխան N 5495 տեսչական գրության և նկատի ունենալով պորուչիկ Բաշինջաղյանի զբաղեցրած պաշտոնում որպես ԱԳ նախարարի անձնական քարտուղար մնալու ծայրահեղ անհրաժեշտությունը և նախարարության ծառայողների կադրային փոքր թվաքանակը՝ խնդրում էր համապատասխան զեկույցը ներկայացնել զինվորական նախարարին՝ Բաշինջաղյանին բանակի պահեստազոր տեղափոխելու մասին դրան հաջորդող հրամանագրի արձակմամբ:

Գլխավոր շտաբի պետին ուղղված 1920 թ. մարտի 25-ի (N 1881) գաղտնի հեռագրում ԱԳ նախարարության գլխավոր քարտուղարը հիմք ընդունելով հետախուզական բաժանմունքի պետի դիմումագիրը՝ տեղեկացնում էր, որ արտգործնախարարությանը փոխանցելով զորքերի հրամանատարի գրությունը Բաշինջաղյանի գործուղման մասին՝ միաժամանակ խնդրում է զեկուցել զինվորական նախարարին՝ տեղափոխման օրինականացման համար զինվորական գերատեսչության և արտգործնախարարության գծով հրամանագրեր արձակելով: 1920 թ. ապրիլի 24-ին (N 6829) գլխավոր շտաբի տեսչական բաժնի պետը ԱԳ նախարարություն ուղարկված պաշտոնագրում հաղորդում էր, որ ինքը շտաբի պետի հրամանով իրազեկում էր, որ պորուչիկ Բաշինջաղյանը կարող է ընդհանուր հիմունքների հիման վրա բանակից արձակվել պահեստազոր, այսինքն՝ եթե զինվորական հոսպիտալի բժշկական հանձնաժողովի հիմնավորմամբ պարզվի, որ նա առողջական վիճակով պիտանի չէ զինվորական ծառայության համար: Իսկ արդեն ԱԳ նախարարության գլխավոր քարտուղարի 1920 թ. մայիսի 5-ի (N 2779) գրությունից պարզվում է, որ պոդպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը իրոք ՀՀ արտաքին գործերի նախարարության անձնական

քարտուղար է: Այդ մասին կա նաև Ալ. Խատիսյանի համապատասխան միջամտության վերաբերյալ մայիսի 26-ի (N 2764) հավաստումը, որով Մանասյանի հետ ունեցած զրույցից հետո Լ. Բաշինջաղյանը ետ է կանչվում Դիլիջանից:

Լ. Բաշինջաղյանի հետախուզական-զինվորական կենսագրությունում բեկումնային են դառնում 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին տեղի ունեցած իրադարձությունները, որոնք հանգեցնում են խորհրդային կարգերի հաստատմանը: Այդ ժամանակաշրջանը բարդ էր և խճճված, ինչը անդրադառնում է նաև Լ. Բաշինջաղյանի կյանքի և հետախուզական կենսագրության հետագա ընթացքի վրա:

Խորհրդային կարգերի հաստատման և արդեն տիրապետության ընթացքում նա անցնում է կյանքի մեծ բովով՝ դառնալով ականավոր կովկասագետ և արևելագետ-լեզվաբան, պրոֆեսոր, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի լեզվի և մտածողության ինստիտուտի գիտքարտուղար: Լ. Բաշինջաղյանը Ն. Յ. Մառի մերձավորներից էր:

1920 թ. դեկտեմբերին-1921 թ. փետրվարին եղել է Երևանի լուսժողկոմի արվեստի բաժնի քարտուղարը: Սակայն մինչև ՀԽՍՀ լուսժողկոմի տրամադրության տակ անցնելը նա հայտնվում է խորհրդային իշխանությունների կողմից ձերբակալվածների ցուցակում, որպես նախկին՝ դաշնակցական կառավարության ռազմական «կոնտրռազվեդկայի» պետերից մեկը, որն անբարեհույս էր համարվում և հայտնի էր իր սկզբունքային առումով ինքնատիպ և առողջ դիրքորոշմամբ ՀՀ կառավարության ռազմավարության հիմնախնդիրներում: Սակայն այս գործի ընթացքին վճռական և համարձակ միջամտություն է ցուցաբերում ՀՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը, որը 1921 թ. հունվարի 26-ի գրությամբ՝ ուղղված Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին, խնդրում էր լուսժողկոմի արվեստի բաժնի քարտուղար, նախկին սպա Լևոն Բաշինջաղյանին՝ իբրև անփոխարինելի և անհրաժեշտ աշխատակցի, դուրս բերել Ռուսաստան ուղարկվող նախկին սպաների ցուցակից և իր երաշխավորությամբ թողնել իր տրամադրության տակ:

Այնուհետև Լ. Բաշինջաղյանը 1921-1923 թթ. թղթակցել է լուսժողկոմի «Пламя» ամսագրին, եղել նրա առավել գործունյա թղթակիցներից մեկը:

1921 թ. մայիսից մինչև 1922 թ. նոյեմբերը աշխատել է Թավրիզում, գեղարվեստական ստուդիայում՝ որպես ռուսաց լեզվի դասախոս:

1922 թ. դեկտեմբերից Լ. Բաշինջաղյանը, Թիֆլիսում աշխատելով Վրաստանի լուսժողկոմատում, զբաղվել է նաև գրական գործունեությամբ: 1923-1926 թթ. սովորել է Լենինգրադի պետական համալսարանի հասարակագիտական գիտությունների ֆակուլտետի հին աշխարհի բաժանմունքում՝ հաբեթական թեքման գծով (հայագիտություն և ընդհանուր լեզվաբանություն):

1926 թ. Լ. Բաշինջաղյանը դառնում է ԽՍՀՄ-ի բնակչության ցեղային կազմի ուսումնասիրման գծով հանձնաժողովի պրակտիկանտ, 1927 թ. հունվարի 9-ից Ն. Մառը հաբեթական ինստիտուտին ուղղված նամակում առաջարկ է ներկայացնում՝ սեպագրերով և կացավայրերի տերմիններով զբաղվող գիտական խմբի մեջ ներգրավվել նաև պրակտիկանտ Լ. Բաշինջաղյանին: 1927 թ. Լ. Բաշինջաղյանը գործուղվել է Արևմտյան Վրաստան՝ Լեչխումայի և Ռաչի շրջանում լեզվաբանական և տեղագրական հետազոտություններ իրականացնելու և նյութեր հավաքելու: Իսկ արդեն 1929 թ. մարտին նա տեղափոխվում է ԳԱ հաբեթական ինստիտուտ և հաջողությամբ գլխավորում արտադրական տերմինների խումբը, իսկ Ն. Մառի 1929 թ. մարտի 9-ի նամակում արված առաջարկով ընտրվում է 2-դ կատեգորիայի գիտաշխատող, 1929 թ. հոկտեմբերի 9-ից Ն. Մառի առաջարկով դառնում է հաբեթական ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնակատար, 1930 թ. հունվարից՝ գիտքարտուղարը:

Այդ ընթացքում՝ 1929 թ. հուլիսի 11-ին, Ն. Մառի գլխավորությամբ Բաշինջաղյանը (արշավախմբի ղեկավարի տեղակալ) Բալկարա-Կարաչաևսկյան արշավախմբի անդամներ Ա. Ն. Ակուլյանցի, Ռ. Մ. Շահումյանի, Ա. Կ. Բորովկովայի հետ մեկնեց Նալչիկ՝ շրջանի լեզվաբանական հետազոտության համար: Այստեղ մնում են երկու ամիս՝ մինչև օգոստոսի 24-ը՝ լիովին կատարելով Մառի կողմից խմբի առջև դրված հանձնարարականները՝ լեզվի, տեղանքի գծով, ինչը կարևոր էր Կաբարդինո-Բալկարիայի շրջանի մասին պատկերացում կազմելու համար:

1930 թ. դեկտեմբերի 23-ին Լևոն Բաշինջաղյանը ԳԱ գործերի կառավարչին նամակով տեղեկացնում է 1930 թ. Մեգրելիայում Մ. Գ. Տիխոյ-Ծերեթելու կողմից հայտնաբերված մեգրելական ձեռագիր բառարանների մասին, որ դրանք արդեն ձեռք են բերվել իրենց ինստիտուտի կողմից և գրանցվել՝ խնդրելով բավարարել ֆինանսական ծախսերը: 1930 թ. դեկտեմբերի 1-ի հաբեթական ինստիտուտի հաշվետվության թեզիսներից տեղեկանում ենք, որ Լ. Բաշինջաղյանը 1929 թ. գործուղված է եղել Ադրբեջանի և Վրաստանի Խորհրդային հանրապետություններ՝ Բաքվում և Թիֆլիսում ունենալով 3 գիտական զեկույց:

Անցնելով այս ուղով՝ նա հռչակվում է որպես հայտնի կովկասագետ-լեզվաբան՝ դառնալով Ն. Մառի մոտ համախոհներից, որը հասարակական գիտությունների բաժանմունքի 1931 թ. հոկտեմբերի 4-ի նիստում միաձայն ընտրվել էր լեզվի և մտածողության ինստիտուտի դիրեկտոր: Իսկ արդեն 1929-1937 թթ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի (ԽՍՀՄ ԳԱ, մինչև 1934 թ. գտնվել է Լենինգրադում, ապա տեղափոխվել Մոսկվա-Վ.Վ.) հաբեթական լեզվի և մտածողության ինստիտուտը, և այդ նպատակի իրագործման համար մեկնում է Անդրկովկաս՝ լեզվագիտական բնույթի նյութեր հավաքելու և դասախոսություններ կարդալու համար: Իր իսկ սաների վկայությամբ՝ մասնավորապես Տ. Ա. Շումովսկու հաստատմամբ՝ Լևոն Բաշինջաղյանը եղել է շատ հարգված և հեղինակություն վայելող դասախոս, փայլուն հռետոր, որին համեմատել են նույնիսկ նշանավոր պատմաբան Ե. Վ. Տառլեի հետ, որը տիրապետում էր հղկված և տարողունակ դարձվածքների, որոնք դասդասվում էին մի հրաշալի և ավարտուն ամբողջության մեջ: Ա. Կրասնով-Լիտվի-

նը ևս իր «Հիշողություններ» գրքում Լ. Բաշինջաղյանի մասին գրում է որպես փայլուն «էրուդիտի» մասին, որը եղանակ է ստեղծել լեզվաբանության մեջ: Լևոն Բաշինջաղյանի մասին ջերմությամբ է արտահայտվում հայտնի խորհրդային դերասան, գրող Գեորգի Ժժենովը:

Լ. Բաշինջաղյանը զբաղվել է կադրերի պատրաստմամբ, 1933-1934 թթ. լեզվի և մտածողության ինստիտուտում կազմակերպել է ասպիրանտների ընդունելություն, ինչպես նաև հատուկ սեմինարներ՝ լեզվաբանական հետազոտությունների գծով:

Այդ ընթացքում նա եղել է նաև Ղազախստանի պատմահնագիտական ինստիտուտի արտահաստիքային թղթակիցը: Այդ նույն ժամանակահատվածում Լ. Բաշինջաղյանը ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1934 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում: 1929-1936 թթ. նա որպես պրոֆեսոր դասավանդել է Լենինգրադի պետական համալսարանում, իսկ արդեն 1930 թ. սեպտեմբերից նաև գրականության և պատմության ինստիտուտի դոցենտ էր:

1933 թ. օգոստոսի 16-ին պրոֆեսոր Լ. Բաշինջաղյանն իր մասնագիտությամբ հետագա որակավորման բարձրացման նպատակով արտասահմանյան գիտական գործուղման հայտ է ներկայացնում 1934 թ. համար՝ նշելով, որ կցանկանար այն անցկացնել Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում և Բորդոյում, որպեսզի ծանոթանա հնդեվրոպական լեզվագիտության վերջին նվաճումներին, ինստիտուտներում և բարձրագույն կրթական հաստատություններում լեզվի և մտածողության հետազոտման դրվածքին:

1935 թ. մայիսին Լ. Բաշինջաղյանը ժամանակավորապես ազատվում է հաբեթական ինստիտուտի գիտքարտուղարի պարտականություններից (մինչև 1936 թ.)՝ «Խոսքի պալեոնտոլոգիայի փորձ բալկարակարաչևեյան լեքսիկայի հիման վրա» դոկտորական ատենախոսության վրա աշխատելու համար:

1937 թ. հաբեթական ինստիտուտի պլանի համաձայն՝ նա աշխատել է «Կրճատված բառեր (բառակազմության եղանակների հարցի շուրջ)» աշխատասիրության վրա:

1937 թ. նա դառնում է ԽՍՀՄ լեզվի և ժողովուրդների գրերի կենտրոնական ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի դիրեկտոր, իսկ 1937 թ. նոյեմբերի 20-ից սեփական դիմումի համաձայն՝ ազատվում է այդ պաշտոնից: Լևոն Բաշինջաղյանը եղել է Ն. Մառի առավել եռանդուն համախոհներից մեկը, որոնց թվում էին նաև Վ. Բ. Ապտեկարը և Ս. Ն. Բիկովսկին:

Սակայն Լևոն Բաշինջաղյանի կյանքը կարճատև էր: Ինչքան սրընթաց և փոթորկուն է լինում նրա վերելքը, նույնչափ էլ՝ անկումը: Շուտով նա դառնում է ստալինյան համակարգի անմեղ զոհերից մեկը: Ըստ մի վարկածի՝ 1938 թ. ապրիլի 1-ին նա անհիմն ձերբակալվում է և գնդակահարվում 1938 թ. հոկտեմբերի 11-ին կամ 15-ին, եղբայրը՝ Արմենը, գրեթե նույն ժամանակ՝ հոկտեմբերի 22-ին: Մեկ այլ վարկածի համաձայն՝ Լևոն Բաշինջաղյանը ամենևին էլ չի գնդակահարվել, այլ զոհվել է 1948 թ. ԳՈՒԼԱԳ-ում՝ մագադանյան ճամբարներից մեկում, ինչը դեռ պետք է ճշտել: Ահա այսպիսի սրընթաց ավարտ է ունենում Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության կայացման ակունքներում կանգնած լավագույն հետախույզներից մեկի՝ Լևոն Բաշինջաղյանի բազմաբեղուն կյանքը, մարդ, որը խորհրդային կարգերի ժամանակ դառնում է խորհրդային լեզվաբանության, հաբեթագիտության խոշորագույն դեմքերից մեկը և որի մասին ջերմ դրվատանքով են արտահայտվել ժամանակակիցները:

Օգտագործված գրականություն

1. Տես Դէոյեանց Տ, Հետախոյզի մը յուշերը (Պատասխան իմ քննադատներուն), «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Յունուար-Մայիս, թիւ 2, էջ 49:
2. Տես Սարգսյան Ա. Ե., Հետախուզություն և հակահետախուզություն. Հայկական հետք, կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին, Եր., «Ամարաս», 2005, էջ 194-195:
3. Տես «Независимая газета», Москва, 1994, 8 мая. Решетов А. М., Материалы к биобиблиографическому словарю российских этнографов и антропологов. XX век, СПб.: Наука, 2012, с. 92-93: https://russia-armenia.info/node/40600/ 27.02.2021 г.:
4. Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 52 -55, 75:
5. Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 60:
6. Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 104:
7. Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 24, ֆ. 27, ց. , գ. 75, թ. 35, գ. 26, թ. 203:
8. Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 185, գ. 131, թ. 24:
9. Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 116, թ. 69:
10. Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 252, թ. 47:
11. Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 483, թ. 63 հակ.-64, 110, 126, 18:
12. Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 483, թ. 161:
13. Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 3, թ. 40:
14. Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 3, թ. 53:
15. Տես Шумовский Т. А., У моря арабистики: По страницам памяти и неизданных документов, М., 1975. стр. 296.
16. Краснов-Литвин А., Лихие годы. Воспоминания, Париж, Имка-Пресс, 1977, стр. 319:
17. Жженов Г. С., Саночки: Рассказы и повесть / предисл. Ленинград, Филатова, М., 1997, стр. 203:
18. Репрессированное востоковедение, сост. Я. В. Васильков и др.: «Народы Азии и Африки». История, Экономика, Культура, 1990, N 4, стр. 117:
19. Репрессированное востоковедение: Востоковеды, подвергшиеся репрессиям в 20-50-е годы: http://www.ihst.ru/projects/sohist/repress/ 113-124.pdf, с. 117:
20. Пиотровский Б. Б., Страницы моей жизни, 2-е изд., испр. и доп. / отв. ред. Ю. Ю. Пиотровский, Л., Издательский дом «Руда и металлы», 2009, стр. 44, 76, 149: Տես նաև Дьяконов И. М., Книга воспоминаний, Санкт-Петербург, 1995, стр. 261, 309, 316, 745:
21. ACTA LINGUISTICA PETROPOLITANA. Труды Института лингвистических исследований РАН / Отв. ред. Н. Н. Казанский. Т. IX. Ч. 1. Материалы к истории ИЛИ РАН (1921–1934) / Составитель А. Н. Анфертьева. СПб.: Изд-во «Наука», 2013, с. 18, 175, 177, 180, 186, 189, 192, 193, 194 215, 221–223, 233–245, 248, 250, 255, 256, 258, 260, 261, 268, 270, 272, 274–276, 279– 282, 286, 289, 313–316, 318, 322, 331, 336, 337, 340, 345– 347, 357–359, 364, 379, 395, 398:
22. Люди и судьбы. Биобиблиографический словарь востоковедов – жертв политического террора в советский период (1917-1991) / Сост.: Я. В. Васильков и М. Ю. Сорокина СПб.: Петербургское востоковедение, 2003. с. 59-60:
23. ru.hayazg.info/ Башинджагян_ Армен_Георгиевич:
24. https://visz.nlr.ru/person/book/t11/2/60:

Չարենցյան հուշի մի պատառիկ

Սաքո Շատախունին 1952, 1972 թվականներին հրապարակել է երկու հուշագրություն: 1926 թ. նա Չարենցին տեսել է Երևանի ուղղիչ տանը, ուր բանտարկված էր Մարիանա Այվազյանի վրա «դաստիարակիչ» կրակոց արձակելու պատճառով:

«Չարենց բանտում», «Քաղցր եւ դառն յուշեր»-ում, ինչպես ինքն է գրում, 17-24 տարեկան բանտարկյալ դաշնակներ էին՝ ընկած խորհրդային բռնատիրության թակարդը: Իրենց բախտն ու ճակատագիրը հարված տակ էր, բայց բարեբախտություն էր իրենց նման կալանավորի կարգավիճակում տեսնել Չարենցին: Տարբերությունը թեև քաղաքական ու քրեական էր, բայց այդ բնորոշումների ներքո նույն դաժան իրականությունն էր:

Հիշատակվում է 1924-ին բանֆակում տեղի ունեցած մի գրական միջոցառում՝ նվիրված Դանիել Վարուժանին: Մասնակիցներից մեկի կողմից ակնարկ կա Չարենցի արտասահմանում լինելու վերաբերյալ, մինչդեռ Չարենցը արտասահմանից վերադարձել է 1925 թ. հուլիսի վերջին: Կան փաստական այլ վրիպումներ ևս, չենք միջամտում: Միօրինակացրել ենք միայն եւ-ի գրությունը և կետադրությունը:

Դավիթ Գասպարյան
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ՉԱՐԵՆՑ ԲԱՆՏՈՒՄ
(ՔԱՂՑՐ ԵՒ ԴԱՌՆ ՅՈՒՇԵՐ)
Գրեց՝ Սաքո Շատախունի

Երեւանի մէջ 1924 թուի Սեպտեմբերի վերջերն էր. մեր ընկերներից Ավետիս Ալեքսանեանի հետ (յետագային սպանուած կոլխոզացման շրջանին Վետիբասարի մէջ) բանֆակի գրադարանից դուրս էինք գալիս: Նկատեցինք, որ բազմութիւն է բարձրանում վերեւ, բանֆակի երկրորդ յարկը, ինչպէս նաեւ մի շարք բանաստեղծներ, որոնց կարգին եւ Եղիշէ Չարենցը: Վերեւ բարձրացանք եւ տեսանք, որ դահլիճը լիքն էր երկսեռ հասարակութեամբ:

Տեղեկացանք, որ գրական ասուլիս է. մեզ էլ հետաքրքրեց:

Դաբաղեանը, որ, եթե չեմ սխալւում, այդ շրջանին «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիրն էր, յայտարարեց, թէ օրուան նիւթն է Դանիէլ Վարուժանի «*Հեթանոս երգեր*» աշխատութիւնը:

Մի շարք սոփիստութիւններ անելուց յետոյ ասաց, թէ սխալ է այն տեսակէտը, ինչ որ պաշտպանում է ընկ. Աշոտ Յովհաննիսեանը, ըստ որում, Դանիէլ Վարուժանը եւ նմանները «մանր բուրժուական» գրողներ են, այլ Դանիէլ Վարուժանը պարզապէս բուրժուական գրող է, քանի որ նրա ստեղծագործութեան շրջանից տասնեակ տարիներ առաջ կատարուած է եղել Փարիզի կոմունան, տասնեակ յեղափոխական ընդվզումներ, որոնց մասին բազմաթիւ հատորներով գրականութիւն է գոյութիւն ունեցել, եւ այդ բոլորն ազդեց Դանիէլ Վարուժանի ստեղծագործութեան վրայ:

Ելոյթ ունեցաւ նաեւ Նայիրի Զարեանը՝ միեւնոյն ծիծաղելի մօտեցումով:

Երկու խօսողներից եւ ոչ մէկը չխօսեց գրական ստեղծագործութեան եւ գեղարուեստի մասին:

Եղիշէ Չարենցը ձայն ուզեց. մինչ այդ շատերը իրար հետ խօսակցում էին եւ ուշադրութիւն չէին դարձնում. լռութիւն տիրեց դահլիճում:

Չարենց ասաց, որ գրականութիւնը վերլուծելու համար միայն նրա դասակարգային կամ քաղաքացիական կողմը չէ, որ պիտի բնորոշել, այլ գրական ստեղծագործութիւնը եւ գեղարուեստը, ինչպէս նաեւ բանաստեղծի ազգային եւ բարոյական հասկացողութիւնները, աչքի առաջ պիտի ունենալ իր ապրած ժամանակաշրջանը եւ պայմանները: Մի պահ լռեց, ապա շարունակեց.

– Եւ խօսող ընկերները կանգ չառան յիշեալ յատկանիշների վրայ. այդ տեսակէտից Դանիէլ Վարուժան

մեծ ստեղծագործող է եղել: Եթէ մենք ցանկանում ենք մեր խորհրդային հայրենիքում գրականութեանը զարկ տալ, պէտք ունենք նոր Դանիէլ Վարուժաններ...

Տեղի ունեցավ մի աննախընթաց ծափահարութիւն: Դաբաղեանը պատասխանեց բարձր ձայնով.

– Ընկեր Չարենց, այդ տրամաբանութեամբ էիր արտասահման գնացել եւ փոխանակ Դաշնակցութեան դէմ պայքար բացելու, տուրիստութիւն արեցիր եւ վերադարձար:

Չարենցը իր տեղից, շատ համարձակ.

– Տո՛, գրականութիւնը եւ գրիչը հրացան չէ, որ միլիոնաւոր ռուս մուժիկներ դնեն ուսին եւ Հայաստան գրաւեն. սա գրիչ է, մանաւանդ դաշնակցական գրիչ, որ մարդու հաւի նման կը փրտկէ:

Խօսեց Նայիրի Զարեան.

– Մենք դաշնակներին թաղել ենք, ուրեմն մեռելները մարդու կը փրտկե՞ն: Երեւի Չարենց արտասահման գացել է եւ նրանց յարութիւն տուել...

Չարենցը տեղից.

– Այստեղ մեռելի կամ էլ յարութեան խնդիր չկայ. սա գրական ասուլիս է:

Մի քանի րոպէ լռութիւն տիրեց. մենք շտապում էինք. հեռացանք դահլիճից:

Հետագային լսեցինք, որ այդ վէճի պատճառով Չարենցին մէկ ամիս տնային բանտարկութեան էին ենթարկած:

Աւելի ուշ Չարենցին հանդիպեցինք Երեւանի բանտում: Նախ՝ 1924 թուի Դեկտեմբերից սկսած, մեզ՝ դաշնակցականներիս դէմ նոր հալածանք սկսուեց:

Աստիճանաբար սկսուեցին ձերբակալութիւնները, մեզ պահում էին Չեկայի հին շէնքի նկուղներում՝ առանց մէկս միւսից տեղեակ լինելու:

1925 թուի սկիզբներին Մանուկ Խուշոյեանի սպանութեան առթիւ ձերբակալուեցին մեր մի շարք ընկերները անտեղի կերպով: Միեւնոյն ժամանակ Կարմիր Բանակից ձերբակալուեցին մի շարք զինուորականներ՝ նորից որպէս դաշնակցականներ:

1926 թուի Յունուար 6ի երեկոն մեզ բոլորս լեցրին մէկ կամերայի մէջ. այդ գիշեր Չեկան իրարանցման մէջ անցկացրեց, առաւօտ պարզուեց, որ մասսայական ձերբակալութիւններ են տեղի ունեցել: Մեծ մասը՝ համալսարանի ուսանողներ եւ երիտասարդներ:

Մենք՝ շատերս, մեր երեսը դեռ մազ-մօրուք չունէինք եւ 17-24 տարեկան երիտասարդներ էինք:

Մի քանի ամսից յետոյ տեղի ունեցաւ Մանուկ Խուշոյեանի չարաբաստիկ դատավարութիւնը:

Նախ՝ Մանուկ Խուշոյեանը Արագածի բնակիչ չէր, ուր ապրում էին սասունցիները: Մանուկ Խուշոյեանը եւ իր քոյրը եկած էին՝ սասունցիների մէջ պարզապէս անբարոյականութիւն անելու: Սասունցիները, լինելով նահապետական եւ պատուազգաց ժողովուրդ, չկարողացան տանիլ եւ շան սատակ արին:

Խուշոյեանի սպանութեան առթիւ բոլշեւիկների կողմից ստեղծած այդ դատավարութիւնը մի մեքենայութիւն էր Դաշնակցութեան դէմ: Դատավարութեան ընթացքին ամէն բանտախուցի «Խորհրդային Հայաստան» թերթ տուեցին, այն ինչ մինչ այդ դժուարութիւններ էին յարուցում եւ թերթ կարդալը արգիլում էին:

Երբ մենք տեղեկացանք, որ Խուշոյեանի սպանութիւնը կապում են Դաշնակցութեան, եւ Դաշնակցութիւնն է, որ պիտի դատեն, հացադուլ յայտարարեցինք եւ մեր ընկերուհի Հռիփսիմէ Մուշեղեանի միջոցով պահանջ ներկայացրինք դատարանին՝ ի մէջ ասելով. «Եթէ դուք Դաշնակցութիւն էք դատում, մենք դաշնակցականներ ենք. մեզ հնարաւորութիւն տուէք պաշտպանուելու»:

Տիկին Հռիփսիմէ Մուշեղեան անվախ կերպով մեր պահանջը ներկայացնում է դատարանին: Երզնկեանը, որը նախագահ էր դատարանին, պատասխանելով, յայտնում է, որ միայն ձեզ՝ եօթ դաշնակցականներիդ է, որ դատելու ենք:

Ամէն պարագայի տակ բոլշեւիկեան այդ պրովոկացիոն դատավարութիւնը վերջացաւ բոլշեւիկների պարտութեամբ. փաստն այն էր, որ յետագային դատավարութեան շրջանին տպուած «Խորհրդային Հայաստան» թերթը հաւաքուեց Չեկայի կողմից:

Այսպէս, ինչպէս ցարիզմի օրոք, մեր անզուգական ընկեր Համօ Օհանջանեանը ցարիզմի դատարանում պաշտպանեց Դաշնակցութիւնը՝ քննադատելով ցարիզմը եւ այդպէսով պատիւ բերեց իր ժողովրդին, նոյնպէս մեր անմման ընկեր Սահակ Թորոսեանը, որի աճիւնները հանգչում են հայրենիքից հեռու՝ Սիբիրի սառոյցների տակը, ոչ միայն ջախջախեց այդ տմարդի դատավարութիւնը, այլ եւ շատ հիմնաւոր կերպով քննադատեց բոլշեւիկեան գաղափարաբանութիւնը եւ դատապարտեց կարմիր բռնապետութիւնը: Որից յետոյ Չեկայից մեր մի մասին տեղափոխեցին Երեւանի բանտի քաղաքական բաժանմունքը:

Տեղեկացանք, որ Չարենցը մի կնոջ վրայ գնդակ արձակելու պատճառաւ բանտարկուած է եւ գտնւում է մեր քաղաքական բաժանմունքի ճիշդ դիմացը, հիւանդանոցին կից մի փոքրիկ սենեակում, եւ պատուհանն էլ ճիշդ մեր դիմացն է նայում: Իմացանք նաեւ, որ բանաստեղծը իրաւունք ունի բանտի մէջ ազատ պտոյտ կատարելու:

1926 թուի Նոյեմբեր 29ի իրիկունն էր. մեզ՝ դաշնակցականներիս, հաւաքեցին բանտի դահլիճը՝ առաջի շարքերի աթոռների վրայ: Մեր ետեւ կանգնեցին 20 չեկայի զինուորներ. հինգ րոպէից ետեւի բոլոր աթոռները գրաւեցին քրէական բանտարկեալները:

Բեմի վարագոյրը բացուեց. Խորհրդային Հայաստանի 6րդ տարեդարձի առթիւ յայտարարութիւններ կային՝ չորս դին փակցուած:

Բեմի վրայ կար մի փոքրիկ սեղան, վրան էլ՝ մի գանգակ եւ մի աթոռ:

Քիչ անց մի կողմից Չարենցը բեմ մտաւ եւ մեզ յարգալի բարեւելուց յետոյ նստաւ աթոռին: Չարենցին յաջորդեց մէկ ուրիշը բեմի վրայ՝ շփացած քալուածքով եւ նայուածքով:

Չարենց վեր կացաւ եւ բացուած յայտարարեց Խորհրդային Հայաստանի 6-րդ տարեդարձի հանդէ-

սը: Ապա խոսքը տուեց կողքին կանգնած լոպազին: Մեզ յայտնի չէր նրա հանգամանքը եւ ինքնութիւնը: Յիշում եմ միայն, որ ղարաբաղցի էր եւ խոսում էր հայերէնի եւ ռուսերէնի խառնուրդ մի լեզուով: Հենց սկզբից նա թափ տուեց լեզուին եւ ծանր անարգանքներ տեղաց Դաշնակցութեան հասցէին:

Չարենց զանգահարեց՝ կարգի հրաւիրելով բանախօսը եւ ասաց բարձր՝ յատկապես մեզնից լսելի դառնալ ուզելով.

– Այստեղ հիւրեր կան. խնդրեմ քաղաքավարի եղէք…

Ճառախօսը շարունակեց իր բարբաջանքը, որի մէջ միակ հասկանալի բառերը էլի հայհոյանքներն էին Դաշնակցութեան դէմ:

Չարենց երկրորդ անգամ խփեց զանգը, աւելի ուժգին եւ ջղային, ապա ազդարարեց.

– Եթէ շարունակէք այդ ճամբով գնալ, իբրեւ օրուան նախագահ, ձեզ վար կ'առնեմ բեմից: Ի՞նչ բան է սա: Մեր դիմաց ունենք անզօր եւ զինաթափ դաշնակցականներ, ազատօրէն հայհոյում ենք նրանց: Լա՞վ կը լինի, որ վեր կենան եւ իրենք էլ մեզ հայհոյեն:

Մի պահ լռեց եւ ապա վերջացուց խօսքը աւելի ցած, բայց լուրջ շեշտով.

– Դուք պիտի խօսէք մեր խորհրդային իրականութեան մասին, վեր առնէք մեր գործի արժէքը եւ ոչ թէ նախատէք բացակայ մարդկանց եւ նրանց դժբախտ ընկերներին, որ այստեղ բանտումն են: Շարունակեցէ՛ք եւ ուղիղ ճամբով:

Մեզ այնպէս թուաց, թէ ճառախօսը փոքր-ինչ զգաստացաւ: Բայց հազիւ հինգ րոպէ անց էլի՛ Դաշնակցութիւն եւ մի շարք ռուսերէն բառեր, որոնց նշանակութիւնը չէինք հասկանում թէեւ, բայց Չարենցի պոռթկումը յայտնեց մեզ նրանց իմաստը: Բեմասացը շարունակում էր բղաւել, երբ յանկարծ Չարենց ելաւ աթոռից, քայլեց դեպի ետ եւ գոռաց.

– Լսի՛ր, սրիկայ: Վերջ տրուած է քո խօսքին…

Եւ հրեց նրան բեմից դուրս: Ապա դառնալով մեզ՝ առաջին շարքում նստած դաշնակցականներիս, ասաց.

– Խնդրեմ, չեղեալ համարուի այս ցաւալի դեպքը…

Խոսողը հեռացաւ:

Մեր բանտարկեալ ընկերներից քանաքեռցի Մնօ Սահակեանը, համալսարանի ուսանող, անմման քեմանչիստ էր: Բազմիցս խնդրել էր, որ թոյլ տան իր քեմանչան մօտը ունենալ, բայց մերժել էին: Բերել էին տուել Մնօյի տնից, բայց քեմանչան մնում էր բանտապետի գրասենեակը: Այդ օր բացառաբար քեմանչան եւս բերուել էր բանտի դահլիճը եւ մնում էր բեմի վրայ: Չարենց խնդրեց Մնօյից, որ նուագի ըստ կազմած յայտագրի:

Մնօն կանգնեց եւ բեմ բարձրանալուց առաջ պայման դրեց.

– Կը նուագեմ, ինչ որ կամենաք, բայց պիտի թոյլ տաք, որ նուագեմ ինձ հաճելի երկու կտոր:

– Եւ ի՞նչ են ձեզ համար այնքան սիրելի այդ կտորները, – հարցրեց Չարենց:

– «**Կոունկը**» եւ «**Զեյթունի Քայլերգը**», – պատասխանեց Մնօ:

Չարենց գլխով արաւ, թէ համամիտ է ինք, թէ կարող է գալ ու նուագել:

Բայց նոյն պահին միջամտեց բանտապետ Վարդանեանը.

– Ընկե՛ր Չարենց, իրաւունք չունէք թոյլ տալու…

– Եւ ինչո՞ւ չունեմ…

– Ախր, չի կարելի:

Ու սկսուեց մի վիճաբանութիւն Չարենցի եւ բանտապետ Վարդանեանի միջեւ: Խօսում էին երկուստեք յուզուած, բայց մեզ համար անլսելի ցած ձայնով: Ի վերջոյ տեղի տուողը եղաւ Չարենցը: Քեմանչան չնուագուեց: Չարենց փակուած յայտարարեց հանդէսը, ցտեսութիւն ասաց մեզ եւ հեռացաւ բեմից:

Բանտապետը հրամայեց իրենց խուցերը տանիլ քրէականները: Դահլիճում մնացինք մենք, բանտապետ Վարդանեանը եւ մեր ետեւ կանգնած զինուորները:

Անսպասելի կերպով ներս մտան Զապէլ Եսայեանը եւ Եղիա Չուբարը ու նստեցին մեզ հետ: Նրանք եկել էին յատուկ առաքելութեամբ: Ուզում էին, որ յայտարարութիւն ստորագրենք եւ խոստանում էին միջամտել, որ մեզ ազատ թողնեն: Մենք կտրուկ կերպով մերժեցինք մեր կուսակցութեան համար վարկաբեկիչ որեւէ թուղթ ստորագրել: Բանտապետը տեսնելով, որ չի յաջողուում, նշան արեց նրանց: Այցելուները մեկնեցան:

Յաջորդ գիշեր ամբողջ բանտ լսում էր Չարենցի պոռչտուքը: Կատաղել էր, հայհոյում էր, կանչում: Երբեմն որոշակի լսում էինք իր խօսքերը: Մի անգամ ասաց.

– Սրիկանե՛ր, սրիկանե՛ր… դուք օրական մի քանի մարդ էք սպանում՝ ձեզ ներելի է, իսկ ես մէկի վրայ գնդակ եմ արձակել եւ ոչ մի վնաս չի պատճառել… եւ դեռ ասում էք, թէ տարեդարձի *ամնիստիան* (ներում) ինձ վրայ չի տարածուում:

Նրա մօտ գնաց բանտապետ Վարդանեանը՝ հանդարտեցնելու մտօք: Բայց պատահեց ճիշդ հակառակը: Չարենց աւելի բորբոքուեց.

– Հեռացի՛ր, դու բանտապետ եւ դահիճ. դու չէի՛ր, որ այս բակում սպանեցիր Ալեքպոլցի Սուրէնին: Ով գիտէ՝ ինչքան անմեղ արիւն ես մտել… Արիւն կայ քո ձեռքերում, հեռացի՛ր…

Հանդէսի մէջ Չարենցի կեցուածքը մեզ հանդէպ պատճառ դարձաւ, որ հիւանդանոց մուտք-ելք գործելիս մօտենանք նրան եւ զրոյց անենք: Յաճախ ասում էր նա.

– Ձեր հին ղեկավարների հանդէպ յարգանք ունեմ: Իսկ ձեր կուսակցութեանը ո՛չ թշնամի եմ, ո՛չ բարեկամ: Ես կոչումով բանաստեղծ եմ եւ ուզում եմ ապրել եւ ստեղծագործել: Չե՞ք հասկանում, խորհրդային իրաւակարգի տակ եթէ բանաստեղծը իրենից պահանջուած տուրքը չտայ, պիտի տայ մէկ ուրիշ բան. գլո՛ւխը…

Եւ Չարենց փիլիսոփայում էր.

– Մի՛ տող իսկ չեմ կարող հրատարակել իմ գրածներից, եթէ չհայհոյեմ ձեզ: Բայց դուք ինքներդ պիտի հասկանաք, որ խորհրդային երկնքի տակ Դաշնակցութեան դէմ հայհոյանքը աւելի օգտակար է ձեզ, քան լռութիւնը: Ախր, չէ՞ որ Դաշնակցութիւնը չը կայ, մեկնել է: Լռութիւնը կ'անչքացնի նրա յիշատակը երկրի մէջ: Հայհոյանքը… փայլ կը տայ…

Չարենց ուզեց լինել նաեւ փաստական.

– Տեսէք, առջի ես թոյլ չտուի, որ նախատեն ձեզ՝ դաշնակցականներիդ: Բայց երբ դուրս գամ բանտից եւ մի գիրք գրեմ բանտի մասին, ես ինքս պիտի հայհոյեմ ձեզ, եթէ ուզում եմ, որ գրածս անցնի մամուլի տակով…

Առիթից օգտուելով՝ յայտնեցի նրան Զապէլ Եսայեանի եւ Չուբարի առաքելութեան մասին: Ուշադիր լսեց եւ պատասխանեց.

– Ձեր գործն է, այդ մասին ասելիք չունեմ:

Իմացանք նաեւ, թէ մի քանի բանաստեղծներ եկել էին Չարենցին այցելելու, բայց ան կտրուկ մերժել էր:

Մի օր հիւանդանոցի դռանը ընկերներով հերթի էինք սպասում: Չարենցը պտտում էր բակում: Եկաւ Աւետիք Իսահակեանը, ձեռք տուեց Չարենցին եւ նրա հետ գնացին Չարենցի խուցը՝ առանց մեզ բարեւելու:

Շուրջ կէս ժամ յետոյ Իսահակեան դուրս եկաւ եւ այս անգամ խիստ մեծ ուշադրութեամբ նայեց մեզ: Հետեւեցինք, թէ Չարենց պիտի խօսած լինի մեր մասին: Մեր մօտով անցնելիս Իսահակեան ուզում էր բարեւել, բայց մենք շուռ տուինք երեսներս, եւ նա շարունակեց ճամբան…

Իմացել էինք արդէն, թէ մեր մասին վճիռ կայացուած է: Բոլորս ուղարկուելու ենք Սիբիր: Դաշնակցականի կորովն ու հաւատքը չէին լքել մեզ. պատրաստ էինք գնալ մեր պաշտելի առաջնորդների ճամբով եւ կրել ծանրագոյն տառապանքներ, բայց եւ այնպէս տխուր էինք, որ մեր այնքան սիրելի բանաստեղծներից մէկը՝ «Երգեր ու Վէրքեր»ի անոյշ երգիչը, դաշնակցել է մեր ոճրագործների հետ: Դրա համար էլ չուզեցինք ընդունել Աւետիք Իսահակեանի բարեւը…

Մի վերջին յուշ է մնում Չարենցից իմ հոգու մէջ նրա վերջին պատկերի հետ մեր ճակատագրին յանձնուելուց առաջ: Բանտ էին հրաւիրել մի ծերունի բժիշկ՝ Լուսինեան ազգանունով: Սրա պարտականութիւնն էր քննել մեզ եւ հաստատել, թէ կարո՞ղ ենք տոկալ Սիբիրի սառնամանիքներին: Չնայած որ բոլորս էլ վատուժ էինք եւ սնունդի պակասից բոլորովին քայքայուած, խոնաւ նկուղներում հիւծած, այնուամենայնիւ անունների դէմ գրւում էր. «Առողջ է»: Բժիշկ Լուսինեան երկու անգամով ուզեցել էր հրաժարուել այդ պաշտոնից, բայց չէին ընդունել: Նա բարի եւ խղճի տէր մարդ էր: Չէր ուզում առողջութեան վկայաթուղթ կազմել հայ պատանիների համար, որոնք պարզապէս ոչնչանալու էին՝ դեռ տեղ չհասած: Բայց նրա կողքին նստած էր մի չեկիստ եւ պնդում էր, որ բոլորին էլ «առողջ» գրուի:

Տեղեկացել էր Չարենցը:

Երբ քննում էին մեզ, ներս մտաւ բժիշկի սենեակը, դիտեց մի պահ եւ ասաց.

– Բժի՛շկ, դու բժիշկ ես. պարտաւոր ես ուղղամիտ լինել ու արդար: Ինչպէ՞ս կարող ես առողջ գրել մարդկանց անունի դէմ, երբ նրանք այդպէս չեն…

Բժիշկ Լուսինեան՝ շփոթ ու ամօթապարտ, չէր կարողանում պատասխան ճարել, երբ միջամտեց կողքին նստած ռուս չեկիստը.

– Ո՞վ եք դուք, ի՞նչ եք ուզում, գնացէք ձեր գործին…

– Ե՞ս, – ասաց Չարենց, – ուզում եք գիտնալ, թէ ո՞վ եմ ես, ուրեմն իմացէք: Ես բանաստեղծ եմ, Եղիշէ Չարենց եւ թքո՛ւմ եմ ձեզ վրայ…

Թքաւ գետին, ուժգին խփեց դուռը ետեւից ու գնաց…

Իսկ մենք դրանից յետոյ… Բայց մնացեալը ուրիշ պատմութիւններ են արդէն: Կրկին բանտ, աքսոր, Սիբիր՝ այդ սառոյցե դժոխքը երկրի վրայ:

Դա եղաւ Չարենցի վերջին պատկերը: Նա չկարողացաւ, իհարկէ, մեզ խլել Չեկայի ճիւաղային ձեռքից: Եւ, ինչպէս ինքն էր ասել, նա շատ հայհոյանքներ արեց նաեւ Դաշնակցութեան հասցէին: Բայց մեր տառապանքի անվերջ ճամբաներում յաճախ էր մեր միտքը գալիս Չարենցի խիզախ ելոյթը, եւ մեր հոգիները ջերմանում էին նրա ժէսթից: Մխիթարական էր յիշել, թէ հայ բանաստեղծ, անգամ բոլշեւիկ Չարենցը, հէնց Չեկայի որջի մէջ իսկ ուզում էր պաշտպանել իր հարազատներին…

Նա մեծ էր տաղանդով: Նոյնքան մեծ եղաւ եւ ոգով, ինչպէս յետագային իմացանք իր վախճանի ողբերգութեամբ:

Բանաստեղծ էր Չարենց, մի մեծ եւ եզական բանաստեղծ ու եզակիօրէն քաջ էր նաեւ:

Եւ կարելի՞ է արդէն մեծ լինել՝ առանց քաջութեան…

ԹԷՀՐԱՆ

ԾԱՆՕԹ. – Այս յօդուածը գրուած է «ՆԱՅԻՐԻ» ներկայ բացառիկին համար: Հեղինակը իր գրութիւնը անձամբ յանձնեց խմբագրութեանս դէպի Եւրոպա իր ճամբորդութեան ընթացքին:

«Նայիրի» շաբաթաթերթ, Բէյրութ, կիրակի, 21. 12. 1952, Ա տարի, թիւ 16-17, էջ 5:

Ի՞նչ են մեր ազգային-հոգեւոր հիմնական արժէքները

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Յաճախ կ՚արծարծուի այս հարցը, մանաւանդ այս օրերուն, երբ խնդրոյ առարկայ կը դառնան մեր տեսլականը, խորհրդանիշերը եւ համոզումները, որոնք մեր Ձարթօնքէն ասդին կազմաւորուած ու բիւրեղացած ըլլալ կը թուէին, ու կ՚ակնկալէինք, որ ստացած ըլլային համազգային բնոյթ: Անոնց հարցականի տակ դրուիլը այսօր մեզ կը ստիպէ վերադառնալ մեր հիմնական արժէքներուն, վերստին հասկնալ զանոնք եւ ի հարկին վերաբանաձեւել ներկայ պայմաններու լոյսին տակ:

Յօդուածը, որ կը միտի ամբողջացնել նախորդ գրութիւններով արտայայտած մտքերս, կը մեկնի այն հասկացողութենէն, թէ այս սիւնակի ընթերցողներուն համար տեսլականը (Ազատ, անկախ ու միացեալ Հայաստան, համախումբ հայութիւն) ու խորհրդանիշերը (դրօշակ, հիմներգ, զինանշան) կասկածի տակ չեն առնուած, իսկ համոզումները խարսխուած են հաւատքի ամուր ժայռին վրայ: Ուստի այս գրութեան միտք բանին պիտի ըլլայ յստակօրէն սեղանի վրայ դնել մեր արժէքները: Խօսքը պիտի չընեմ անշուշտ մարդկային ամենէն հասարակ եւ ընկալուած առաքինութիւններուն, որոնք անհրաժեշտ են արժանապատիւ մարդ կոչուելու համար: Անոնք անկասկած մաս կը կազմեն մեր արժէքներուն, արժանիքներուն:

Բայց որո՞նք են արժանապատիւ հայ մարդ կոչուելու համար անհրաժեշտ արժանիքները, արժանապատիւ հայ քաղաքացի եւ որո՞նք՝ որպէսզի արժանապատիւ ա՛զգ կոչուինք:

Առաջին հերթին կու գայ հաւաքականութեան մաս կազմելու գիտակցութիւնը: Ան, իր կարգին, կը յառաջացնէ հաւաքականութեան ծառայելու պատրաստակամութիւնը: Չըլլալ եսակեդրոն, չծառայել միայն սեփական անձիդ կամ անմիջական հարազատներուդ, նոյնիսկ անձէդ ու հարազատներէդ ալ առաջ յօժար ըլլալ ծառայելու քու պատկանած համայնքիդ, քաղաքիդ, երկրիդ, մէկ խօսքով՝ ազգի՛դ՝ լաւապէս հասկնալով, որ անոնց անվտանգութեան ապահովումով անվտանգ կը դառնաք նաեւ դուք՝ դուն, զաւակներդ, ընտանիքդ, անոնց բարգաւաճումով կը բարգաւաճիք նաեւ դուք: Այս գիտակցութիւնն է, որ քեզ արժանապատիւ քաղաքացի կը դարձնէ: Նման գիտակից քաղաքացիներէ կազմուած հաւաքականութիւնն ալ կրնայ արժանապատիւ ազգ ստեղծել: Ընդհակառակն, սեփական շահերու հետապնդումը՝ աւելի ու աւելի փարթամ սեփականութիւններու յղփացումով եւ ինչաքաղցութեամբ, անարժան կը դարձնէ քեզ ոչ միայն հայ, այլեւ մարդ իսկ կոչուելու:

Երկրորդ հերթին կենսական է տիրութեան զգացողութիւնը: Այս մեծ յղացք է, եւ եթէ անձէդ ու ընտանիքէդ կը սկսի տիրութիւնդ,– եւ այդ արդէն կարեւոր ու հիմնական արժանիք մըն է,– ան սակայն կ՚անդրանցէ զանոնք ու կը տարածուի հաւաքական ժառանգութեանդ՝ լեզուիդ, մշակոյթիդ, պատմութեանդ ու հողիդ վրայ, առանց որոնց դուն ոչինչ ես՝ անդիմագիծ արարած մը,

ոչ շատ տարբեր կենդանական ու բուսական աշխարհի մնացեալ արարածներէն: Այլ խօսքով՝ իրաւունքներո՛ւդ տէր ըլլալու հարցն է, որ կ՚արծարծուի այստեղ: Կայ նաեւ երկրորդ երեսը այս յղացքին. տէր ըլլալ տկարին եւ անկարին, ոչ թէ օգտուիլ անոնց տկարութենէն, մանաւանդ տէր ըլլալ օժտեալին, տաղանդաւորին, ոչ թէ նախանձիլ ու խոչընդոտել անոնց յառաջացման: Ուրեմն նման տիրութիւն ցուցաբերող քաղաքացիներէ բաղկացած եւ նման տիրութիւն կատարող հաւաքականութիւնն է նոյնպէս, որ կրնայ արժանապատիւ ազգ համարուիլ: Ա՛զգ համարուիլ: Այս ալ ունի համամարդկային տարողութիւն, բայց առանց այս զգացողութեան կարելի չէ հայ ըլլալ:

Երրորդ հերթին նկատի ունիմ արդարադատութեան զգացումը:

Արդարութեան պաշտպանութիւնը եւս ունի համամարդկային առում, բայց ան ալ ամենէն առաջ կը բխի անհատէն, անհատին ստացած դաստիարակութենէն: Կարծէք բնազդային է ուրիշին հացն ու հողը յափշտակելու կիրքը, ուրիշին քրտինքով սեփական կարիքները գոհացնելու մոլութիւնը, առանց ճիգ թափելու կեանքի բարիքները վայելելու մարմաջը: Եւ այդ բնազդին դէմ է, որ տունը, դպրոցն ու համայնքը պիտի կրթեն մեզ ու պատրաստեն վաղուան քաղաքացիները՝ բոլորին հաւասարութեան դաւանող, բոլորին իրաւունքները յարգող, ժողովրդավարութեամբ ապրող ազգայինները: Կրկնեմ՝ նման կիրթ եւ ոչ թէ անկիրթ քաղաքացիներն են, որ կրնան քաղաքակիրթ երկիր դառնալ, ա՛զգ կազմել, արժանապատի՛ւ ազգ:

Եթէ կը հաւատանք, թէ իբր Հայաստան ու հայութիւն՝ մեր բոլոր բաղադրիչներով, մեր արժանի տեղը ունենալու ենք այս երկրագունդին վրայ՝ բոլորին հետ դիմագրաւելով անոր սպառնացող վտանգները եւ բոլորին հետ մարտնչելով անոր բարօրութեան համար, ապա պիտի ըմբռնենք, որ պայքարի երկար ճանապարհ ունինք մեր առջեւ՝ մեր արժէքներուն գիտակցութեամբ ու պահպանմամբ:

Այսպէս հասկնանք կարգախօսը՝ **«Պայքար մինչեւ յաղթանակ»...** ■

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՂԵՏԸ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԵՐԸ

Քրդերից հետո Թուրքիայում հայերն են եղել հավատարիմ գործոն տարրը. նրանց մականունը «Միլլեթի սադըկան» էր (հավատարիմ ազգ), իսկ օտարները անվանում էին «մոլթկե» (քրիստոնյա թուրք): Հայերը թեև համառորեն պահում էին իրենց լեզուն, կրոնը, բայց խիստ հավատարիմ էին պետությանը: Թուրքական մամուլի, թատրոնի, ճարտարվեստի, վաճառականության տերը հայերն էին: Նրանք էին ղեկավարում պետական ֆինանսները և տալիս էին պետական գործիչներ: Նրանց ձեռքում էր գտնվում մանածագործության, կերպասի, մետաքսի և արևելյան նահանգների երկրագործության զարգացման գործը: Նա էր բանակի մատակարարը, կազմակերպողը՝ չնայած այն բանին, որ հայերին զինվորությունը արգելված էր: Նա անջատական չէր, դեմ էր Թուրքիայի բոլոր թշնամիներին՝ պայմանով, որ իր գոյությանը, լեզվին, կրոնին, ազատությանը ձեռք չտրվեր: Այս հավատարմությունը չգնահատվեց. նրա լեզվի, կրոնի ազատությունը սահմանափակվեց, այն դիտվեց որպես վնասակար տարր, և պարբերաբար կազմակերպվեցին կոտորածներ՝ նրա աճը կանգնեցնելու համար: Ի վերջո հայը բնաջնջվեց և իր երկրից արտաքսվեց: Այս վերաբերմունքը բնական հետևանք պիտի ունենար. հայը պիտի դառնար անջատողական և իր փրկության խարիսխները որոներ օտար տիրապետությունների ներքո:

Այսպիսով՝ Թուրքիայի բաղկացուցիչ լազ, քուրդ, հայ ժողովուրդների համար թուրքական համակրության և նրա հետ համագործակցության բոլոր հավանականությունները վերացել են և դառը փորձից ելնելով՝ թուրքի վարքագիծը կրկին փորձել անհնարին է, քանի դեռ Թուրքիայում մտքի հեղաշրջում տեղի չի ունեցել, քանի բռնատիրական ոգին նստած է նրա մեջ: Այս հուսահատ վիճակը վերոհիշյալ ժողովուրդներին մի կողմից՝ գցել է օտար ուժերի գիրկը, իսկ մյուս կողմից՝ մղել ազգային վերազարթոնքի:

ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋՑԱՄԱՔԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ,
էջ 136-137, ԵՐԵՎԱՆ 2021 թ.:

ԴՐՕՇԱԿ